«Հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի

Տնօրեն՝ _____Ա. Սարգսյան

«27» մայիսի, 2021 թ.

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե՝ Ք. Երևան, Մ Բաղրամյան պողոտա 24/դ

Երևան 2021

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

Աշխատանքային խմբի ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն՝ Արմեն Սարգսյան

Անուն, Ազգանուն	Պաշտոն
Ալբերտ Սարգսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական ղեկավար
Նարինե Վարդանյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի պետ
Անժելա Ղալամդարյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի սոցիոլոգ
Նաիրա Հակոբյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրեն
Երջանիկ Զարգարյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, ուսումնամեթոդական բաժնի պետ
Արամ Միրզոյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ընդհանուր գծով փոխտնօրեն
Ատոմ Մխիթարյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկան
Մերի Սարգսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար
Արուսյակ Հարությունյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի արտաքին կապերի բաժնի պետ
Ազնիվ Շահազիզյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հանրային կապերի և կարիերայի բաժնի պետ
Կարեն Սարգսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Ֆինանսիստ
Ռոբերտ Ղազարյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Արևելագիտություն» ամբիոնի վարիչ
Մարգարտիա Մարկոսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսումնամեթոդական մասի գլխավոր մասնագետ, «Արևելագիտություն» ամբիոնի համակարգող
Վլադիմիր Սահակյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի վարիչ
Լաուրա Մովսիսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» ամբիոնի համակարգող
Լիլիթ Սահակյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի վարիչ
Գայանե Մելքոնյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի

	մագիստրոսական ծրագրի ղեկավար
Դավիթ Պիպոյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս
Գևորգ Գրիգորյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Հոգեբանության» ամբիոնի 2-րդ կուրսի ուսանող, ՈՒԳԸ նախագահ
Լուսինե Սողոմոնյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ՈՒԽ նախագահի պաշտոնակատար
Էմմա Մովսեսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
Անի Սարուխանյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Արևելագիտություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող
Էլեն Պողոսյան	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ 5
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 6
I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 7
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 12
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 25
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 43
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 58
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 67
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 78
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը 85
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 90
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 101
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ 113

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Համրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 14.04.2011 թվականին, սահմանված է ՀՀ ԳԱԱ կարգավիճակը. «ՀՀ ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտությունները»: ՀՀ ԳԱԱ-ի իրավական կարգավիճակը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն և հիշյալ օրենքով սահմանվում է որպես հատուկ կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն: ՀՀ ԳԱԱ-ն, որպես պետական գիտական հաստատություն, գիտահետազոտական ինստիտուտների, նրանց հավասարեցված հաստատությունների, օժանդակ ծառայությունների և նախագահության միասնությունն է: ՀՀ ԳԱԱ-ն միավորում է 34-ից ավելի գիտական ինստիտուտներ, գիտական հաստատություններ, ձեռնարկություններ և այլ կազմակերպություններ:

1997 թվականին Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող ասպիրանտուրայի բաժնի հիման վրա ստեղծվել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը (ԳԿՄԿ), որի գործունեությունը նպատակաուղղված էր ասպիրանտուրայի, հայցորդության և դոկտորանտուրայի միջոցով ՀՀ ԳԱԱ նյութատեխնիկական բազայի հիման վրա բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը: 2004թ.-ին, հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ հարուստ գիտական ներուժը (ՀՀ ԳԱԱ համակարգում է կենտրոնացած երկրի գիտական ներուժի մեծ մասը) և մասնագիտական ուսուցման միջազգային չափորոշիչները, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ընդլայնեց իր գործունեությունը՝ կազմակերպելով ուսուցում մագիստրոսական ծրագրերով: ՀՀ ԳԱԱ համակարգում մագիստրոսական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպումը նպատակ է հետապնդում արագացնելու անցումը կրթությունից դեպի գիտական գործունեության: Մագիստրոսների պատրաստումը ակադեմիական միջավայրում թույլ է տալիս նրանց հնարավորինս արագ ինտեգրվելու գիտական հասարակայնությանը և ձեռք բերելու գիտական մտածողություն: Նման մոտեցումը նպաստում է նաև կրթության և գիտության մերձեցմանը: Կենտրոնի նյութատեխնիկական բազան մշտապես համալրվում է համակարգչային և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով. նրա կրթական նպատակների իրականացմանն օժանդակում են նաև ակադեմիական շատ ինստիտուտներ իրենց ժամանակակից սարքավորումներով: ԳԿՄԿ մագիստրանտներն ու ասպիրանտները օգտվում են ՀՀ ԳԱԱ հիմնարար՝ Հայաստանի լավագույն և հարուստ գիտական գրադարանից:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԿՄԿ	Գիտակրթական միջազգային կենտրոն
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ՌԾ	Ռազմավարական ծրագիր
ԳԱՑ	Կենտրոնի առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման առանցքային ցուցիչների համակարգ
ԳԽ	Գիտական խորհուրդ
ՈԱ	Որակի ապահովում
ՈԱՄՀ	Որակի ապահովման մշտական հանձնաժողով
ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
ՈԱԱՊ	Որակի ապահովման ամբոնային պատասխանատու
ՈԻԽ	Ուսանողական խորհուրդ
ՈԻԳԸ	Ուսանողական գիտական ընկերություն
ՊԴ	Պրոֆեսորադասախոսական
ՄԿՀԾ	Մասնագիտական կրթական և հետազոտական ծրագիր
ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՄՈԳ	Միջին որակական գնահատական
ՄՈԻՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՊԻԳԲ	Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հավակնությունները ձևակերպված են Կենտրոնի 2019-2023 թթ. Ռազմավարական ծրագրում (ՌԾ), որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

- Սերտ կապեր պահպանել և շարունակաբար գործակցել ՀՀ ԳԱԱ գիտական հասարակության և ակադեմիական գիտահետազոտական ինստիտուտների հետ, ակադեմիական համակարգի ինստիտուտներում նոր ամբիոններ ստեղծել,
- էական դերակատարություն ունենալ տնտեսական զարգացման ազգային ու տարածաշրջանային նորարարական ծրագրերում,
- ապահովել առաջնակարգ կրթություն դասախոսների ու սովորողների արդյունավետ համագործակցության միջոցով,
- նպաստել մագիստրոսների և ասպիրանտների արագ ինտեգրմանը գիտական հասարակություն,
- հասարակության կարիքներին արձագանքել իր գիտակրթական, գիտահետազոտական գործունեությամբ և հանրությանը մատուցվող ծառայություններով,
- ունենալ բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ, տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- դառնալ գիտակրթական միջազգային բացառիկ կենտրոն՝ ներգրավելով ինչպես հայազգի, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների՝ մագիստրոսների և դասախոսների.
- շարունակաբար զարգացնել համագործակցային կապերը արտասահմանյան առաջատար հետազոտական համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ
- նպաստել ԳԱԱ համակարգում երիտասարդ կադրերի համալրմանը, որի ապացույցներից է այն փաստը, որ ԳԿՄԿ շրջանավարտներից շատերը անցնում են աշխատանքի հենց ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներում, տարբեր կառույցներում, օրինակ՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում աշխատում է Կենտրոնի 10 շրջանավարտ, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում՝ 3 շրջանավարտ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ 2 շրջանավարտ, Արևելագիտության ինստիտուտում՝ 3 շրջանավարտ, ՀՀ ԳԱԱ նախագահությունում 4 շրջանավարտ և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԳԿՄԿ-ն առանձնահատուկ բուհ է, ՀՀ-ում հետազոտական համալսարանի նախատիպ: ԳԿՄԿ հիմնադիր փաստաթուղթը Կանոնադրությունն է, որը նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից 2012 թվականի դեկտեմբերի 26-ին (N14/1692 որոշում) և գրանցվել ՀՀ ԱՆ պետական ռեգիստրում 2013 թվականի փետրվարի 4-ին: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ստեղծվել է ՀՀ կառավարության 2006թ.-ի հոկտեմբերի 12-ի N 1530-Ն որոշմամբ, հանդիսանում է ՀՀ ԳԱԱ համակարգի ինքնավար գիտակրթական հաստատություն և ունի ՀՀ ԳԱԱ հիմնարկի կարգավիճակ:

Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝

ա) բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստումը, նրանց որակավորման բարձրացումը,

բ) գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը,

գ) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգերի մշակումը և արմատավորումը:

Առաջադրված խնդիրներին համապատասխան Կենտրոնն իրականացնում է հետբուհական մասնագիտական կրթություն՝ ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի և դոկտորանտի կրթական ծրագրերով, ինչպես նաև բարձրագույն մասնագիտական կրթություն, այդ թվում վճարովի հիմունքներով՝ մագիստրոսի կրթական ծրագրերով, կիրառելով առկա, հեռակա, հեռավար ուսուցման ձևերը *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրությունը):*

Կենտրոնը սահմանված կարգով շնորհում է համապատասխան որակավորումներ ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան (ՈԱՇ):

Կենտրոնի կանոնադրական նպատակների և խնդիրների հիման վրա մշակվել և այժմ ընթացքում է Կենտրոնի 2019-2023թթ. ՌԾ-ն, որն ամփոփում է Կենտրոնի առաքելությունը, տեսլականը, գործունեության հիմնական ուղղությունները, հիմնարար արժեքներն ու առաջնահերթությունները:

Կենտրոնի գործող ՌԾ-ն, որ մշակվել է ԳԿՄԿ արտաքին և ներքին միջավայրի համապարփակ վերլուծության հիման վրա, ներառում է Կենտրոնի զարգացման հնգամյա ուղենիշերն ու հստակ գործողությունները: Դրանք հիմք են հանդիսանում ԳԿՄԿ ստորաբաժանումների տարեկան պլանների մշակման համար:

Հարկ է նշել նաև, որ ԳԿՄԿ-ն, ընթացիկ ՌԾ-ն մշակելիս, հաշվի է առել ՈԱԱԿ փորձագետների՝ 2014-2018թթ ՌԾ-ի վերաբերյալ արված բոլոր նկատառումներն ու առաջարկությունները: Նոր ՌԾ-ն արդիական է, առաքելությունն ու տեսլականը՝ ընդգրկուն, գործողություններն՝ ըստ ուղենիշերի առավել համապարփակ ու մանրամասն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ինչպես նշված է ԳԿՄԿ ՌԾ-ում՝ Կենտրոնի գործունեության սկզբունքներից է դասախոսների և ուսումնառողների, գիտնական-հետազոտողների, ինչպես նաև արտաքին շահակիցների ստեղծագործական համագործակցությունը: Այս սկզբունքը Կենտրոնը կարևորում է իր գործունեության բոլոր ուղղություններում:

ՌԾ 10-րդ ուղենիշի՝ **Ուսումնահետազոտական գործունեության որակ և հակակոռուպցիոն ծրագրեր**, գործողությունների մեջ կարևորվում է շահակիցների հետ բաց երկխոսությունն ու նրանց ներգրավվածության ապահովումը, ինչպես նաև կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառումն ու արդիականացումը, արդյունքների, վերլուծությունների հրապարակումը, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման (ՈԱ) կառուցակարգերի հստակեցումը և ամբողջականացումը:

Կենտրոնն իր գործունեության, կրթական ծառայությունների մատուցման բոլոր գործընթացներում կարևորում է շահակիցների բավարարվածությունը մատուցված ծառայություններից և դրանց որակի հետևողական բարձրացումը: Կենտրոնում գործում են շահակիցների կարիքների և պահանջմունքների բացահայտման և բավարարման մի շարք մեխանիզմներ: Այս առումով դեռևս երեք տարի առաջ սկսվել ու 2020թ -ին ավարտվել է Կենտրոնի առաքելության, ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման առանցքային ցուցիչների (ԳԱՑ) համակարգը փաստաթուղթը: Փաստաթուղթը Կենտրոնի գիտական խորհրդի (ԳԽ) որոշմամբ հաստատվել և գործի է դրվել 2020թ -ի մայիս ամսից:

Այն սահմանում է, թե ինչ չափանիշներով և ինչ սանդղակով պետք է «չափել» ՌԾ-ի այս կամ այն բաղադրիչի իրականացման ընթացքը, ինչպես այն քննարկել Կենտրոնի բոլոր շահակիցների հետ, ինչպես լրամշակել և այլն: Հարկ է նշել, որ փաստաթուղթը վերանայվելու է տարեկան պարբերականությամբ՝ գործընթացում ներգրավելով Կենտրոնի աշխատակիցներին, ուսանողներին ու արտաքին շահակիցներին: Շահակիցներն ունեն նաև կրթության որակի ապահովման գործընթացներում ներգրավվելու հնարավորություն՝ մասնակցելով մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) գնահատման և կատարելագործման աշխատանքներին: Արտաքին շահառուների՝ գործատուների, փորձագետների, շրջանավարտների շրջանում իրականացվել են մի շարք հետազոտություններ, որոնց մասին մանրամասն ներկայացված է **Չափորոշիչ 10 4-ում:**

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ում մշակվել և գործարկվում են ՌԾ նպատակների իրականացման առաջընթացի գնահատման մի շարք մեխանիզմներ: Մասնավորապես, գործող՝ 2019-2023թթ. ՌԾ իրականացման ընթացքը գնահատելու նպատակով մշակվել են գնահատման առանցքային ցուցիչներ: Այդ չափանիշների համաձայն կազմվում են Կենտրոնի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան հաշվետվությունները, որոնք էլ արտացոլում են

համապատասխանությունը ակնկալվող և փաստացի արդյունքների միջև ***(տե՛ս հավելված 1.1)***:

ԳԿՄԿ-ն, գործունեության հիմքում դնելով կառավարման PDCA/ՊԻԳԲ սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում, մեծ նշանակություն է տալիս իրականացվող գործընթացների գնահատմանն ու բարելավմանն ուղղված գործողությունների իրականացմանը: Այդ նպատակով պարբերաբար իրականացվում են հարցումներ և վերլուծություններ, որոնք օգնում են գնահատել Կենտրոնում ներդրված բոլոր կառավարչական գործընթացները: Համաձայն իրականացված վերլուծությունների՝ նախանշվել են ռազմավարական ցուցանիշների դրական և բացասական փոփոխությունները ***(տե՛ս հավելված 1.2):*** Հարկ է նշել, որ վերջին տարվա ընթացքում բավական մեծ թվով ռազմավարական ցուցանիշների ուղղությամբ գրանցվել է կտրուկ աճ, իսկ բացահայտված թերությունների հիման վրա մշակվել և իրականացվել են բարելավման միջոցառումներ, նշանակվել են պատասխանատուներ:

ԳԿՄԿ ՌԾ իրականացման մշտադիտարկման հիմնական մեխանիզմներից են նաև տնօրենի ամենամյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են ՀՀ ԳԱԱ նախագահությանը:

ԳԿՄԿ առաքելության և նպատակների մշտադիտարկման և առաջընթացի գնահատման մեխանիզմ է նաև կառավարման բոլոր մակարդակներում հաջողությամբ ներդրված հաշվետվողականության համակարգը, մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող տարեկան հաշվետվությունները, որոնք ներկայացվում և հաստատվում են Կենտրոնի ԳԽ-ի կողմից և տեղադրվում ԳԿՄԿ պաշտոնական կայքում ***(տե՛ս հավելված 1.1):***

2020-2021 ուստարվա սկզբին Կենտրոնում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները ևս մեկ կարևոր արձագանք հանդիսացան ՌԾ իրականացման և Բարելավման պլանի համապատասխան դրույթի իրականացման տեսանկյունից: Նախ, Կենտրոնի հերթական հնգամյա ՌԾ ընդունումից հետո հաստատվեց Կենտրոնի Հետազոտական ռազմավարությունը, որով ամրապնդվեց ուսուցման գիտականությունն ու հետազոտական բաղադրատարրերի գերակայությունը: Այս առումով ստեղծվեց հետազոտությունների գծով փոխտնօրենի նոր պաշտոն, սահմանվեցին գործառույթները, որոնք ընդգրկում են նաև **Հետազոտական ռազմավարությամբ** պայմանավորված գործողությունների համակարգումը:

Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների հարցումների վերլուծությունների արդյունքում Կենտրոնը մշակել և կիրարկում է Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականություն, որի հիմնական նպատակը ԳԿՄԿ ֆինանսական հոսքերի արդյունավետ բաշխումն է՝ գործունեության ռազմավարական նպատակների իրագործման և կրթության որակի ապահովման գծով միջոցառումների ապահովմանը համապատասխան: **Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականությունն**

իրենից ներկայացնում է ֆինանսական հարաբերությունների կազմակերպման ոլորտում միջոցառումների համալիր՝ Կենտրոնի ծախսերի կառավարումից արդյունքների կառավարմանն անցնելու գործառույթների և խնդիրների իրագործման նպատակով: Քաղաքականության սկզբունքներից է, մասնավորապես, Կենտրոնի բոլոր շահակիցների բավարարվածությունը:

Այսպիսով, Կենտրոնում ՈԱ մեխանիզմները նպաստում են Կենտրոնում տարվող աշխատանքների շարունակական բարելավմանը, որոշումների կայացման գործընթացները դարձել են առավել ներառական, բարձրացել է դրանց որակը:

Չափորոշիչ 1-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• Լրամշակված և հստակեցված առաքելություն և տեսլական, որը յուրահատուկ է և համահունչ հետազոտական համալսարան դառնալու հավակնություն ունեցող բուհին, • Բարելավված ՌԾ՝ իրականացման գործողությունների ծրագրով, • Կառավարչական գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի և գործիքակազմի առկայություն, • Ռազմավարական և ՈԱ գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ակտիվ մասնակցություն, • Ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների մշտադիտարկման և բարելավման մեխանիզմների առկայություն և գործարկում, • Կառավարման թափանցիկություն՝ շահակիցների ակտիվ մասնակցությամբ:
Թույլ կողմեր
• Ռազմավարական և ՈԱ գործընթացներով իրականացվող գնահատման ու վերլուծման արդյունքներով ստացված տվյալների ոչ լիարժեք ընդգրկվածություն կիրարկության գործընթացում:
Արտաքին հնարավորություններ
• Արտաքին շահակիցների, մասնավորապես գործատուների հետ համագործակցության անընդհատ ընդլայնում, • Արտաքին ֆինանսավորման նոր աղբյուրներ՝ մասնագիտական կատարելագործման, հետազոտական կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման նպատակով, • Բարձրագույն կրթության և գիտության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտի կատարելագործում, դրանով պայմանավորված նոր հնարավորություններ:
Վտանգներ
• Կրթության և գիտության ոլորտում օրենսդրական դաշտի, որոշում կայացնողների հաճախակի փոփոխություններ, դրանով պայմանավորված՝ ՀՀ ԳԱԱ կարգավիճակի հետ կապված խնդիրներ:
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• ՌԾ և ՈԱ գործընթացներով ստացված տվյալների օպերատիվ ներդրման համար Որակի ապահովման մշտական հանձնաժողովի (ՈԱՄՀ) գործառույթների ընդլայնում, • Ակտիվ ներգրավվածություն ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտի օրենսդրական բարեփոխումների գործընթացներում:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կառավարման և վարչարարության քաղաքականության մեջ ներկայացված են ԳԿՄԿ հավակնությունները (ամբիցիաները), որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

- Կենտրոնում բոլոր գործընթացները կազմակերպել որակի կառավարման սկզբունքով՝ ՊԻԳԲ, բարձր որակով,
- Կենտրոնի կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքը երաշխավորել կառավարման մեթոդների և մոտեցումների մշակմամբ և ներդրմամբ,
- Ղեկավար կազմի կողմից վերին օղակի մարմինների և կառույցների գործունեության վերահսկողությունն իրականացնել Կենտրոնի ղեկավար կազմի առաջնորդությամբ,
- Կենտրոնի կառավարման, գործունեության գնահատման համար գործընթացների մշտադիտարկման և աուդիտների (ներքին և արտաքին) ապահովում,
- Կենտրոնի գործունեության որակի վերաբերյալ վիճակագրության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- Կենտրոնացում շահակիցների կարիքների վրա՝ գործունեության գնահատում հիմնական շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ), ինչպես նաև արտաքին փորձագետների կողմից,
- Կրթական բարեփոխումների շրջանակներում Կենտրոնի կազմակերպական կառուցվածքի վերանայում և բարելավում, գրավչության բարձրացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կազմակերպական կառուցվածքը ***(տե՛ս հավելված 2.1)*** համապատասխանում է սեփական առաքելությանը և արտահայտում է անձնակազմի ցանկություններն ու կարիքները: Ժամանակի ընթացքում, կապված ռազմավարության կամ մարտավարության որոշակի փոփոխությունների հետ, փոփոխությունների է ենթարկվում նաև Կենտրոնի կազմակերպական կառուցվածքը: Վերջին անգամ այն փոխվեց 2020թ -ին՝ առավել ընդգրկուն ներկայացնելու Կենտրոնի առաքելությունը՝ վերաճելու լիարժեք հետազոտական համալսարանի:

Կենտրոնի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ԳԿՄԿ կանոնադրությանը համապատասխան: Կառավարման մարմինների որոշումների կայացմանը վերաբերող հարցերը և իրավասությունների շրջանակը սահմանված են **ԳԿՄԿ կանոնադրությամբ** և կառուցվածքային յուրաքանչյուր ստորաբաժանման կանոնակարգով

(տե՛ս հավելված 2.2): Կենտրոնում գործող հանձնաժողովները աշխատում են Կենտրոնի ԳԽ կողմից հաստատված համապատասխան աշխատակարգերով:

Հարկ է ընդգծել, որ 2019 թվականին Կենտրոնի ԳԽ-ն քննարկել և ընդունել է **Կենտրոնի կառավարման և վարչարարության քաղաքականությունը**, որի նպատակն է կազմակերպել և իրականացնել Կենտրոնի կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով որակի կառավարման ողջ կենսափուլը: Կենտրոնի՝ այս պահին գործող կազմակերպական կառուցվածքը պատկերված է գծագրով ***հավելված 2.1-ում:***

Կենտրոնի գործող ՌԾ-ի մշակման ընթացքում կատարված կառուցվածքային փոփոխություններին զուգահեռ ամբողջապես նորացվել են Կենտրոնի ողջ անձնակազմի պաշտոնի անձնագրերը ***(տե՛ս հավելված 2.3):*** Դրանք ևս անցել են մշակման ու քննարկումների փուլ, հաշվի են առնվել բոլոր աշխատակիցների մոտեցումներն ու կարծիքները: Փոփոխությունների այս համատեքստում վերանայվել են նաև Կենտրոնի Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) կանոնադրությունը և Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) կանոնադրությունը, որոնք լայն քննարկման փուլ են անցել ուսանողների մասնակցությամբ և այնուհետև հաստատվել Կենտրոնի ԳԽ-ի կողմից: Այս կանոնադրություններին համապատասխան արդեն տեղի են ունեցել Կենտրոնի ՈՒԽ և ՈՒԳԸ ղեկավար կազմի ընտրություններ, իսկ ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ընդգրկվել են Կենտրոնի ԳԽ-ում, տարբեր հանձնաժողովներում՝ որոշումների կայացման գործընթացներում:

Ստեղծված համապատասխան մեխանիզմների օգնությամբ Կենտրոնի ողջ անձնակազմը ակտիվորեն ներգրավված է ԳԿՄԿ առաքելության արդյունավետ իրականացման գործընթացում: Այդ մեխանիզմներն ամրագրված են հաստատված փաստաթղթերում՝ կանոնադրություն, կանոնակարգեր, աշխատակարգեր և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ԳԿՄԿ-ն, իր առաքելությանն ու ռազմավարությանը համապատասխան, կարևորում է բոլոր դասավանդողների և ուսումնառողների մասնակցությունը կարևոր որոշումների կայացման գործընթացներում: Այդպիսի որոշումների կայացման և իրագործման գործընթացը Կենտրոնն ապահովում է իր կազմակերպական արդյունավետ կառուցվածքի միջոցով: Կենտրոնի կառավարման համակարգը, **Կանոնադրությունը**, ինչպես նաև գործող կանոնակարգերը հնարավորություն են տալիս ուսումնառողներին և դասավանդողներին մասնակից լինել ինչպես իրենց առնչվող որոշումների կայացմանը, այնպես էլ տարբեր հարցերի քննարկմանն ու որակի անընդհատ բարելավմանը:

Կենտրոնի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը ՀՀ ԳԱԱ-ն է, որը ստեղծվել և գործում է ՀՀ ԳԱԱ մասին օրենքով սահմանված կարգով: Կենտրոնի ԳԽ-ն ձևավորվում է Կենտրոնի **Կանոնադրության** համաձայն՝ որպես

ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական, տնտեսական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին:

Կենտրոնի ԳԽ կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը, նրա տեղակալները, գիտական ղեկավարը, գիտական քարտուղարը, դեկանը, ՈՒԽ նախագահը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահության և Կենտրոնի տնօրենի առաջարկությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, առանձին դասախոսներ ու գիտաշխատողներ, ԳԱԱ համակարգի առաջատար մասնագետներ և այլն: ԳԽ կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը ***(տե՛ս հավելված 2.4)***:

Կենտրոնի կառավարման մարմիններում ներգրավված են ինչպես դասախոսական, այնպես էլ ուսանողական կազմի ներկայացուցիչները, որոնք էական ազդեցություն ունեն որոշումների կայացման բոլոր գործընթացներում: Կենտրոնի հանրային կապերի և կարիերայի բաժնի կողմից իրականացված հարցումները փաստում են, որ ուսանողների մեծամասնությունը համարում է, որ իր ձայնը ներկայացվում է Կենտրոնի ղեկավար օղակներում: Օրինակ՝ ուսանողների առաջարկով ներդրվել և այժմ հաջողությամբ գործարկվում է յուրաքանչյուր ուսանողի անվանական էլեկտրոնային հասցեի տրամադրման գործընթացը ***(տե՛ս հավելված 2.5)***:

Կենտրոնում ապահովվում է նաև ուսանողների և դասախոսների մասնակցությունը ՈԱ գործընթացներում: Այստեղ կարևոր դերակատարում ունեն ամբիոնների ՈԱ պատասխանատուները, ովքեր ընտրվում են ԳԿՄԿ որակի ապահովման և կառավարման համակարգի պատասխանատվությունների և տեղեկատվության իրավասությունների ընթակարգում ներկայացված սկզբունքների համաձայն: Նշված ընթացակարգում ներկայացված են նաև ՈԱ պատասխանատուների հիմնական պարտականությունները և լիազորությունները:

Ուսանողները մասնակցում են նաև աշխատակիցների և Կենտրոնի պրոֆեսորադասախոսական (ՊԴ) անձնակազմի գնահատման գործընթացին՝ ուղղակիորեն ազդելով վերջիններիս գնահատման արդյունքների վրա, այդ արդյունքները քննարկվում են մասնագիտական ամբիոններում, հետագայում հաշվի են առնվում դասաժամերի բաշխման, մագիստրոսական թեզի թեմայի ղեկավար նշանակելու գործընթացներում:

Կենտրոնում լայնորեն կիրառվում են նաև հաղորդակցության ժամանակակից մեթոդները. ուսումնառողներն ու դասախոսները հնարավորություն ունեն բարձրաձայնելու իրենց տեսակետները Կենտրոնի կայքէջում, սոցիալական ցանցերում (https://www.facebook.com/www.isec.am, https://www.facebook.com/ISECPRCareer, https://www.facebook.com/isec.nasra/): Սա առավել հեշտացնում է շահառուների ներգրավման գործընթացը, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, 2020թ -ին Կենտրոն այցելություններն էապես նվազել են:

ՀԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Կենտրոնում բոլոր գործընթացները կազմակերպվում են որակի կառավարման սկզբունքով, որ ամրագրված է ԳԿՄԿ կառավարման և վարչարարության քաղաքականության փաստաթղթում:

Պլանավորում

Կենտրոնում պլանավորման գործընթացն իրականացվում է հետևյալ մակարդակներում՝

- ռազմավարական պլանավորում (երկարատև),
- մարտավարական պլանավորում (կարճատև՝ մինչև մեկ տարի),
- օպերատիվ պլանավորում,
- պլանավորում ըստ գործողությունների (ֆինանսական, ինովացիոն և այլն):

Իրականացում

Կենտրոնի կողմից պլանավորված գործընթացները և գործողությունները ենթակա են իրականացման Կենտրոնի ՌԾ-ին և Բարելավման պլանին համապատասխան՝ ըստ սահմանված պատասխանատուների և ժամկետների (հաստատված գործողությունների պլան-ժամանակացույցին համապատասխան):

Վերահսկում

Կենտրոնի կողմից իրականացվող գործընթացների կատարման վերահսկողության համար պատասխանատու են տնօրենի հրամանով հաստատված աշխատանքային խմբերը: Վերահսկողությունը հիմնականում իրականացվում է մշտադիտարկման կամ ներքին աուդիտների միջոցով:

Վերանայում

Տվյալ փուլում իրականացվում է առկա պլանների և ծրագրերի վերանայում՝ կառավարման և վարչարարության տարբեր մակարդակներում: Վերանայման համար հիմք են հանդիսանում վերահսկողության արդյունքները և աշխատանքային խմբերի կողմից ներկայացված հաշվետվություններն ու առաջարկությունները, ինչպես նաև ԳԿՄԿ ՈԱ բաժնի կողմից պարբերաբար ներկայացվող վերլուծությունները:

Բարելավում

Կառավարման և վարչարարության գործընթացների բարելավման նպատակով վեր են հանվում տվյալ ոլորտում առկա ուժեղ ու թույլ կողմերը և մարտահրավերները: Կառավարման տարբեր մակարդակների վրա կայացվում են որոշումներ այս կամ այն կառավարման գործընթացի բարելավման ուղղությամբ, կազմվում են բարելավմանն ուղղված միջոցառումների պլաններ:

Քաղաքականության իրականացում

Կառավարման մեթոդների և մոտեցումների մշակումն ու ներդրումը պետք է երաշխավորի Կենտրոնի կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքը:

Իրավասություններ և պատասխանատվություն

Կենտրոնի կառավարման և վարչարարության քաղաքականության ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

- տնօրենը,
- փոխտնօրենները,

- գիտական ղեկավարը,
- ՈԱ մշտական հանձնաժողովի ղեկավարը,
- կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները,
- ամբիոնների վարիչները և որակի գծով ամբիոնային պատասխանատուները, որոնք առնչություն ունեն կառավարման և վարչարարության գործընթացների և դրանց որակի ապահովման հետ:

Քաղաքականության վերանայում

Քաղաքականությունը ենթակա է փոփոխման կամ վերանայման՝ ըստ սահմանված ընթացակարգերի: Այն պարտադիր վերանայվում է Կենտրոնի զարգացման ռազմավարական պլանի վերանայմանը զուգընթաց: Անհրաժեշտության պարագայում վերանայվում է Կենտրոնի կառուցվածքը՝ գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Օրինակ՝ վերջին անգամ կառուցվածքային մեծ փոփոխություն է իրականացվել 2020թ-ին՝ համաձայն ԳԿՄԿ Բարելավման պլանի՝ առանձնացվել են և տարանջատվել ուսումնական մասի և դեկանատի գործառույթները, ինչը հաճախակի խաչվում էր, և նախորդ հավատարմագրման ժամանակ դիտարկվել էր որպես թերություն: Վերամշակվել են այս բաժինների կանոնադրությունները, հստակեցվել են գործառույթները, և փաստացի տարանջատվել գործունեության հիմնական դաշտերը: Այսպիսով՝ առանձնացվել է ուսումնամեթոդական մասի փոխտնօրենի հաստիք, և կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման ողջ պատասխանատվությունը դրվել է ուսումնական մասի վրա, իսկ դեկանատին հատկացվել է բոլոր գործընթացները մշտադիտարկելու գործառույթը, համապատասխանաբար փոփոխվել են նաև կանոնակարգերը: Բացի այդ, համակարգային փոփոխություն է իրականացվել նաև հետազոտական բաղադրիչի առանձնացման և ընդգծման մասով. նախորդ հավատարմագրման ժամանակ արձանագրված առաջարկներից մեկը կյանքի է կոչվել: Առանձնացվել են գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի և Կենտրոնի գիտական ղեկավարի հաստիքները, ինչի շնորհիվ 2020 թվականից առ այսօր էական առաջընթաց է գրանցվել Կենտրոնում հետազոտական աշխատանքները կանոնակարգելու և նախատեսված պլանային աշխատանքները ժամանակին իրականացնելու առումով:

Հարկ է նշել, որ Կենտրոնի 2019-2023թթ. ՌԾ ներդրման և իրականացման հետ մեկտեղ վերափոխվել և օպտիմալացվել է ստորաբաժանումների հաշվետվության ձևաչափը՝ առավել հարմար դարձնելով պլանավորման համար: Բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները զեկուցվում և քննարկվում են Կենտրոնի ԳԽ նիստերում, հաստատվում և անպայման տեղադրվում Կենտրոնի պաշտոնական կայքէջում՝ հասանելի բոլորի համար ***(տե՛ս հավելված 1.1):***

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Գիտակրթական միջազգային կենտրոնի՝ հնգամյա ՌԾ-ի մշակման աշխատանքային խումբը մանրամասն ուսումնասիրել է սեփական գործունեության վրա ազդող հիմնական

գործոնները, որոնք իրենց արտացոլումն են գտել 2019-2023թթ ՌԾ-ում: Մենք առանձնացրել ենք հետևյալ գործոններն ու հիմնախնդիրները.

- Բարձրագույն կրթության և հետազոտական ոլորտի աճող և փոփոխվող պահանջարկը, աճող և գլոբալացող մրցակցությունը, ինչը Գիտակրթական միջազգային կենտրոնից՝ իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ, պահանջում է գնահատել, համադրել և անընդհատ մեծացնել իր մրցակցային առավելություններն ու ներուժը:

  ՀՀ ԳԱԱ համակարգի մտավոր, գիտամանկավարժական, նորարարական ներուժի, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունների կիրառմամբ երիտասարդ կադրերի գիտահետազոտական գործունեության իրականացում և գիտական հասարակության ներգրավվում:
- Տնտեսության նորարարական վերափոխումները և վերակողմնորոշումը դեպի գիտահենք, բարձր տեխնոլոգիական բնագավառները էապես փոխել են բուհերի կողմից պատրաստվող մասնագիտական և հետազոտական աշխատուժի նկատմամբ որակական պահանջները:
- Գիտության առջև ծառացած նոր խնդիրները, որոնք նոր մտածողությամբ կադրեր են պահանջում, աշխարհի գիտական զարգացման գործընթացից դուրս չմնալու, 21-րդ դարում մրցունակ գիտական կադրեր պատրաստելու միտումը, Գիտակրթական միջազգային կենտրոնից պահանջում է ներդնել և արդյունավետորեն իրականացնել ուսուցման և դասավանդման ժամանակակից ձևեր և մեթոդներ անմիջապես ԳԱԱ համակարգում, որի շնորհիվ լավագույնս կօգտագործվի ԳԱԱ մտավոր, գիտամանկավարժական ներուժը, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունները:
- Բոլոնիայի գործընթացին համապատասխան ուսանողակենտրոն մոդելների երևան գալը, հասարակական կրթական պահանջմունքների, աշխատաշուկայի կարիքների և Կենտրոնի կրթական առաջարկի միջև խորացող ճեղքվածքը, գործոններ, որոնց առկայությունը պահանջում է Կենտրոնի վերափոխում:
- Պետական ոչ բավարար ֆինանսավորումը, որը Կենտրոնից պահանջում է դառնալ ավելի նախաձեռնող և ձեռներեց՝ աճող ֆինանսական սղաճը այլ աղբյուրներից լրացնելու համար:
- Հասարակական խավերի անհավասարության մեղմացման գործում բարձրագույն կրթության դերակատարության հրամայականը:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը, իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ, ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և ուսումնահետազոտական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական ու հետազոտական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ հետազոտական բաղադրիչի շեշտադրմամբ, նպաստելով անհատի շարունակական զարգացմանը, հետազոտական կարողությունների ձեռքբերմանը՝

գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը:

ԳԿՄԿ-ն, լինելով ԳԱԱ համակարգի կառուցվածքային միավորներից մեկը, ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների հետ համագործակցում է հորիզոնական կապերով, որոնք իրականացվում են Կենտրոնի մասնագիտական ամբիոնների տեղադրումով ԳԱԱ համապատասխան գիտահետազոտական կազմակերպություններում, որտեղ դասավանդում են գործող գիտնականները:

Մագիստրոսների պատրաստումը այսպիսի միջավայրում թույլ է տալիս մագիստրանտներին հնարավորինս արագ ինտեգրվել գիտական հասարակայնությանը և ձեռք բերել գիտական մտածողություն: Կրթության և գիտության մերձեցմանն ուղղված այս քայլերը նպաստում են նաև ակադեմիական համակարգի գիտական կադրերի երիտասարդացմանը:

ԳԿՄԿ-ում կրթությունը կազմակերպվում է բացառապես բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ աստիճանների կրթական ծրագրերով: Այսօր Կենտրոնում սովորում և հետազոտական աշխատանք են իրականացնում 700-ից ավելի մագիստրանտներ և 300-ից ավելի ասպիրանտներ և հայցորդներ:

Կենտրոնում ձևավորված աշխատանքային խմբի՝ արտաքին և ներքին միջավայրի վերլուծության հիմքում դրված են եղել որակական և քանակական մեթոդներ, մասնավորապես՝ որակական վերլուծություններն իրականացվել են փաստաթղթային հիմքերի, ինչպես նաև դասախոսների, ուսանողների, շրջանավարտների և գործատուների հետ հարցազրույցների, ֆոկուս խմբերի արդյունքների հիման վրա, իսկ քանակական վերլուծությունների հիմքում ընկած են եղել ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, վարչական անձնակազմի, ինչպես նաև գործատուների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Բացի այդ՝ Կենտրոնի վրա ազդող գործոնների ուսումնասիրության և վերլուծության նպատակով ՌԱ բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են քանակական և որակական հետազոտություններ, դրանց հիմնական մասը կարգավորվում են կանոնակարգերով, բացի այդ, ըստ անհրաժեշտության, իրականացվում են նաև այլ հետազոտություններ: Իրականացվող հետազոտությունների մասին մանրամասն ներկայացված է **Չափորոշիչ 10 4-ում**:

Նշենք, որ Կենտրոնը պարբերաբար կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ, բոլոր գործընթացները իրականացվում են շարունակական բարելավման սկզբունքով:

Այս առումով, հիմք ընդունելով անընդհատ թարմացվող տեղեկատվությունը և վերլուծությունների արդյունքները, Կենտրոնում պարբերաբար վերանայվում են ընդունված ընթացակարգերը, մեխանզիմներն ու գործիքները, ըստ անհրաժեշտության ավելացվում են նաև նորերը: Կարող ենք նշել հատկապես Covid-19 համավարակի պատճառով ստեղծված արտակարգ դրության պայմաններում կրթության հեռավար փուլին անցնելուն զուգահեռ նախկին գործիքների վերանայումը և նոր կարգերի ընդունումը: **Չափորոշիչ 10 4**-ում կարելի

է գտնել կոնկրետ օրինակներ, այդ թվում՝ նաև ՈԱ բաժնի կողմից իրականացված վերլուծությունները, որոնք ներկայացված են ***հավելված 10 10-ում:***

Այսպիսով, ԳԿՄԿ-ն իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություններ իրականացնում է պարբերաբար՝ օգտվելով և՛ ներքին, և՛ արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվությունից: Այս ուսումնասիրությունների արդյունքում փոփոխությունների են ենթարկվում գործունեության կազմակերպման ու որոշումների կայացման տարբեր ընթացակարգեր, որոնք ընդունվում են Գիտխորհրդի կողմից կամ հաստատվում են Տնօրենի հրամանով: Տվյալների հավաստիության բարձր մակարդակ ապահովելու նպատակով ներքին մեխանիզմներից բացի (հարցումներ, ՈԱ բաժնի ուսումնասիրություններ), օգտագործվում են նաև արտաքին աղբյուրներ՝ ԶԼՄ-եր, գործընկերներ, փորձագիտական կարծիքներ: Այս գործոնները նպաստում են, որ ընդունված կարգերն ու կայացված որոշումները լինեն առավել կայուն, համակողմանի ու երկարաժամկետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Համաձայն **Բարելավման պլանի՝** Կենտրոնում մշակվել և իրականացվում է հատուկ քաղաքականություն, որի նպատակն է կազմակերպել և իրականացնել Կենտրոնի կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով որակի կառավարման ողջ կենսափուլը:

Վերոնշյալ քաղաքականության համար մշակվել է հատուկ ընթացակարգ, որով սահմանվում են Կենտրոնի կառավարման և վարչարարության պահանջները, նկարագրում են կառավարման և վարչարարության գործընթացները՝ պահպանելով որակի կառավարման սկզբունքները (ՊԻԳԲ): Այդ ընթացակարգի կազմակերպման և իրականացման համար պատասխանատու են Կենտրոնի կառավարման մարմինները և այն անձինք կամ աշխատանքային խմբերը, որոնք առնչություն ունեն կառավարման և վարչարարության գործընթացների հետ:

Կենտրոնի կառավարման գործընթացներն իրականացվում են ուղղահայաց և հորիզոնական սկզբունքներով՝ հաշվի առնելով կառավարման մակարդակները: Կենտրոնի կառավարումն իրականացնող հիմնական օղակներն են՝

- ՀՀ ԳԱԱ նախագահություն,
- Կենտրոնի գիտական խորհուրդ:

Կենտրոնի կառավարումն ու վարչարարությունն իրականացվում է կառավարման հետևյալ սկզբունքով. գործընթացների պլանավորում, իրականացում, գնահատում տարբեր մեթոդներով և մեխանիզմներով, գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

Կենտրոնի կառավարման ՈԱ մեխանիզմներն են՝

- Կենտրոնի ղեկավար կազմի առաջնորդություն՝ ղեկավար կազմի կողմից վերին օղակի մարմինների և կառույցների գործունեության վերահսկողության իրականացում,
- որակի պլանավորում, վերահսկում և բարելավում՝ Կենտրոնի կառավարման գործունեության գնահատման մեխանիզմներ՝ գործընթացների մշտադիտարկում և աուդիտներ (ներքին և արտաքին),
- Կենտրոնի գործունեության որակի վերաբերյալ վիճակագրության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- կառավարման գործընթացների գնահատում,
- կենտրոնացում շահակիցների կարիքների վրա՝ Կենտրոնի գործունեության գնահատում հիմնական շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ), ինչպես նաև արտաքին փորձագետների կողմից:
- Կենտրոնի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում՝ կրթական բարեփոխումների շրջանակներում Կենտրոնի կազմակերպական կառուցվածքի վերանայում և բարելավում: Կենտրոնի որակի կառավարման համակարգի ՈԱ մեխանիզմների կիրառման սպասվելիք արդյունքները՝
  - Կենտրոնի գրավչության բարձրացում,
  - կրթական ծառայությունների որակի նկատմամբ պահանջների իրականացում,
  - Կենտրոնի տարբեր տեսակի շահակից կողմերի բավարարվածության բարձրացում և այլն:

Կենտրոնի կառավարման գործընթացների ՈԱ համար պատասխանատու են՝

- Կենտրոնի կրթական գործունեության ներքին վերահսկում՝ Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինը և ՈԱՄՀ-ն,
- կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վերահսկում՝ Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների կրթության ՈԱԱՊ-ները ***(տե՛ս հավելված 2.6)***,
- ֆինանսական գործունեություն՝ ֆինանսական բաժինը, իսկ անհրաժեշտության պարագայում՝ արտաքին աուդիտորը,
- Կենտրոնի գործունեության կատարողականի ստուգման համար ստեղծվող աշխատանքային խմբերը,
- ենթակառուցվածքային և ծրագրային աուդիտ կամ հավատարմագրում՝ արտաքին փորձագետները:

Կենտրոնում արտաքին և ներքին միջավայրի վերլուծության նպատակով կիրառվում է այնպիսի գործիքակազմ, ինչպիսին է SWOT, PEST, PESTEL վերլուծության մոտեցումներ, հարցախույզեր և հարցումներ, ֆոկուս խմբեր, շահակիցների հետ քննարկումներ, վիճակագրական տվյալների վերլուծություն և այլն:

Բացի այդ, Կենտրոնի վրա ազդող գործոնների ուսումնասիրության և վերլուծության նպատակով ՈԱ բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են քանակական և որակական

հետազոտություններ: Օրինակ՝ *հավելված 2.7-ում* ներկայացված է շրջանավարտների հետ ֆոկուս խմբային քննարկման վերլուծության օրինակ:

Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար, համաձայն բարելավման պլանի, ՈԱ բաժինը մշակել է հարցաշար, որով պիլոտային հարցում է իրականացվել աշխատակիցների շրջանում, գնահատվել է կառավարման և վարչարարության արդյունավետությունը, արդյունքները տնօրենի կողմից մեծապես օգտագործվել են ԳԿՄԿ կառուցվածքային բարեփոխումների ժամանակ:

Այսպիսով՝ ԳԿՄԿ կառավարման համակարգը նախորդ հավատարմագրումից ի վեր քայլ առ քայլ բարելավվում է, կառավարման մոդելը դառնում է առավել արդյունավետ, քանի որ կառավարչական որոշումներ կայացնելիս աշխատում է բազմագործոն համակարգ, հաշվի են առնվում ներքին և արտաքին շահակիցների կարծիքները, տարիների կտրվածքով աշխատակիցների ծավալած գործունեության արդյունավետությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԳԿՄԿ-ում մշակվել են մասնագիտական կրթական ծրագրերի, ՌԾ և այլ ծրագրերի ու գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնք հաջողությամբ գործարկվում են ու նպաստում Կենտրոնի անընդհատ բարելավմանը: Մասնավորապես, այժմ գործող 2019-2023թթ. ՌԾ իրականացման ընթացքը գնահատելու նպատակով մշակվել են գնահատման առանցքային ցուցիչներ: Այդ չափանիշների համաձայն կազմվում են Կենտրոնի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան հաշվետվությունները, որոնք էլ արտացոլում են համապատասխանությունը ակնկալվող և փաստացի արդյունքների միջև ***(տե՛ս հավելված 1.1):*** Հաջողությամբ գործարկվում է նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը, որն առանցքային նշանակություն ունի որպես Կենտրոնի կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմ:

Կենտրոնն իր գործունեության հիմքում դնելով կառավարման ՊԻԳԲ սկզբունքը՝ մեծ տեղ է տալիս իրականացվող գործընթացների գնահատմանն ու բարելավմանն ուղղված գործողությունների իրականացմանը: Այդ նպատակով պարբերաբար իրականացվում են հարցումներ և վերլուծություններ, որոնք օգնում են գնահատել Կենտրոնում ներդրված բոլոր կառավարչական գործընթացները: Համաձայն իրականացված վերլուծությունների՝ նախանշվել են ռազմավարական ցուցանիշների դրական և բացասական փոփոխությունները ***(տե՛ս հավելված 1 2):*** Հարկ է նշել, որ վերջին տարվա ընթացքում բավական մեծ թվով ռազմավարական ցուցանիշների ուղղությամբ գրանցվել է էական աճ, իսկ բացահայտված թերությունների հիման վրա քննարկվել, մշակվել և իրականացվել են բարելավման միջոցառումներ, նշանակվել են պատասխանատուներ և ժամկետներ:

Կենտրոնի ծրագրերի և գործընթացների մշտադիտարկման և առաջընթացի գնահատման մեխանիզմ է նաև կառավարման բոլոր մակարդակներում հաջողությամբ ներդրված հաշվետվողականության համակարգը, մասնավորապես, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, որոնք ներկայացվում և հաստատվում են Գիտխորհրդի կողմից և տեղադրվում ԳԿՄԿ պաշտոնական կայքում ***(տե՛ս հավելված 1.1):***

Համաձայն **Բարելավման պլանի՝** Կենտրոնում մշակվել և իրականացվում է հատուկ քաղաքականություն, որի նպատակն է կազմակերպել և իրականացնել Կենտրոնի կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով որակի կառավարման ողջ կենսափուլը: Վերոնշյալ քաղաքականության համար մշակվել է հատուկ ընթացակարգ, որով սահմանվում են Կենտրոնի կառավարման և վարչարարության պահանջները, նկարագրում են կառավարման և վարչարարության գործընթացները՝ պահպանելով որակի կառավարման սկզբունքները (ՊԻԳԲ):

Հարկ է նշել նաև, որ Կենտրոնում արտաքին և ներքին միջավայրի վերլուծության նպատակով կիրառվում է այնպիսի գործիքակազմ, ինչպիսին է SWOT, PEST, PESTEL վերլուծության մոտեցումներ, հարցախույզեր և հարցումներ, ֆոկուս խմբեր, շահակիցների հետ քննարկումներ, վիճակագրական տվյալների վերլուծություն և այլն: Կենտրոնում սովորողների գնահատումը կազմակերպվում է ըստ կրթական ծրագրերի մշակված համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերի: Կենտրոնում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի մասին մանրամասն ներկայացված է Չափորոշիչ 2.ե–ում: Կարևորվում է, որ գնահատման գործիքները համապատասխանեն գնահատման խնդրին՝ նախատեսվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Համակարգի բարելավման նպատակով ՄԿԾ-ների վերանայման շրջանակներում իրականացված բենչմարքինգի ընթացքում ուսումնասիրվել է նաև գնահատման համակարգի կրթափորձը ***(տե՛ս հավելվածներ 3 4-ից 3 6):***

Կենտրոնի կրթական գործընթացում կիրառվում են գնահատման տարբեր մեթոդներ՝ յուրաքանչյուր սովորողի լայն հնարավորություն տալով անհատապես դրսևորելու իր գիտելիքները և կարողությունները: Յուրաքանչյուր դասախոսի հնարավորություն է տրվել մշակելու դասավանդվող առարկայի ելքային արդյունքների ձեռքբերման հարմար գնահատման գործիքակազմ, ինչը տեղ է գտել առարկայական նկարագրում, որտեղ ներկայացված են ոչ միայն ուսումնառության արդյունքներին համապատասխան գնահատման մեթոդները, այլև հարցման ձևերը և կատարման չափանիշները:

Կենտրոնում առկա են մագիստրոսական թեզերի գնահատման հստակ մշակված չափանիշներ, մասնավորապես՝ Կենտրոնի մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգում, որտեղ սահմանված են մագիստրոսական թեզերի պաշտպանության գնահատման չափանիշները և գնահատման միավորների չափաքանակները:

Այսպիսով, Կենտրոնում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները նպաստում են Կենտրոնում տարվող աշխատանքների և կրթության կազմակերպման ու որակի շարունակական բարելավմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Կենտրոնի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմներից կարելի է առանձնացնել հետևյալը

Կենտրոնի տեղեկատվության տարածման կարևոր մեխանիզմներից է ԳԿՄԿ պաշտոնական կայքէջը, որտեղ տեղադրված է և պարբերաբար թարմացվում է գործող բոլոր մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն և ռուսերեն: Կայքում տեղադրված են նաև ստորաբաժանումների պատասխանատուների կոնտակտային տվյալները, միջազգային գործող բոլոր ծրագրերը , նորությունները, իրադարձությունները և հայտարարությունները: «Մեր մասին» բաժնում Կենտրոնի **Կանոնադրության** և ՌԾ-ի հետ միաժամանակ տեղադրված են նաև բոլոր փաստաթղթերը՝ կանոնակարգեր, կարգեր, աշխատակարգեր, ստորաբաժանումների կանոնադրությունները: Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվությունն ակտիվորեն տարածվում է նաև սոցիալական ցանցերում (https://www.facebook.com/www.isec.am; https://www.facebook.com/ISECPRCareer ; https://www.facebook.com/isec.nasra//):

Միաժամանակ ապահովվում է հետադարձ կապի՝ շահակիցների համար հասանելի և մատչելի մեխանիզմ. յուրաքանչյուր էջի ստորին հատվածում առկա են հետադարձ կապի հնարավորությունները՝ էլփոստի հասցե, հեռախոս, սոցցանցերի հղումներ:

Կենտրոնում ներդրված է և հաջողությամբ գործարկվում է ուսումնական գործընթացի կառավարման ներքին տեղեկատվական համակարգ, որի միջոցով կենտրոնացվում է ուսանողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և յուրաքանչյուր ուսանող միաժամանակ հնարավորություն ունի արագ և հեշտ կերպով ստանալ իր ուսումնառությանն ու առաջադիմությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն:

Տեղեկատվության կառավարման մեկ այլ հարթակ է MOODLE համակարգը (կրթական բովանդակության կառավարման համակարգ), որտեղ հիմնականում տեղադրված են բոլոր առարկաների ծրագրերը, պարտադիր գրականությունը, հավելյալ նյութեր, որոշ առարկաների դեպքում ներկայացումներ և այլն:

Պաշտոնական կայքէջում, օրինակ, յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է գտնել հետաքրքրող տեղեկատվություն մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, հայցորդության համակարգի ու դոկտորանտուրայի մասին, որոնց ուղղությամբ Կենտրոնը կրթական ծառայություններ է մատուցում: Առանձին ենթաբաժին է հատկացված հեռավար կրթությանը, որն այս օրերին շատ այցելուներ ունի:

Էլ կայքի այցելուների թիվը՝ 12700 (01 09 2020-30 12 2020)։
Ֆեյսբուք սոցցանցում Կենտրոնի հետևորդների թիվը՝ 15254։

Հատկանշական է նաև այն, որ ԳԿՄԿ դիմորդները, համաձայն իրենց դիմում-հայտում լրացված տվյալների, Կենտրոնի մասին մեծամասամբ իմացել են ԳԿՄԿ կայքից կամ սոցիալական ցանցերից։ Օրինակ՝ ըստ 2020թ-ի տվյալների՝ ԳԿՄԿ կայքից մագիստրոտուրայի մասին տեղեկացել է 80 մարդ, ԳԿՄԿ Ֆեյսբուքյան պաշտոնական էջից՝ 49 հոգի։

Նշենք նաև, որ ներկայումս ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի նախաձեռնությամբ ԳԿՄԿ կայքէջում տեղադրվել է փոքրիկ հարցում, որը կարող են լրացնել բոլոր այցելուները։ Այն նպատակ ունի պարզելու, թե ուսանողները և աշխատակազմը որքանով են գոհ կայքում ներկայացված նյութերից, որոնք են կայքի հիմնական թերությունները և առավելությունները, արդյոք առկա են անհրաժեշտ նյութերը և այլն։ Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ կայք այցելուների մեծամասնությունը՝ 88%-ը, ընդհանուր առմամբ կայքը գնահատում է գերազանց կամ լավ, գրեթե նույն կերպ է գնահատավել նաև կայքի դիզայնը։ Վերլուծությունը ցույց տվեց նաև, որ կայք այցելողներին ամենաշատ դուր են գալիս կայքում առկա տեղեկությունները, դրանց թարմացման անընդհատականությունը։ Հարցվողների 87.7%-ը նշել է, որ կայքում առկա տեղեկությունները բավարար են, իսկ մյուս մասն էլ նշել է, թե ինչ տեղեկությունների պակաս կա կայքում, օրինակ՝ ուսանողական նպաստների մասին կանոնակարգ, դասացուցակներ և այլն։ Հարկ է նշել, որ Կենտրոնը կարևոր համարելով իր շահակիցների կարիքները կոնկրետ քայլեր է ձեռնարկել կայքում առկա տեղեկատվությունը վերանայելու ուղղությամն և ըստ *հավելված 2.8-ում* ներկայացված վերլուծության տվյալների թարմացրել է կայքը։ Այս գործընթացում հաշվի է առնվել նաև կայք այցելուները ներկայացված առաջարկները, որոնք վերաբերում էին, օրինակ, դասընթացների օրերին, կրթական ծրագրերի մասին առավել մանրամասն տեղեկատվության առկայությանը ***(տե՛ս հավելված 2.8)։***

Այսպիսով կարող ենք փաստել, որ Կենտրոնը հնարավորինս օգտագործում է իր շահակիցների կարծիքները, առաջարկները կայքը բարելավելու հարցում և այժմ ունի պարբերաբար թարմացվող պաշտոնական կայք՝ որպես ներքին և արտաքին շահակիցներին հտեղեկատվություն տրամադրելու ժամանակակից գործիք։

Չափորոշիչ 2-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• Հետազոտական բուհին ու ակադեմիական միջավայրին բնորոշ կառավարման ընդունելի կառուցվածք՝ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներով, • Թափանցիկ և մասնակցային կառավարման համակարգի առկայություն, • Կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը և աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող լիարժեք փաստաթղթային հենք, • Աշխատակազմի (այդ թվում ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմ) աշխատանքի ընդունման,

գնահատման, հեռացման խրախուսման, առաջխաղացման գործընթացների կանոնակարգված և գործարկված համակարգի առկայություն, • Պլանավորման բազմամակարդակ մոտեցում՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների առկայությամբ, • Հաշվետվողականության մեխանիզմների առկայություն կառավարման բոլոր մակարդակներում, • Արտաքին և ներքին շահակիցների բովանդակային մասնակցություն ինչպես կառավարման մարմիններում, այնպես էլ ՈԱ գործընթացներում, • Որակի կառավարման համակարգի մշտադիտարկում՝ կառավարչական և կրթական գործընթացների գնահատման և բարելավման միջոցով
Թույլ կողմեր
• Որպես առանձին իրավաբանական անձ գրանցված չլինելու հանգամանք, • Ուսանողական մարմինների հաշվետվողականության կանոնակարգման կարիք
• **Արտաքին հնարավորություններ**
• Օտարերկրյա առաջադեմ հետազոտական համալսարանների հետ համագործակցության շարունակականության ապահովում՝ կրթական ծրագրերի և ՈԱ մեխանիզմների շարունակական բենչմարքինգի և բարելավման նպատակով, • Արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապի ընդլայնում, • Բարձրագույն կրթություն-գիտություն-արտադրություն/տնտեսություն կապի ամրապնդում
Վտանգներ
• Կրթության և գիտության ոլորտներում օրենսդրական դաշտի փոփոխություններ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• ՌԾ գնահատման ցուցիչները կապակցել պատասխանատուների, աշխատակիցների՝ ստորաբաժանումների աշխատանքի գնահատմանը և դրա հիման վրա վերանայել խրախուսման մեխանիզմները, • Ապահովել ՈԻԽ և ՈԻԳԸ աշխատանքների պլանավորման և հաշվետվության ներկայացումը Կենտրոնի ԳԽ-ում

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի նպատակն է «երկրի հեռանկարային զարգացման տեսլականների հաշվառմամբ և որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխանեցմամբ կրթական և հետազոտական մասնագիտական ծրագրերի (ՄԿՀԾ) իրականացումը, շարունակական արդիականացումը, նոր մեթոդաբանությամբ մասնագրերի մշակումը, ամփոփիչ ատեստավորման գործընթացի և գնահատման չափանիշների կատարելագործումը, լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մշտադիտարկումը, նոր մասնագիտությունների ցանկի ճշգրտումը՝ ելնելով

պետական կառավարման մարմինների և աշխատաշուկայի առաջնահերթություններից» *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՌԾ)*:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի առաքելությունն է՝ կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված, ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստում՝ նորարարական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ: Կենտրոնը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է բարձրագույն մասնագիտական (մագիստրատուրա) և հետբուհական կրթական ծրագրեր: ՄԿԾ-ների իրականացումը, Կենտրոնի առաքելության, պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) համապատասխան, Կենտրոնի ՌԾ-ով նախատեսված գործընթաց է, որի համաձայն պետք է.

- Կենտրոնի առաքելությանը, ՈԱՇ-ին, շուկայի պահանջներին համապատասխան՝ ՄԿԾ-ներում մատնանշել ակնկալվող ուսումնառության արդյունքները՝ նկարագրելով, թե ՄԿԾ-ի ավարտին ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը, վերանայել ՄԿԾ-ների շրջանակներում դասավանդվող առարկաների ծրագրերը և դրանց կրթական ելքային արդյունքները՝ ՄԿԾ-ի վերջնարդյունքներին համապատասխան,
- դասավանդման և ուսումնառության մեթոդները համապատասխանեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին,
- ՄԿԾ-ների և դասավանդվող առարկաների ուսումնառության արդյունքներին,
- համապատասխան՝ սովորողների գնահատման համակարգի վերանայում,
- նորացնել ուսումնական պլանները՝ ուժեղացնելով դրանցում նախատեսվող ինքնուրույն և խմբային աշխատանքների, գործնական և հետազոտական բաղադրիչները,
- պարբերաբար հավաքագրել և վերլուծել ՄԿԾ-ով բավարարվածության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարծիքները:

Կենտրոնը 2019 թվականից անցում կատարեց դեպի վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակմանն ու ներդրմանը: Կենտրոնի բոլոր ամբիոնները վերանայեցին և բարելավեցին համապատասխան ՄԿԾ-ները, այդ թվում՝ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները *(տե՛ս հավելվածներ 3.1-ից 3.6)*:

Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ամեն տարի նորացվում են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը ներառում է կրթական ծրագրի մասնագիրը և համապատասխան մոդուլ/դասընթացների մանրամասն նկարագրերը *(տե՛ս հավելվածներ 3.1-ից 3 3)*:

2019-20 ուստարվանից սկսած՝ գործում են մագիստրոսի կրթական ծրագրերի նոր մասնագրերը (հաստատված 2015 թ. հոկտեմբերի 2-ի գիտ.խորհրդի N 84 նիստում): ՄԿԾ-ի մասնագրերում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ուսումնառության ակնկալվող արդյունքների չափելիությանը: ՄԿԾ-ների մասնագրերն ուղղված են ՄԿԾ-ների վերանայման գործընթացը կազմակերպելուն և համակարգելուն: Ուսումնամեթոդական մասի կողմից մշակվել և ԳԽ-ի հաստատմանն են ներկայացվել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման (արտոնման) կարգը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը:

Կենտրոնում կրթական ծրագրի վերանայումը համակարգված է և կրում է շարունակական բնույթ: Կրթական ծրագրերի մշակման ընթացքում զգալի աշխատանքներ են տարվել ՄԿԾ-ների մասնագրերում և առարկայական նկարագրերում ակնկալվող ուսումնառության արդյունքների և պետական կրթական չափորոշիչների ու ՈԱՇ-ի հետ համադրելիությունն ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում ՄԿԾ-ների մասնագրերը համապատասխանեցվել են ՈԱՇ-ի հետ: Կրթական ծրագրերի վերջնարդյունքները դասակարգված են ըստ գիտելիքների, կարողությունների և հմտությունների: Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևակերպման համար պետք է հիմք ընդունել ՀՀ ՈԱՇ-ը, ինչը կապահովի դեռևս կրթական ծրագրի մշակման փուլում կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ին ***(տե՛ս հավելված 3.7):***

Գործող կրթական ծրագրերում սահմանված ուսումնառության վերջնարդյունքների համար ուղեցույց են հանդիսանում ՀՀ ՈԱՇ-ը, կրթական գործող չափորոշիչները, գործատուների պահանջները (աշխատանքի տեղավորման հայտարարությունների և մուտքի հետ առկա համագործակցությունների հիման վրա), ինչպես նաև կրթական այլ հաստատությունների լավագույն փորձը: ՄԿԾ-ների համադրելիությունը տվյալ փաստաթղթերի հետ արտահայտված է ամբիոնների կողմից իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություններում ***(տե՛ս հավելվածներ 3.4, 3.5, 3.6):***

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն 2014թ. դեկտեմբերից իրականացնում է նաև հեռավար լրացուցիչ կրթական ծրագրեր, որի շրջանակներում հասարակական որոշակի խմբեր կարողացել են հեռավար լրացուցիչ կրթություն ստանալ ԳԿՄԿ-ում: Ավելի քան 700 մեր հայրենակիցների Հայաստանից և արտերկրից հնարավորություն է ընձեռվել մասնակցելու տարբեր հեռավար դասընթացների: Նրանցից մոտ 250-ը հաղթահարել է սահմանված շեմը և ստացել համապատասխան հավաստագրեր: Հաջորդ քայլը հեռավար մագիստրոսական կրթական ծրագրի իրականացումն էր, որը շարունակվում է մինչև այժմ: 2017թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրված 3 տարվա թույլտվության շնորհիվ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից կյանքի կոչվեց «Գործարար վարչարարություն (MBA)» մասնագիտությամբ համատեղ մագիստրոսական հեռավար կրթական ծրագիրը, որի տևողությունը 2.5 տարի է: Ձեռք բերվեց հայտնի Verificient Technologies ընկերության Proctortrack ծրագրային փաթեթը և ինտեգրվեց հեռավար հարթակին, որը հնարավորություն է տալիս հեռավար թեստավորման ժամանակ

ապահովել ուսանողի նույնականացումը, ինչպես նաև վերահսկել թեստավորման ընթացքը հնարավոր խախտումներից: Իսկ միջանկյալ և եզրափակիչ քննությունները, պրակտիկաները, ինչպես նաև թեզի պաշտպանությունը որոշվեց իրականացնել առկա ձևաչափով: «Գործարար վարչարարություն (MBA)» մասնագիտության գծով 2019թ. ունեցանք առաջին շրջանավարտները:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հեռավար ուսուցման հարթակը կենտրոնում տեղադրվել է դեռևս 2010 թվականին և թարմացվել՝ թե՛ ծրագրային առումով, թե՛ տեխնիկապես, այսինքն՝ մեծացվել են տեխնիկական հզորությունները: Հեռավար հարթակին ինտեգրվել է տեսակոնֆերանս համակարգ, որն ապահովում է առցանց դասախոսությունների իրականացումն ու ձայնագրումը:

Ի տարբերություն որոշ այլ բուհերի՝ ԳԿՄԿ հեռավար հարթակն օգտագործվում է ոչ միայն տեղեկատվության փոխանակման նպատակով, այլև դասընթացները ստեղծվում են ըստ որոշակի կառուցվածքի. դրանք ներառում են տեսադասախոսություններ, հատուկ հանձնարարություններ և թեստեր, հարցումներ, նախագծեր, մասնակցության էլեկտրոնային մատյան, գրականության և բաշխիչ նյութերից ստեղծված տարաբնույթ պաշարներ, ստեղծվում են ինտերակտիվ նյութեր, որոնք թույլ են տալիս ուսանողին աստիճանաբար յուրացնել տեսական նյութը և կատարել որոշակի գործնական աշխատանքներ, իսկ կենդանի շփման բացը լրացվում է առցանց դասախոսությունների՝ վեբինարների կազմակերպմամբ: Հեռավար հարթակը հնարավորություն է տալիս մոնիթորինգի ենթարկել հարթակում իրականացվող ուսումնական գործընթացը, վերահսկել դասախոսությունների կազմակերպման որակը, ինչպես նաև կազմակերպել տարաբնույթ առցանց հարցումներ ուսանողների շրջանում: Համավարակով պայմանավորված, երբ ողջ հանրապետության կրթական համակարգն անցավ պարտադրված առցանց ուսուցման, փաստացի ԳԿՄԿ-ն այն քիչ բուհերից էր, որի և՛ հեռավար ուսուցման հարթակը, և՛ դասախոսական կազմի մեծամասնությունը պատրաստ էին դիմագրավելու այս փորձությանը, այդ իսկ պատճառով հեռավարին անցումը հատկապես հումանիտար-հասարակագիտական մասնագիտացումների համար շատ հեշտ տրվեց: Հեռավար ուսուցման կազմակերպման ԳԿՄԿ մեխանիզմները և ՈԱ բաժնի կողմից իրականացված մոնիթորինգի վերլուծությունը ներկայացված է ***հավելված 3.8-ում***:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մշակվել է Կենտրոնի բենչմարքինգի (համեմատական վերլուծության) քաղաքականություն, որի հիման վրա ԳԿՄԿ բոլոր ամբիոնները պարբերաբար իրականացնում են ՄԿԾ-երի բենչմարքինգ հայաստանյան և արտերկրի լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: Ստորև կներկայացնենք հավատարմագրման փաթեթում ներառված 3 ՄԿԾ-ների օրինակները:

«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտացմամբ շրջակա միջավայրի մագիստրոսի աստիճան ունեցող կոմպետենտ և աշխատաշուկայի փոփոխվող պայմաններում մրցունակ մասնագետների պատրաստման համար 2016թ.-ից սկսած

ամբիոններում իրականացվող Էրազմուս+ միջազգային դրամաշնորհային ծրագրերի միջոցներով շարունակաբար կատարվում է ՄԿԾ միջազգային փորձի ուսումնասիրություն և եվրոպական կրթական ծրագրերի հետ բենչմարքինգ ***(տե՛ս հավելված 3.6),*** նոր կրթական ծրագրերի մշակում և արդիականացում՝ հիմնվելով յուրաքանչյուր տարի իրականացվող ուսանողների կողմից կրթական ծրագրի գնահատման սոցիոլոգիական հետազոտությունների, Ֆոկուս-խմբային քննարկման արդյուքների վերլուծության ***(տե՛ս հավելված 2.7)***, գործատուների շրջանում ամբիոնի կրթական ծրագրերի գնահատման, ինչպես նաև միայն այս ամբիոնի համար գործատուների շրջանում անցկացված հետազոտության տվյալների վրա ***(տե՛ս հավելված 3.9)***: ՀՀ բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների, մասնագիտական որակավորումների պահանջների և ՀՀ կառավարության կողմից սահմանված ՈԱՇ-ի համաձայն՝ ամբիոնների ուսումնական ծրագրերը հիմնված են հստակ ձևակերպված ուսումնառության վերջնարդյունքների վրա ***(տե՛ս ԳԿՄԿ առարկայական նկարագրի մշակման ռազմավարությունը, հավելվածներ 3.7, 3.10, 3.11, 3.12)***, որոնք լիարժեք արտացոլում են ուսումնառության ավարտին ուսանողների ձեռք բերած մասնագիտական բարձր որակները, հմտություններն ու կարողությունները ***(տե՛ս հավելվածներ 3.1-ից 3 3)***:

Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի լավագույն ձեռքբերումներից մեկն է յուրաքանչյուր տարի ուսանողների մեկ կիսամյակ ուսանելը Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Ֆրանսիայի Փոլ Սաբատիե (Թուլուզ 3) համալսարանում: Համեմատական վերլուծության (բենչմարքինգի) հիման վրա ամբիոնը ապահովել է կրթական ծրագրերի համադրելիությունը՝ ունենալով կրթական ծրագրերի իրականացման նախադրյալներ ***(տե՛ս հավելված 3.5)***:

Արևելագիտության ամբիոնի լավագույն ձեռքբերումներից մեկն է 2019թ.-ին ուսանողների՝ մեկ կիսամյակ ուսանելը Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Իտալիայի Բոլոնիայի համալսարանում: Համեմատական վերլուծության (բենչմարքինգի) հիման վրա ամբիոնը ապահովել է կրթական ծրագրերի համադրելիությունը՝ ունենալով կրթական ծրագրերի իրականացման նախադրյալներ ***(տե՛ս հավելված 3.4)***:

2018-2019 ուստարվա ընթացքում համեմատական վերլուծության (բենչմարքինգի) հիման վրա ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի ուսանողների համար առանձնացվեցին մի քանի առարկաններ, որոնք նպատակահարմար էին ուսանել Բոլոնիայի համալսարանի պատմության և մշակույթների ֆակուլտետում: Համեմատվել են առարկայական համապատասխան նկարագրերը: Ընտրության հարցում ամբիոնն առաջնորդվել է Ռ.Կոմպի կողմից մշակված և միջազգային պրակտիկայում արդեն իսկ փորձարկված բենչմարքինգի անցկացման ալգորիթմից.

- բենչմարքինգի առարկայի որոշում,
- բենչմարքինգի գործընկերոջ որոշում,
- տեղեկատվության հավաքագրման օպտիմալ եղանակի որոշում,

- տվյալների հավաքագրում,
- մրցունակության ապահովման տեսակետից ցուցանիշների նմանության և տարբերությունների որոշում,
- արդյունավետության հնարավոր ցուցանիշների պլանավորում,
- տեղեկատվության ապահովում բոլոր շահագրգիռ կողմերին բենչմարքինգի արդյունքների մասին, նրանց ներգրավումը բենչմարքինգի անցկացման գործընթացում: Որակի կորպորատիվ մշակույթի ձևավորում և այլն:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի ուսումնական պլանից ընտրված առարկանները համեմատվել են Բոլոնիայի համալսարանում դասավանդվող նմանատիպ առարկանների հետ: Դրանք են Ազգային հիմնախնդիրների քաղաքական և սոցիալական ասպեկտները, Մասնագիտական օտար լեզու (անգլերեն) և Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության հիմնահարցեր առարկանները: Համապատասխանաբար Բոլոնիայի համալսարանի ծրագրերերից ընտրվել են Ethical Issues and Social Change (Էթիկական հիմնախնդիրները և սոցիալական փոփոխությունը/ 8 կրեդիտ), English 1 (Անգլերեն/ 12 կրեդիտ), Intellectual History of Colonial and Post-Colonial South Asia (Գաղութային և ետգաղութային Հարավային Ասիայի մտավոր պատմություն/ 6 կրեդիտ) առարկանները:

Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի ձեռքբերումներից են հետևյալ դասընթացների համեմատական վերլուծությունների փորձառությունը.

- Տուշայի համալսարան (Իտալիա)-«Շրջակա միջավայրի երկրաքիմիա», «Ժամանակակից էկոլոգիական հիմնախնդիրներ, մարդկային կայուն զարգացման հիմունքներ», «Էկոթունաբանություն», «Սննդամթերքի անվտանգության ռիսկի գնահատում», «Էկոլոգիական վիճակագրություն», «Հողի որակի մոնիթորինգ», «Լանդշաֆտի պլանավորում», «Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում» դասընթացներ
- Դուբլինի համալսարանական քոլեջ (Իռլանդիա)–«Քաղաքային միջավայրի էկոլոգիա» դասընթաց
- Ռիդինգի համալսարան (Անգլիա)-«Քաղաքային միջավայրի էկոլոգիա» դասընթաց
- Լիսաբոնի համալսարան (Պորտուգալիա)-«Շրջակա միջավայրի մոնիթորինգ և չափիչ սարքեր», «Ռադիացիոն պաշտպանություն» դասընթացներ
- Նորթումբրիայի համալսարան (Անգլիա)-«Շրջակա միջավայրի մոնիթորինգ և չափիչ սարքեր» դասընթաց
- Թրիերի համալսարան (Գերմանիա)-«Շրջակա միջավայրի մոնիթորինգ և չափիչ սարքեր» դասընթաց
- Օսլոյի համալսարան (Նորվեգիա)-«Ռադիացիոն պաշտպանություն» դասընթաց
- Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարան (Իտալիա)-«Շրջակա միջավայրի երկրաքիմիա» դասընթաց

- Վագենինգենի համալսարան և հետազոտական կենտրոն (Նիդեռլանդներ)-«Սննդամթերքի անվտանգության ռիսկի գնահատում», «Էկոթունաբանություն» դասընթացներ
- Հալլե-Վիտենբերգի համալսարան (Գերմանիա)-«Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում», դասընթաց
- Հռոմի Սապիենզա համալսարան (Իտալիա)-«Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում», «Լանդշաֆտի պլանավորում» դասընթացներ
- Ժնևի համալսարան (Շվեյցարիա) -«ՏՏՀ և կառավարում» դասընթաց

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Կենտրոնում ուսումնառության գործընթացի զարգացումը պայմանավորված է ոչ միայն դասընթացի բովանդակության և ուսումնառության վերջնարդյունքների սահմանմամբ, այլև ծրագրերում ուսումնառության, դասավանդման և գնահատման այնպիսի մեթոդների ընտրությամբ, որոնք օժանդակում և խրախուսում են սովորողին, որպեսզի սովորողը ձեռք բերի կրթական ծրագրով նախատեսված կրթական վերջնարդյունքները ***(տե՛ս*** *ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման(արտոնման) կարգը, ԳԿՄԿ առարկայական նկարագրի մշակման ռազմավարությունը)*:

Կենտրոնում կրթական ծրագրերը մշակելիս նկատի է առնվում, որ դասավանդման/ուսումնառության մեթոդները պետք է.

ա. լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը,

բ. հաշվի առնեն սովորողների գիտելիքի և ընդունակությունների տարբեր մակարդակները,

գ. խրախուսեն սովորողների ինքնուրույնությունը, ակտիվությունը լսարանում և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ:

ՄԿԾ-ների վերջնարդյունքների և դասավանդվող առարկաների միջև կապի հստակեցման, դասավանդում-ուսումնառություն-գնահատում միասնականության ապահովման կառուցակարգերի զարգացման նպատակով Կենտրոնում ՄԿԾ-ների բարելավման ընթացքում իրականացվել է միջազգային լավագույն կրթափորձի ուսումնասիրություն ***(տե՛ս*** *հավելվածներ 3.4-ից 3.6)* և մեթոդների տեղայնացում, իսկ ամբիոններում ամենամյա գնահատումների արդյունքում վերանայվել և լրամշակվել են բոլոր առարկայական ծրագրերը: Գնահատումներն իրականացվել են ինչպես Կենտրոնի ՈԱ բաժնի կողմից, այնպես էլ որոշ ամբիոններում (օրինակ՝ Բնապահպանություն և բնօգտագործում), նաև տեղում՝ ՈԱԱՊ-ների կողմից: Գնահատումների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել ՄԿԾ-ների վերջնարդյունքների և առարկայական ծրագրերի գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ու վերջնարդյունքների միջև

կապի ապահովմանը: Բացթողումների դեպքում դասախոսներին առաջարկվել է վերանայել առարկայական ծրագրերի համապատասխան բաժինները, վերացնել անճշտությունները: Առարկայական ծրագրերում դասավանդման մեթոդների հստակեցման արդյունքում անընդհատ վերանայվում են առարկայական ծրագրերի գրականության ցանկերը, համալրվել է Moodle վիրտուալ հարթակը:

Կենտրոնի ՄԿԾ-ներում և դրանում ներառված դասընթացների առարկայական (մոդուլային) նկարագրերում ընտրված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս հասնել ՄԿԾ-ներով նախատեսված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Առարկայի (մոդուլի) բնույթով պայմանավորված՝ դասավանդման ընթացքում կարող են գերակշռել խոսքային մեթոդները՝ դասախոսությունը և քննարկումը: Հիմնականում կիրառվում է ավանդական դասախոսության ձևը, որի արդյունքում ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքի զգալի պաշար կուտակել անմիջապես լսարանում: Կենտրոնում մեծ ուշադրություն են դարձնում նաև ինտերակտիվ մեթոդների կիրառությանը: Ինտերակտիվ մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ ու հետաքրքիր դարձնել դասապրոցեսը, ավելի շատ սովորողներ ներգրավել ակտիվ քննարկումներին՝ դրանով իսկ հեշտացնելով նոր թեմայի յուրացումը: Այդ մեթոդները նպաստում են նաև սովորողների բանավոր խոսքի զարգացմանը: Դասավանդվող առարկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ մեծապես կիրառվում են նաև գործնական, զննական և վերարտադրողական մեթոդները, իսկ տեխնիկական միջոցների կիրառումը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում առավել մեծ ծավալի նոր նյութ մատուցել: Ուսումնառության մեթոդներից կիրառվում են խմբային, անհատական և զույգերով աշխատանքը, առավել արդյունավետ են գործնական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս սովորողին հնարավորինս արագ յուրացնել և ամրապնդել ձեռք բերած գիտելիքը ***(տե՛ս*** *ԳԿՄԿ առարկայական նկարագրի մշակման ռազմավարությունը*, *Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը*, *Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը*, *Կրեդիտային համակարգով հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը*) Դասավանդման մեթոդների բարելավմանն է նպաստում նաև Կենտրոնի դասախոսների կողմից արտասահմանյան երկրների առաջատար բուհերում պարբերաբար անցկացրած վերապատրաստումների արդյունքում ուսուցման նորարարական մեթոդների ներդրումն ուսումնական գործընթացում ***(տե՛ս 9-րդ չափանիշը, հավելված 3.13):*** ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը բացահայտվում է «Որակի ապահովման ձեռնարկում» զետեղված գործիքակազմի միջոցով, որի կիրառումը դասախոսներին, շրջանավարտներին, գործատուներին, սովորողներին, ամբիոններին հնարավորություն է տալիս գնահատել ՄԿԾ արդյունավետությունը ***(տե՛ս հավելված 3.14)***:

ԳԿՄԿ մագիստրատուրայում կրթական ծրագրերի բաղկացուցիչ և պարտադիր մաս են կազմում գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաները, որոնք իրականացվում են ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում և մուտի գործընկեր կազմակերպություններում: Ըստ 2017-2019 թթ. ուսումնասիրությունների արդյունքների, ուսանողների 78%-ը պրակտիկայի ընթացքում գործատուների կողմից ներգրավվել է մասնագիտական աշխատանքներում: Ուսանողների 84%-ը փաստում է, որ պրակտիկայի ընթացքը արդյունավետ կերպով վերահսկվել է ամբիոնի աշխատակիցների կողմից, իսկ գործատուի կողմից նշանակված ղեկավարը բավարար ժամանակ է տրամադրել խորհրդատվության և ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման համար (78%):

Կարևորելով բուհ–գործատու կապի հետագա ամրապնդումը, գործատուների ներգրավվածությունը կրթական գործընթացներին և դրա արդյունքում ուսանողի գործնական հմտությունների զարգացումը՝ Կենտրոնի ուսումնամեթոդական մասում որոշվեց բարեփոխել ուսումնական պրակտիկաների կազմակերպման գործընթացը: Կազմվեցին և ԳԽ հաստատմանը ներկայացվեցին գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների նոր ծրագրերը, ինչպես նաև ուսանողների կողմից պրակտիկայի հարցում-գնահատման կանոնակարգը ***(տե՛ս հավելվածներ 3.15, 3.15.1-ից 3.15.4)***:

Այսպիսով՝ կատարված աշխատանքների արդյունքում հստակեցվել է ՄԿԾ-ների վերջնարդյունքների և դասավանդվող առարկաների կապը, առարկայական ծրագրերում մանրամասն ներկայացվել են դասավանդման և ուսումնառության մեթոդները, ակտիվացել են կապը գործատուների հետ և գործնական հմտությունների ձեռք բերման հնարավորությունները: Մանրամասն տե՛ս ***հավելված 3.7-ում:***

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կենտրոնում սովորողների գնահատումը կազմակերպվում է ըստ կրթական ծրագրերի մշակված համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերի:

Կենտրոնում գործում է սովորողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

- ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել սովորողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր, բարձրացնել սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը և բարելավել դասահաճախումները,
- ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և սովորողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և

ուսումնառության շարունակական բարելավման նպատակով: Բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները: Կենտրոնում գիտելիքների ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի գիտելիքը, որ արդյունքում ստացվի առավել հավաստի գնահատական: Հայտնի է, որ որքան շատ լինեն չափումների տեսակները, այնքան եզրակացությունն ավելի հավաստի կլինի: Գիտելիքի գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները՝

ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների (նախագծեր, շնորհանդեսներ, անհատական աշխատանքներ, թեմատիկ զեկույցներ) կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (միջանկյալ քննություններ և ստուգումներ),

բ) քննաշրջանում ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում,

գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին սովորողի մասնակցության աստիճանի, ակտիվության, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

Կարևորվում է, որ գնահատման գործիքները համապատասխանեն գնահատման խնդրին՝ նախատեսվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Համակարգի բարելավման նպատակով ՄԿԾ-ների վերանայման շրջանակներում իրականացված բենչմարքինգի ընթացքում ուսումնասիրվել է նաև գնահատման համակարգի կրթափորձը ***(տե՛ս հավելվածներ 3.4-ից 3.6)***:

Կենտրոնի կրթական գործընթացում կիրառվում են գնահատման տարբեր մեթոդներ՝ յուրաքանչյուր սովորողի լայն հնարավորություն տալով անհատապես դրսևորելու իր գիտելիքները և կարողությունները: Գնահատման ընթացքում կարևորվում է հետևյալ չափանիշների կիրառումը՝

- ընտրել գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք համապատասխանում են ՈԱՇ–ով տվյալ մակարդակի համար նախատեսված բնութագրիչներին,
- կիրառել գնահատման տարբեր մեթոդներ՝ յուրաքանչյուր սովորողի լայն հնարավորություն տալով անհատապես դրսևորելու իր գիտելիքները և կարողությունները,
- գնահատումն սկսել փոքր ծավալի առաջադրանքներից, որոնք կարող են կատարվել ժամանակին և ապահովել հետադարձ կապը սովորողի հետ,
- գնահատման ժամանակ ավելի շատ շեշտադրել սովորողի առաջընթացը, քան ձախողումները, խրախուսել սովորողին,
- գնահատման ռազմավարության մեջ հնարավորություններ նախատեսել սովորողների հետ մշտական հետադարձ կապի համար, համոզվել, որ հետադարձ կապը ողջամիտ և կառուցողական է:

Յուրաքանչյուր դասախոսի հնարավորություն է տրվել մշակելու դասավանդվող առարկայի ելքային արդյունքների ձեռքբերմանը հարմար գնահատման գործիքակազմ, ինչը տեղ է գտել առարկայական նկարագրում, որտեղ ներկայացված են ոչ միայն ուսումնառության արդյունքներին համապատասխան գնահատման մեթոդները, այլև հարցման ձևերը և կատարման չափանիշները:

Կենտրոնում առկա են մագիստրոսական թեզերի գնահատման հստակ մշակված չափանիշներ, մասնավորապես՝ Կենտրոնի մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգում, որտեղ սահմանված են մագիստրոսական թեզերի պաշտպանության գնահատման չափանիշները և գնահատման միավորների չափաքանակները ***(տե՛ս*** *Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, Մագիստրոսական կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգը, հավելված 3.16)*:

Գնահատման համակարգի բարելավման և թափանցիկության ապահովման, ինչպես նաև ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով հստակեցվել է մագիստրոսական թեզի գնահատման, բողոքարկման գործընթացը՝ համաձայն **Մագիստրոսական կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգի** և Ակադեմիական ազնվության հայեցակարգի:

Կենտրոնում սովորողները յուրաքանչյուր դասընթացի ուսումնասիրման սկզբում հնարավորություն են ունենում ծանոթանալու դասընթացների առարկայական նկարագրերին, որտեղ հստակ սահմանված են դասընթացի գնահատման չափանիշները:

Գնահատման արդյունավետությունն ստուգվում է ԳԿՄԿ ԳԽ կողմից հաստատված և կայքում տեղ գտած ՈԱ բազմաթիվ կարգերի և ընթացակարգերի գործիքակազմի համաձայն: Ամենագործուն գործիքը սովորողների կողմից ուսուցման որակի գնահատման մեխանիզմն է, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողները, ընդհանուր առմամբ, արդյունավետ են համարում դասախոսների կիրառած մեթոդները *(տե՛ս Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի/մշտադիտարկման/ և պարբերական վերանայման կարգը, Ակադեմիական ազնվության հայեցակարգը, հավելված 3 17)*:

Գրագողության դեմ պայքարի և Կենտրոնում ակադեմիական ազնվության և անաչառության գերակայության արմատավորման նպատակով գործում է «**Ակադեմիական ազնվության հայեցակարգը**»: Հայեցակարգի շրջանակներում որպես ակադեմիական ազնվություն են սահմանվում ձևավորված այն հարաբերությունները, որոնք բացառում են ակադեմիական գործընթացներում ցանկացած կեղծիք, գրագողությունը, անարժանահավատությունը, խտրականությունը, ոչ միասնական չափանիշերի կիրառումը, անվստահության ձևավորումը և անթույլատրելի այլ գործողություններ: Հայեցակարգի դրույթները տարածվում են նաև Կենտրոնում հրապարակվող աշխատանքների վրա: Կանոնակարգում ներկայացված են ոլորտի օրենսդրական կարգավորումները, գրագողության դրսևորումները, հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների

պաշտպանությունը *(տե՛ս Մագիստրոսական կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգը):*

Մագիստրոսական թեզի կատարման շրջանակներում գիտահետազոտական բաղադրիչի ապահովման և գնահատման նպատակով կիրառվում է մագիստրոսական թեզերի ղեկավարների կիսամյակային հաշվետվությունների պարտադիր ներկայացումը, որը ներառում է նաև նախորդ կիսամյակներում կատարված աշխատանքները ***(տե՛ս հավելված 3.16):***

Ուսումնառության արդյունքների և գնահատման մեթոդների մասին մանրամասն տե՛ս ***հավելված 3.18-ում:***

ՀԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Ուսանողների և դասախոսների շարժունությունը մանրամասն ներկայացված է ***հավելված 3.13-ում***:

Կենտրոնում, 2017թ.-ից սկսած, մշակվել են կրթական ծրագրերի բովանդակային հուսալիության չափանիշների և բնութագրիչների տարբեր փաստաթղթեր: Հատկապես կարևորվում է կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման, կրթական ծրագրերի մշակման կարգերը, որտեղ առանձնակի ուշադրության են արժանանում կրթական ծրագրերի բնութագրիչները: Այս առումով կարևորվում է նաև որակի ապահովման հայեցակարգը, քաղաքականությունը և Կենտրոնի ՌԾ-ն:

Մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունն արտացոլող հիմնական բնութագրիչներն են.

- Փորձագետների կարծիքը *(տե՛ս Կրթական ծրագրի հաստատման (արտոնման) կարգը):*
- Շահակիցների հետ քննարկումներն ու մշտադիտարկման արդյունքները: ՄԿԾ-ի շահակիցների հետ հետադարձ կապն արդյունավետ իրագործելու նպատակով Կենտրոնում պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ, սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ կապված ՄԿԾ-ների բովանդակային հուսալիության ապահովման օրախնդիր հարցերի հետ: Շահակիցների հետ քննարկումներն իրականացվել են Կենտրոն-գործատու համագործակցության, ավարտական ատեստավորման և այլ մեխանիզմներով: Քննարկման արդյունքում մշակվել են ՄԿԾ-ների մշակման հստակ ուղենիշեր:
- Այլ հաստատությունների նմանատիպ ծրագրերի հետ համադրելիությունը:
- Սովորողների պրակտիկ մասնագիտական գործունեությունը և գործատուների կողմից ստացվող հետադարձ կապը: Այս բաղադրիչի համատեքստում դիտարկվել է սովորողների մասնագիտական պրակտիկան և այդ ընթացքում սովորողների դրսևորած կարողությունները, որոնք գործատուների կողմից դիտվել են որպես դինամիկ զարգացող ***(տե՛ս հավելվածներ 3.19, 3.20, 3.21):***

- Սովորողների գոհունակությունը ՄԿԾ-ից:

ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների ՄԿԾ-ները ապահովում են ամբիոններում իրականացվող գիտահեն կրթությունը և հուսալի են ուսումնառության ակնկալվող արդյունքների արդյունավետության տեսանկյունից: Կրթական ծրագրերի արդիականությունն ապահովվում է եվրոպական լավագույն բուհերի հետ պարբերաբար իրականացվող կրթական ծրագրերի բենչմարքինգի միջոցով ***(տե՛ս հավելվածներ 3. 4, 3.5, 3.6):***

Կենտրոնի դասախոսները գործող գիտնականներ են, որոնք տպագրվում են միջազգային գրախոսվող ամսագրերում՝ հանդիսանալով ինչպես էմպիրիկ փորձի վրա հիմնված գիտելիքների, այնպես էլ ոլորտի գիտատեսական մեթոդաբանության կրողներ: Միջազգային գիտաժողովներին, սեմինարներին և վերապատրաստումներին նրանց ակտիվ մասնակցությունը նպաստում է ժամանակի մարտահրավերներին համապատասխան դասընթացների կազմմանը, ուսումնամեթոդական նյութերի ընտրությանը և գործնական պարապմունքների կազմակերպմանը: Բացի այդ՝ Կենտրոնի ուսանողների և ՊԴ կազմի միջազգային շարժունությունն ապահովվում է Էրազմուս+ ծրագրի և միջհամալսարանական պայմանագրերի շնորհիվ, որոնք վերջին տարիներին ավելանալու միտում ունեն, և տարեցտարի ավելի շատ մասնակիցներ են հնարավորություն ունենում ուսումն արտերկրում շարունակելու կամ դասավանդելու:

Ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման, առարկաների համադրելիության, փոխանակման ծրագրերի միջոցով մեկ ընդհանուր կրթական գործընթաց ապահովելու, ինչպես նաև ուսանողների կրեդիտների փոխճանաչման համար Կենտրոնի ամբիոնները համեմատականներ են անցկացնում համագործակից բուհերի կրթական ծրագրերի, ինչպես նաև առանձին առարկաների վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների միջև ***(տե՛ս հավելվածներ 3. 4, 3.5, 3.6):*** Ուսումնասիրությունների արդյունքում գործող կրթական ծրագրերը համադրվում են համագործակից բուհերի մասնագիտության կրթական ծրագրերին:

Ուսանողի կողմից միջազգային փոխանակման ծրագրով համագործակից համալսարան ուսումնառության, իսկ դասախոսի դեպքում՝ դասավանդման մեկնելու դեպքում ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինը, ինչպես նաև ամբիոնները տրամադրում են խորհրդատվություն կրթական ծրագրերի և առարկաների ընտրության վերաբերյալ: Բացի այդ՝ կնքվում է եռակողմ պայմանագիր ուղարկող, ընդունող բուհերի և ուսանողի միջև՝ կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ, իսկ դասավանդման դեպքում՝ համապատասխան բուհերի և դասախոսի միջև: Առկա փոխանակման ծրագրերի շրջանակներում Կենտրոնի ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնառության որոշակի հատվածը (5 կամ 10 ամիս) իրականացնել գործընկեր բուհերից որևէ մեկում, իսկ դասախոսները կարող են մասնակցել տարբեր վերապատրաստումների, ինչպես նաև դասախոսություններ կարդալ համագործակից բուհերի ուսանողների և ՊԴ կազմի համար: Էրազմուս+ ծրագրի գործադրման արդյունքում գործընկեր բուհեր ուսանողների և դասավանդողների շարժը ներկայացված է ***հավելված 3 13-ում:*** Բացի այդ՝ նման ծրագրերի շնորհիվ ակտիվացել են

գիտական այցելությունները՝ մասնակցությունը գիտական կոնֆերանսներին, հետազոտական աշխատանքների իրականացումը և այլն:

Փոխանակման ծրագրերի մասնակիցները ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի սահմանած ժամանակահատվածում ապահովում են ստացած գիտելիքի և փորձառության հետադաձ կապը՝ կլոր սեղան-քննարկումների և սեմինարների միջոցով: Կլոր սեղան-քննարկումների ժամանակ ուսանողները ներկայացնում են հյուրընկալող համալսարանների կրթական միջավայրը, գործող մասնագիտությունների կրթական ծրագրերը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, համեմատականներ են անցկացնում Կենտրոնում գործող նմանատիպ գործընթացների միջև, ներկայացնում են առաջարկություններ, որոնք հիմք են հանդիսանում հետագա բարեփոխումների համար: Վերոհիշյալ բոլոր նախաձեռնությունները նպաստում են բուհում կրթական բովանդակության միջազգայնացմանը և համագործակիցների հետ համադրելիությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄԿԾ-երի վերանայման գործընթացը կազմակերպելու և համակարգելու համար Կենտրոնի ԳԽ-ն 20.01.2020թ. թիվ 140 նիստում հաստատել է «**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը**» (նոր խմբագրությամբ), որը սահմանում է Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները՝ որպես կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման մեխանիզմ: Կարգով նախատեսվում է բոլոր մասնագիտացումների գծով կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացնել երկամյա պարբերականությամբ, իսկ կրթական ծրագրերի պարբերական վերանայումը՝ հնգամյա պարբերականությամբ:

Կենտրոնում մշտապես իրականացվել է ՄԿԾ մշտադիտարկում, որն ավելի կանոնակարգված բնույթ է ստացել ԳԿՄԿ հավատարմագրումից հետո: Համաձայն ԳԿՄԿ բարելավման պլանի՝ ԳԿՄԿ ուսումնամեթոդական մասի կողմից 2018թ.-ից իրականացվում է ՄԿԾ պարբերական գնահատման և մշտադիտարկման գործընթաց, որի շրջանակներում ամբիոններում ստեղծվել են մոնիթորինգային խմբեր. մոնիթորինգի նպատակն է գնահատել կրթական ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը կրթական ծրագրի սահմանված նպատակներին ու համապատասխան պետական կրթական չափորոշչի պահանջներին: Մոնիթորինգի վերջնարդյունքը կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է: Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է ծրագրի իրականացման շրջափուլի արդյունքներով գնահատել նրա արդիականությունը, շարունակման հիմնավորվածությունը, ինչպես նաև մատուցման փաստացի որակը և որոշում ընդունել նրա հետագա շարունակական փոփոխությունների վերաբերյալ:

Կենտրոնի յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ ծրագրերի համար անցկացվում է մոնիթորինգի գործընթաց, որն սկսվում է ծրագրի նախորդ ուստարվա կատարողականի ցուցանիշների հավաքմամբ և վերլուծությամբ ***(տե՛ս*** *ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի*

ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը, ***հավելված 3.17)*:**

Կենտրոնի կրթական ծրագրի վերանայումը համակարգված շարունակական գործընթաց է, որը ենթադրում է կրթության ոլորտում առաջավոր փորձի, նոր գաղափարների որոնում, փոխառում և տեղայնացում, ինչը նպաստում է ուսումնառության գործընթացի կատարելագործմանը և Կենտրոնի առաքելության իրականացմանը:

Վերանայվել են Կենտրոնում գործող բոլոր կրթական ծրագրերը (մշակված գործիքակազմով), որպես կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմ՝ կարելի է դիտարկել Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի կողմից ներքին շահակիցների գոհունակության պարզման նպատակով իրականացվող հարցումները, որոնց մասին մանրամասն ներկայացված է **Հավելված 10 4-ում:** Կատարված հետազոտությունների հիման վրա վերափոխվել են կրթական ծրագրերը, որին հասնելու ճանապարհներից մեկը եղել է ՊԴ կազմի պարբերական վերապատրաստումները:

ՄԿԾ-ների ուսումնասիրությունները և դրանց հիման վրա կատարված բարելավումները եղել են ԳԿՄԿ տնօրենության ուշադրության կենտրոնում: Ներքին շահակիցների կարիքները վեր հանելու նպատակով սովորողների և դասավանդողների շրջանում պարբերաբար հարցումներ են անցկացվում ***(տե՛ս Հավելված 10 4):*** Գործատուների և շրջանավարտների կարծիքներն ուսումնասիրելու նպատակով սովորողների, շրջանավարտների, գործատուների, դասախոսների հետ կլոր սեղան-հանդիպումներ են կազմակերպվել: Վերը նշված ուսումնասիրությունների արդյունքները ՄԿԾ-երի փոփոխման հիմք են հանդիսացել:

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

ՄԿԾ-ի արդյունավետության գնահատման, բարելավման և մշտադիտարկման գործընթացները իրականացվել են ԳԿՄԿ ՈԱ բաժնի կողմից: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների մասին են վկայում տարիների ընթացքում հոկված, կատարելագործված ՄԿԾ-ները, որոնք մշակման օրվանից մինչ օրս անցել և անցնում են բարելավման և ճշգրտման ուղիով՝ կենտրոնում ունենալով ուսանողության, ՊԴ կազմի և այլ շահակիցների կարիքները, առաջարկները և դիտողությունները ***(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը):***

Հիմնվելով գործատուների շրջանում կրթական ծրագրի գոհունակության գնահատմանն ուղղված հետազոտության վերլուծությունների, շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատմանն ուղղված հետազոտության վերլուծության արդյունքների, միջազգային համալսարանների հետ առարկայական ծրագրերի բենչմարքինգի արդյունքների վրա ***(տե՛ս հավելված 3.6),*** ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում հիմնարար կերպով վերանայվել են գործող ուսումնական պլանները և կատարվել են սահուն և շատ կարևոր փոփոխություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցումը կազմակերպել առավել արդյունավետ, ինչպես նաև մեծացնել ուսանողի ակադեմիական ազատությունը, խթանել ինչպես ուսանողների, այնպես էլ ՊԴ կազմի շարժունությանը: 2019-

2021թթ և 2020-2022թթ. ուսպլաններում նորացվել, որոշ դեպքերում՝ նաև մշակվել են նոր առարկայական ծրագրեր՝

Նորացվել են՝

- Շրջակա միջավայրի երկրաքիմիա
- էկոլոգիական մոնիթորինգ և չափիչ սարքեր
- Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում
- Տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներ և կառավարում
- Լանդշաֆտի պլանավորում
- Քաղաքային միջավայրի էկոլոգիա
- Էկոթունաբանություն
- Էկոլոգիական ռիսկի գնահատում

Մշակվելու են հետևյալ նոր առարկայական ծրագրերը ՝

- Շրջակա միջավայրի ճառագայթային պաշտպանություն
- Շրջակա միջավայրի վիճակագրություն
- Շրջակա միջավայրի կիրառական հեռազննում
- Սննդի անվտանգություն և պաշտպանություն

Կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության բարձրացման համար ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնում համապատասխան աշխատանք է կատարվել: Ամեն տարի ամբիոնի ուսանողներից մի քանիսը ընդգրկվում են աշխատանքի ինստիտուտի լաբորատորիաներում, որը օգնում է իրենց թեզերի թեմաների ընտրությանը, կիրառական փորձի ձեռքբերմանը և օգտագործմանը հետագա աշխատանքներում: Ուսանողները մասնակցում են ինստիտուտում անցկացվող գիտական սեմինարների լսումներին, որոնք քննարկվում են նաև դասերի ընթացքում: Մասնակցում են նաև ինստիտուտում պարբերաբար անցկացվող “Computer Science and Iinformation Technologies” միջազգային գիտաժողովի նիստերին և դրա շրջանակներում անցկացվող տրեյնինգներին: Եղել են նաև գիտաժողովում զեկույց ունեցող ուսանողներ: Ամեն տարի՝ ըստ դասացուցակի, առաջին կուրսեցիների համար անցկացվել է Գիտական ղեկավարի սեմինարի ժամ, որտեղ դասախոսները ներկայացրել և ծանոթացրել են իրենց առարկայի հետ կապված խնդիրները, ինչը օգնում է կողմնորոշվել մագիստրոսական թեմա ընտրելու գործում: Մշտապես կատարվում է մագիստրոսական թեմաների վերանայում և արդիականացում: Ուշադրություն է դարձվում, որ բացառվեն թեմաների կրկնությունը: Հաճախակի ներկայացվում է ղեկավար դասախոսների հաշվետվություն: Դեռևս 2016 թվականից Էրասմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ամբիոնի ուսանողները մեկնել են Ֆրանսիայի Պոլ Սաբատիե (Տուլուզ 3) համալսարանում ուսանելու: Ուսանողները ընտրվել են հետևյալ չափանիշներով ՝

- հետազոտական թեմայի առկայություն՝ հաստատված հայ և ֆրանսիացի համաղեկավարների կողմից,
- մոտիվացիա,
- մասնագիտական գիտելիքի առկայություն,

- տեխնիկական գիտելիքի առկայություն,
- օտար լեզվի իմացություն:

Որպեսզի լեզվական խնդիրներ չառաջանան, ընթացիկ որոշ դասընթացներ անցկացվում են անգլերեն.

1. Ինֆորմացիայի տեսություն,
2. Իմացական ալգորիթմը և մոդելը մրցակցության հակադրության և երկխոսության խնդիրներում,
3. Ամպային տեխնոլոգիաներ ***(տե՛ս հավելված 3.22):***

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի ուսանողներից մեկը կամ երկուսը ամեն տարի ընդունվում են ինստիտուտի ասպիրանտուրա, որը օգնում է նրանց ընդգրկվել ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում և նպաստում նրանց տեսական գիտելիքների օգտագործմանը հետագա աշխատանքներում: Ուսանողները մասնակցում են ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացվող գիտաժողովներին, սեմինար-քննարկումներին: Շատ կարևոր է, որ նրանք մասնակցում են ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Երիտասարդ արևելագետների գիտաժողովներին, տպագրում հոդվածներ «Մերձավոր Արևելք» ժողովածուում: Ամբիոնը ուսանողներին է տրամադրում նաև տարբեր երիտասարդական ծրագրերի վերաբերյալ նյութեր: 2019թ.-ին ԱՄԷ-ի և ՀՀ-ի միջև կրթության և մշակույթի ոլորտում հարաբերությունների ամրապնդման նպատակով դեսպանությունը հանդես էր եկել մի շարք նախաձեռնություններով: Նախաձեռնությունների շրջանակում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի երկու ուսանող արժանացավ ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության կողմից ՀՀ բուհերի լավագույն արևելագետ ուսանողներին տրամադրվող մրցանակներին, որը նրանց հնարավորություն էր ընձեռել 2020 թ.-ի փետրվարին մեկնել Արաբական Միացյալ Էմիրություններ, շրջագայել տեղի գիտակրթական կենտրոններում և ծանոթանալ տեղի կրթական համակարգին:

Արևելագիտության ամբիոնը, համագործակցելով ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի հետ, պարբերաբար անց է կացնում «Միջմշակութային հաղորդակցության հիմնախնդիրները» անգլերեն լեզվով դասընթացը, որի նպատակն է օտար լեզվով հաղորդակցման խնդիրների հաղթահարումը:

ԳԿՄԿ ամբիոններում կրթության որակի ապահովման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով ներդրվել է ՈԱԱՊ ինստիտուտը: Վերջիններիս պատասխանատվության մեջ ներառված է տվյալ ամբիոնում ՈԱ գործընթացի ապահովումը: Այս նպատակով ՈԱԱՊ-ների և ամբիոնների վարիչների համար կազմակերպվել է նաև վերապատրաստում : Որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացների շրջանակներում ամբիոններում պարբերաբար կատարվել է ինքնավերլուծություն, հետևել են «պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» շրջափուլին: Մշտապես կատարվել է բենչմարքինգ, որի արդյունքում շարունակ փոփոխության են ենթարկվել առարկայական ծրագրերը:

Չափորոշիչ 3-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ՄԿԾ-ները համահունչ են բուհի առաքելությանը և համադրելի են պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ, • Դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների կիրառում, • Շրջանավարտների պահանջված լինելը աշխատաշուկայում, և կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, • Կենտրոնն ապահովված է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով, • Միջազգային փոխանակման ծրագրերի միջոցով եվրոպական կրթական փորձի ուսումնասիրում և կիրարկում, • Մագիստրոսական թեզերի թեմաների կազմում՝ համապատասխան գիտական կազմակերպությունում իրականացվող ներպետական և միջազգային գիտական թեմաների, որոնք համահունչ են աշխատաշուկայում առաջադրված ոլորտի պահանջներին, • Միջազգային ծրագրերի շրջանակներում կատարված բենչմարքինգի արդյունքների արդյունավետ կիրառում, • Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդների առկայություն, • Արտաքին շահակիցների հետ սերտ համագործակցություն, • Ուսանողների և ՊԴ կազմի ներպետական և միջազգային շարժունության ապահովում, • Գիտահետազոտական աշխատանքների և պրակտիկաների կազմակերպում ՀՀ ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպություններում, • Լաբորատոր և գիտատեխնիկական ենթակառուցվածքների ներառմամբ կրթական գործընթացի իրականացում, • Դասավանդվող առարկաների արդիականության և գիտահենության ապահովում, դասավանդման լավագույն փորձի կիրառում, • Սովորողների գիտելիքի պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, ինչպես նաև համապատասխան մոնիթորինգի իրականացում, • Հեռավար ուսուցման ինքնուրույն հարթակի, ինչպես նաև հեռավար դասընթացների առկայություն հարթակում՝ համապատասխան աուդիո, վիդեո, մուլտիմեդիա և այլ տիպի նյութերով
Թույլ կողմեր
• Ոլորտային որոշ առանձնահատկություններից ելնելով՝ հետազոտական աշխատանքների առևտրայնացման հնարավորության բացակայություն, • Ֆինանսական միջոցների սղության և ոչ բավարար օտար լեզվի տիրապետման մակարդակի պատճառով ուսումնառողների և հատկապես ՊԴ կազմի միջազգային ոչ բավարար շարժունություն, • Ուսանողների ներհոսքի ցածր ցուցանիշ, • ՄԿԾ-ների մշտադիտարկման գործընթացում արտաքին շահակիցների մասնակցության մոտիվացիայի թույլ լինելը, • Բակալավրիատի բացակայություն
Հնարավորություններ
• Միջհամալսարանական և միջակադեմիական պայմանագրերով ամբիոնի միջազգային կապերի ընդլայնում, • Միջազգային և արտաքին այլ ֆինանսավորմամբ մասնագիտական կատարելագործման հնարավորություն, • Ուսանողների մասնակցություն մասնագիտական սեմինարներին և գիտաժողովներին, • «Գիտակրթական համակարգչային ASNET-AM» ցանցի հնարավորությունների և ծառայությունների օգտագործում, • Ոլորտի արտասահմանյան լավագույն բուհերի հետ կրթական փոխանակման ծրագրերի

իրականացման հնարավորություն, • Բարձր որակավորմամբ մասնագետների դասախոսությունների կազմակերպման հնարավորություն
Վտանգներ
• Աշխատաշուկայի պահաջարկի փոփոխություն, անկայուն և չկարգավորված աշխատաշուկա և չկանխատեսվող զարգացումներ, • Ժողովրդագրական բացասական միտումներ և տնտեսական ճգնաժամ, • Օրենսդրական փոփոխություններ և բացասական կարգավորումներ, • Անկանխատեսելի բնական, տարերային աղետներ, համավարակներ, պատերազմական իրադրություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Ընդլայնել արտասահմանյան գործընկեր կազմակերպություններում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու և պրակտիկա անցնելու հնարավորությունները, • Ուսումնասիրել շուկայի պահանջները, ընդլայնել ուսանող – գործատու կապը, • Իրականացնել համագործակցություն կարիերայի կենտրոնների հետ՝ շրջանավարտներին ավելի բարձր մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքով ապահովելու նպատակով, • ՈԱ բաժնի կողմից իրականացվող ՄԿԾ-ից բավարարվածության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարծիքների վերլուծության օպերատիվ արձագանք և բարելավում, • Այլ բուհերի ուսումնառողների գիտահետազոտական պրակտիկայի կազմակերպման հնարավորություն ԳԿՄԿ լաբորատորիաներում

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի նպատակն է ուսանողների շրջանում մասնագիտական և հետազոտական միահյուսված գործունեությանը միտված համապարփակ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների շարունակական արդիականացումը, ամրապնդումը, պրակտիկաների միջոցով գործնականում կիրարկման հնարավորությունների ընդլայնումը, գիտակրթական այլ կենտրոնների ուսանողների հետ կապերի ու հետազոտական տիրույթում փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնումը, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ընդլայնումը, գիտությամբ հետաքրքրված լավագույն ուսանողների՝ ուսումնառությունը շարունակելու և խրախուսման մեխանիզմների ընդլայնումը, գիտությամբ զբաղվելու մոտիվացիայի ստեղծումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության ընթացակարգի հիմքում իրավական հետևյալ հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Կենտրոնի կանոնադրությունը,

«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության կարգը» (*տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրեդիտային համակարգով հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության կարգ):*

Կենտրոնի մագիստրատուրա կարող է ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը: 2020-2021 ուսումնական տարում մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով Կենտրոնի տնօրենի նախագահությամբ ձևավորվել է ընդունող հանձնաժողով: Քննությունների և հարցազրույցների անցկացման համար Կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվել են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ ամբիոնի վարիչը և համապատասխան դասախոսները *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրայի 2020-2021 ուստարվա ընդունելության կարգը):*

Առկա, հեռակա և հեռավար համակարգով ընդունելությունը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում կազմակերպվում է 2020 թվականին վերահաստատված և գործող ընդունելության կարգի համաձայն:

Մագիստրատուրայի **առկա, հեռակա և հեռավար անվճար համակարգ** տվյալ մասնագիտությամբ կարող են դիմել վերջին երկու տարվա ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի տվյալ մասնագիտության որակավորում ունեցող անձինք, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են առնվազն 13 (20 բալանոց համակարգ) և բարձր միավոր, իսկ ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) առնվազն 13 է: Մրցույթային քննությունն անցկացվում է ըստ նախապես հրապարակված մասնագիտական հարցաշարերի: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա: Մրցույթի արդյունքների հավասարության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում ա) ՄՈԳ-ը, բ) ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

Մագիստրատուրայի **առկա, հեռակա և հեռավար վճարովի համակարգ** կարող են դիմել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտները: Նույն մասնագիտությամբ դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց քննության, եթե նրանց դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ը առնվազն 13 է (կամ տվյալ բուհում սահմանված առավելագույն գնահատականի առնվազն 65 տոկոսը) կամ մրցութային՝ քննության կամ հարցազրույցի ձևով, եթե ՄՈԳ-ը 13-ից ցածր է, կամ դիմել է իր մասնագիտությանը հարակից մասնագիտություններից որևէ մեկով: Քննությունը կամ հարցազրույցը անց է կացվում ըստ նախապես հրապարակված մասնագիտական

հարցաշարերի: Մասնագիտության փոփոխության պարագայում ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում: Ընդունելության վերաբերյալ որոշումները կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելությունը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում իրականացվում է ՀՀ կառավարության 28.04.2011թ. թիվ 700- Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության» կարգի համաձայն: Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիները ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կարող են դիմել դիմորդի փաստաթղթերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից փորձաքննություն անցնելուց հետո և նախարարի դիմում-ուղեգրի հիման վրա տնօրենի հրամանով: 2016 թվականից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ներդրված է օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելության կարգը: Կենտրոնն ակտիվ աշխատանքներ է իրականացնում նաև միջազգային ուսանողների ներգրավման ուղղությամբ: Միջազգային ուսանողների թվի աճ ապահովելու նպատակով Կենտրոնի արտաքին կապերի բաժինը խորհրդատվական ծառայություն և աջակցություն է տրամադրում միջազգային ուսանողներին, ինչպես նաև մի շարք մասնագիտություններով որոշ առարկաներ դասավանդվում են օտար լեզվով՝ ապահովելով միջազգային ուսանողների համար հարմարավետ պայմաններ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ընդունվողների թվաքանակը որոշ մասնագիտություններով արտաքին մարտահրավերների և խնդիրների պատճառով (երկրի ժողովրդագրական խնդիրներ, մրցակցային ոչ հավասար պայմաններ, արտակարգ դրություն, ռազմական դրություն և այլ պատճառներ) վերջին տարիների ընթացքում նվազել է: Սակայն, պետք է նշել, որ, չնայած վերոնշյալ պատճառներին, աճ է գրանցվել մի քանի այլ մասնագիտություններով ընդունելության դեպքում, ինչպես, օրինակ՝ Գործարար վարչարարություն, Իրավագիտություն, Քաղաքագիտություն, Սոցիալական մանկավարժություն և այլն ***(տե՛ս հավելված 4.1)***:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ սովորողների թվի աճն ապահովելու նպատակով Կենտրոնը մշակել է գործողությունների պլան, որը բխում է Կենտրոնի 2019-2023 թթ. ՌԾ-ից և 2017թ.-ին հաստատված բարելավման պլանից: Այն նաև արտացոլված է բոլոր ամբիոնների ռազմավարական պլաններում: Ըստ այդմ՝ իրականացվում է ուսանողների կարիքների ուսումնասիրություն ուսանողների հետ հետադարձ կապի մեխանիզմների ապահովման և շրջանավարտների հետ հետադարձ կապի տարբեր մեխանիզմների կիրառման եղանակներով: Կենտրոնի ՊԴ կազմի ներկայացուցիչները և վարչական կազմը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են իրականացում նաև բակալավրի կրթական ծրագրի ուսանողների հետ: Այդ նպատակով մասնագիտական կողմնորոշման փաթեթներ են կազմվել բուհերի բակալավրի կրթական ծրագրի ուսանողության համար (բուկլետներ, ինտերակտիվ խաղեր, լուսապատկերներ):

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վարչական կազմը մշտապես աշխատանքներ է տանում ուսանողներին աջակցող ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ՝ ապահովելով ուսանողների մասնագիտական, համագործակցային, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի կոմպետենտությունների ձևավորումը ուսումնառության գործընթացում: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն ակտիվ համագործակցում է ՀՀ և արտասահմանյան գործընկեր-բուհերի, կազմակերպությունների, այլ բուհերի կարիերայի կենտրոնների և ուսանողական խորհուրդների հետ, որը ևս նպաստում է ապագա դիմորդների շրջանում քարոզչական գործունեությանը և ուսանողների ընդունելության թվի ավելացմանը:

Ուսանողների ընդունելության թվի ավելացման և սովորողներին ներգրավվելու, ինչպես նաև Կենտրոնում գործող կրթական ծրագրերի մասին շահակիցներին լիարժեք պատկերացում տալու համար ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն մասնակցում է կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառներին, կազմակերպում է կլոր սեղան-քննարկումներ, ամառային մասնագիտական դպրոցներ, հրապարակային դասախոսություններ, ուսանողական գիտաժողովներ: Կենտրոնը տպագրում է բուկլետներ, ակտիվորեն տեղեկատվություն է ապահովում համացանցային կայքում և սոցիալական կայքերում, կենտրոնի յութուբյան ալիքով և ֆեյսբուքյան էջերով տարածում Կենտրոնի գործունեությունը ներկայացնող տեսահոլովակներ, տեղեկատվական և գովազդային նյութեր: Կենտրոնի աշխատակիցները պարբերաբար ելույթներ են ունենում ՀՀ և արտասահմանյան ԶԼՄ-ներով, ակտիվորեն մասնակցում երկրի կրթական-մշակութային իրադարձություններին, հանդես գալիս առաջարկներով *(տե՛ս ԳԿՄԿ կայքէջը, ֆեյսբուքյան էջերը՝ https://www.facebook.com/www.isec.am, https://www.facebook.com/ISECPRCareer, https://www.facebook.com/isec.nasra/, յութուբյան ալիքը):*

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքէջում գործում է դիմորդների համար առանձին բաժին, որտեղ ներկայացված են մագիստրատուրայի մասնագիտությունների ցանկը, ուսուցման ձևը, ուսման վարձի չափը, ընդունելության հարցաշարերը, դիմում-հայտը ներկայացնելու, ընդունելության քննությունների կամ հարցազրույցի ժամանակացույցները: Հղվում է ընդունելության հաստատված և գործող կարգը, որտեղ մանրամասն ներկայացված է ընդունելության ընթացակարգը, դիմելու կարգը և այլն: 2020 թվականից գործում է նաև փաստաթղթերը ներկայացնելու առցանց եղանակը, որը ևս մանրամասն ներկայացված է կայքի այս բաժնում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքի «Մագիստրատուրա» բաժնում ներկայացված են նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և կրթական ծրագրերի տեղեկագրքերը: Կայքի «Ուսանողներ» բաժինը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Ուսանողական խորհուրդ», «Ուսանողական գիտական ընկերություն», «Դասացուցակ և ժամանակացույց», «ՄՈԳ-ի շեմ», «Ուսանողական էլ.փոստ», «Ուղեցույցներ», «Ուսման վարձ», «Գրադարան», «Հեռավար ուսուցում», «Կրթաթոշակներ», «Google լսարան», «Անհատական էջ», որոնց միջոցով ուսանողները և դիմորդները ինքնուրույն կարող են ստանալ իրենց հետաքրքրող ցանկացած տեղեկատվություն:

Կենտրոնում իրականացվում են նաև բաց դռների օրեր, երբ դիմորդները հնարավորություն են ունենում հանդիպելու ԳԿՄԿ աշխատակիցների, ուսանողների, ՊԴ կազմի ներկայացուցիչների հետ:

2019 թվականից Կենտրոնում ներդրվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և հետադարձ կապի քաղաքականությունը: Քանի որ Կենտրոնի ներքին շահակից են համարվում նաև ուսանողները, հետևաբար հետադարձ կապի մեխանիզմ է մշակվել նաև ուսանողների հետ: Ուսանողների հետ հետադարձ կապի կարևոր գործիք է խմբային քննարկումը, որի ընթացքում վեր են հանվում ընդունելությանն առնչվող հետևյալ հարցերի պատասխանները. «Ինչու՞ եք ընտրել այդ մասնագիտությունը, ինչու՞ այս բուհը, ի՞նչ դժվարություններ կան ընդունելության ընթացքում, հստա՞կ է ընդունելության ընթացակարգը, ինչպե՞ս է ձեզ հարմար տեղեկանալ Կենտրոնի մասին, որ ոլորտի մասին որտեղից»: Այլ բուհերից ԳԿՄԿ տեղափոխված ուսանողներին տրվող հարցերից են. «ինչու՞ տեղափոխվեցիք Կենտրոն, որտեղի՞ց եք առաջին անգամ լսել Կենտրոնի մասին, ո՞րն է առավելությունը, որը թերություն՝ ձեր առաջին բուհի հետ համեմատած, տեղափոխման ընթացակարգը հստա՞կ էր, հարմա՞ր էր ձեզ այն, ինչու՞ փոխեցիք ձեր մասնագիտությունը, ինչո՞ւ հենց այս մասնագիտությունը»: Այդ քննարկումների տվյալների վերլուծությունները տրամադրվում են համապատասխան ամբիոններին և նկատի են առնվում կրթական ծրագրերը վերանայելիս կամ հաստատելիս և այլ նպատակներով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ից ուսանողների հեռացումների առավել հաճախակի հանդիպող պատճառներն են ***(տե՛ս հավելված 4.2)***

1. ***Անբավարար առաջադիմությունը.*** որքան էլ ՄՈՒՀ-ը փոքր է և ունի քիչ թվով ուսանող, այնուամենայնիվ որակի խնդիրը առաջնահերթ է և յուրաքանչյուր տարի, ամփոփելով արդյունքները, Կենտրոնից հեռացվում են այն ուսանողները, որոնք ունեն անբավարար առաջադիմություն: Վերջին 5 տարիների ընթացքում դուրս մնացած ուսանողների տոկոսը տատանվել է 8-ից 23%-ի սահմաններում: Հեռացումների շուրջ 88%-ը անբավարար առաջադիմության պատճառով է: Կենտրոնում առաջադիմությունը բարձրացնելու, առողջ մրցակցություն ապահովելու նպատակով իրականացվում է ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում: Ուսանողական նպաստը լրիվ կամ մասնակի փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ֆինանսական միջոցների հաշվին: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10%-ին ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7%-ի չափով, իր միջոցների հաշվին, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում որոշակի կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 կամ 50% *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողական նպաստների հատկացման մասին կանոնակարգը):*

2. ***Մեփական դիմումի համաձայն.*** ՄՈՒՀ-ից դուրս գալու պատճառներն, ըստ ուսանողների դիմումների, տարաբնույթ են: Ուսանողների մի մասը ստիպված է լինում ազատվել համալսարանից ՀՀ-ից դուրս մշտական բնակության մեկնելու, ժամանակավոր

բացակայելու, աշխատանքն ուսուցման հետ չհամատեղելու, զինվորական ծառայության մեկնելու, անվճարունակության և այլ պատճառներով:

Ուսանողների վերականգնման պատճառներն են նախկինում ցածր առաջադիմությամբ հեռացում, անձնական դիմումի համաձայն ազատում, այլ ՄՈՒՀ-երից տեղափոխում, ժամկետային զինծառայությունից զորացրում:

Ուսումնառողների շարժունությունը ներկայացված է ***հավելված 4.2-ում***:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

2018 թվականից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ներդրվել է «ԳԿՄԿ ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման ընթացակարգը», որն ապահովում է ԳԿՄԿ ուսանողների՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և Կենտրոնի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքը:

Ուսանողական անանուն հարցումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ ԳԿՄԿ ԳԽ կողմից հաստատված կարգի և ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից մշակված հարցաթերթի: Ուսանողական հարցումն անցկացվում է էլեկտրոնային տարբերակով՝ խմբի ուսանողների ներկայացուցչական քանակն ապահովելու պայմանով:

Ուսանողական հարցման արդյունքները մշակվում են ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից և պահպանվում են կրթության որակի ապահովման բաժնում, որն էլ բաժինը ներկայացնում է տնօրենությանը, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ ստորաբաժանումներ (դեկանատ, ուսումնական մաս) ***(տե՛ս հավելված 4.3)***: Հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ստորաբաժանումներում, վեր են հանվում առկա խնդիրները, և մշակվում է կրթական կարիքների բարելավմանն ուղղված համապատասխան գործողությունների պլան, որն արտացոլվում է հաջորդ ուսումնական տարվա ընթացակարգերում:

2014 թվականին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մշակվել է «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը», որը պարբերաբար վերանայվել է՝ ըստ շահակիցների արձագանքների, վերջին անգամ՝ վերամշակվել է 2019 թվականին: Այն ապահովում է ԳԿՄԿ մագիստրանտների՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և ՊԴ կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքը:

Առկա ուսուցման համակարգում ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, հեռակա ուսուցման համակարգում՝ նախորդ ուստարվա տվյալների հիման վրա: Ավարտական կուրսերում 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցումն իրականացվում է քննաշրջանի ավարտից հետո՝ մինչև մագիստրոսական թեզի պաշտպանության սկիզբը:

Ուսանողական հարցումն իրականացվում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից՝ անանուն, հարցմանը խմբի ուսանողների առնվազն 51%-ի մասնակցության պայմաններում, էլեկտրոնային տարբերակով, նախապես մշակված հարցաթերթով, որում

ուսանողը 5 միավորից բաղկացած սանդղակով գնահատում է առաջադրված հարցերը կամ «այո», «ոչ» տարբերակների միջոցով հաստատում կամ հերքում տրված հարցերը:

Ուսանողական հարցման արդյունքները կրթության որակի ապահովման բաժինը ներկայացնում է համապատասխան ամբիոն, իսկ յուրաքանչյուր առանձին դասընթացի գնահատման արդյունքները տրամարդվում են նաև համապատասխան դասախոսին՝ էլ փոստով: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

Մագիստրոսների շրջանում կատարված հարցումները նպատակաուղղված են ուսանողների կողմից դասախոսի գործունեության որակի, դասընթացի, ընթացիկ քննության կազմակերպման որակի, ամփոփիչ ատեստավորման քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության որակի գնահատմանը: Մագիստրոսների կրթական կարիքների վերահանմանը մեծապես նպաստում է նաև ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնի ներքին կանոնակարգերով սահմանված ուսանողների ներգրավվածության մասնաբաժինը կառավարման մարմիններում (ԳԿՄԿ ԳԽ, ուսանողական նպաստներ հատկացնելու համար ձևավորված խորհուրդ, տարբեր միջոցառումների կազմկոմիտե և այլն), որտեղ և ներկայացվում ու քննարկվում են ուսանողների արձագանքները Կենտրոնի կողմից մատուցվող կրթական ծառայությունների, ինչպես նաև՝ Կենտրոնի գործունեության տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ԳԿՄԿ ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ *(տե՛ս ԳԿՄԿ կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, ԳԿՄԿ կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, ԳԿՄԿ կրեդիտային համակարգով հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը)*: Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով կրթական տարբեր ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:

Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար (ամիսը 2 անգամ) կազմակերպում խմբային և/կամ անհատական խորհրդատվություններ, ողջ աշխատանքային օրվա ընթացքում օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի կողմից պարբերաբար կազմակերպվում են տարբեր սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ կամ անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի կանոնակարգը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգի և մեխանիզմների մասին կանոնակարգը):* Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը զուգահեռ նախատեսվում է ընդլայնել և զարգացնել նրանց առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության ցանկը: Մասնավորապես, ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա նախատեսվում է բարձրացնել ուսանողներին առաջարկվող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության արդյունավետությունը (հարստացնել դրանց բովանդակությունը, բազմազանեցնել առաջարկվող հնարավորությունների մասին տեղեկատվության տարածման խողովակները), ինչպես նաև հնարավորության դեպքում ավելացնել նոր առաջարկություններ:

2017 թվականից ԳԿՄԿ-ում գործում է Օտար լեզուների և միջմշակության հաղորդակցության ակումբը, որը լրացուցիչ պարապմունքներ է առաջարկում ԳԿՄԿ ուսանողներին, ապահովում հաղորդակցման համար անհրաժեշտ գործիքակազմով, առաջարկում դասավանդման արդիական ձևեր, հետաքրքիր դասընթացներ և անհատական ուսուցումը խթանող միջոցներ: Ակումբի նպատակն է ուսումնական գործընթացում ցուցաբերել անհատական մոտեցում, որը թույլ կտա բացահայտել յուրաքանչյուր ուսանողի լեզվական գիտելիքի մակարդակը և օգնել համեմատաբար ցածր լեզվական մակարդակ ունեցող ուսանողներին հաղթահարել դժվարությունները և լիարժեք ընդգրկվել ուսումնական գործընթացում, հաղորդել մասնագիտական օտար լեզվի հուսալի գիտելիք ու հմտություններ, ապահովել բոլոր անհրաժեշտ նախապայմանները, որոնք կնպաստեն անգլիական կամ այլ մշակույթ փոխանցելուն, ուսանողների խոսքի մշակույթը կատարելագործելուն և միջմշակութային հարաբերություններ ապահովելուն *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբի կանոնադրությունը):*

ԳԿՄԿ-ում ներդրված է ուսանողական ժամանցային, հանրամատչելի մրցույթների և մշակութային միջոցառումների կառուցակարգ, որի կազմակերպման և իրականացման նպատակով ԳԿՄԿ-ն աջակցում և ուղղորդում է ՈՒԽ-ին և ՈՒԳԸ-ին՝ տրամադրելով ուսանողներին արտալսարանային ժամերն ապահովելու համապատասխան հնարավորություններ և միջոցներ՝ (թրեյնինգներ, վերապատրաստումներ, հանրային անձանց հետ հանդիպումներ, մշակութային և ժամանցային բնույթի միջոցառումներ կազմակերպելու նպատակով) *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգի և մեխանիզմների մասին կանոնակարգը):*

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	95%

Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում: Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	82-86% 90%	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	+	

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

ԳԿՄԿ վարչական աշխատակազմի կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով ԳԿՄԿ-ում ստեղծվել է բարենպաստ միջավայր և պայմաններ ուսանողներին աջակցելու և ուղղորդելու համար: 2018 թվականից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում մշակվել և գործում է **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգի և մեխանիզմների մասին կանոնակարգը»:**

ԳԿՄԿ վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերը բավականին թափանցիկ են և կայացած: Ուսանողների ուսումնական գործընթացներում առավել ներգրավվածությունն և ակտիվությունն ապահովելու նպատակով ԳԿՄԿ վարչական աշխատակազմը ուսանողների մասնակցությամբ կազմակերպում է նիստեր (առանց որոշակի սահմանված ժամկետների) իրենց հուզող հարցերի վերաբերյալ: Նիստերի անցկացման պարբերականությունը պայմանավորված է ուսանողների կողմից իրենց բողոքների, դժգոհությունների, ինչպես նաև այլ մտահոգող հարցերին պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Նիստի ընթացքում քննարկվում են հարցեր՝ կապված ուսումնառության գործընթացի թերությունների, բացթողումների վերաբերյալ, առաջարկվում են այդ խնդիրները լուծելու հնարավոր տարբերակներ և մոտեցումներ: Քննարկվում են նաև ընթացիկ հարցեր՝ կապված ուսումնառության գործընթացի կանոնավոր գործունեության, մասնագիտական ամբիոններում դասավանդվող դասընթացների յուրացման ու ամրապնդման վերաբերյալ, ԳԿՄԿ ռազմավարության և ԳԿՄԿ-ում ներդրված այլ ընթացակարգերի վերաբերյալ: Նիստը արձանագրվում է: Հարցերը լուծելու համար տնօրենը համապատասխան ցուցումներ է տալիս համապատասխան լիազորություններ ունեցող անձանց: Այնպիսի հրատապ հարցերով, որոնք մասնավորապես ներառում են ուսանողների դժգոհությունները, և որոնք կարող են վտանգել ԳԿՄԿ առանձին աշխատակիցների վարկանիշը և վնասել ԳԿՄԿ հեղինակությունը և բարի համբավը, ԳԿՄԿ ուսանողների պահանջով կազմակերպվում է հանդիպում ԳԿՄԿ տնօրենի և ուսանողների հետ: ԳԿՄԿ տնօրենի և ուսանողների հետ կարող են իրականացվել հանդիպումներ նաև բաց քննարկումների ձևաչափով: Մյուս բոլոր հարցերով՝ կրթական, գիտական, հետազոտական, ասպիրանտուրայի ընդունելության վերաբերյալ հարցերով ուսանողների հետ կապը կարող է

ապահովվել ինչպես կենդանի շփման, այնպես էլ էլեկտրոնային համակարգի՝ հետադարձ կապի ապահովման միջոցով:

Բազմաթիվ խնդիրներ (վարձերի զեղչեր, տեղափոխություններ, վերականգնում, այլ կրթական հարցեր) լուծվում են համապատասխան կանոնակարգերի համաձայն: Մի շարք խնդիրների լուծման համար սահմանված են ուսանողների կողմից դիմումներ ներկայացնելու հստակ ընթացակարգեր:

ԳԿՄԿ-ում վարչական աշխատակազմին դիմելու արդյունավետ և մատչելի մեխանիզմ է ներդրված, որը ներառում է.

- ԳԿՄԿ պաշտոնական կայքէջը,
- ուսանողներին անհատական էլեկտրոնային հասցեների տրամադրում,
- անմիջական կապի հաստատում ԳԿՄԿ համակարգողների և ուսանողների միջև,
- ՊԴ կազմի և ուսանողների միջև ինտերակտիվ և անմիջական կապի ապահովում,
- հաղորդակցության հնարավորություն ԳԿՄԿ վարչական կազմի, ստորաբաժանումների ղեկավարների, իրավախորհրդատուի, գիտական քարտուղարի հետ:

Ուսանողները վարչական աշխատակազմին իրենց հուզող հարցերով հաճախ դիմում են նաև միջնորդավորված՝ ՈՒԽ-ի կամ ՈՒԳԸ-ի միջոցով, իսկ վերջիններիս ներկայացուցիչները համապատասխան հարցադրումներով հանդես են գալիս Կենտրոնի կառավարման մարմինների կամ ԳԽ նիստերում:

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	95%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	82-86%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	78-90%

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

ԳԿՄԿ-ում հստակ մեխանիզմներ են ներդրված ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև արդյունավետ կապի ապահովման, ուսումնառության գործընթացին համընթաց աշխատանքային որոշակի փորձի ձևավորման և աշխատանքի կազմակերպման ապահովման համար:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների միավորումը 2019թ.-ին վերանվանվել և միացել է հանրային կապերի բաժնին՝ ստեղծելով ընդհանուր մեկ բաժին, որն էլ իր հերթին դարձել է ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում և վերանվանվել է «Հանրային կապերի և կարիերայի» բաժին *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի կանոնակարգը, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի հայեցակարգը):* Բաժինը զբաղվում է ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների և շրջանավարտների աշխատանքային մրցունակության ուսումնասիրությամբ, ներքին, արտաքին շահակիցների և ԳԿՄԿ միջև մշտական կապի ամրապնդմամբ ու համագործակցությամբ, տեղեկատվության տարածմամբ և բաժնի առջև դրված խնդիրների իրականացմամբ: Ուսանողների և շրջանավարտների կարիերային

նպաստելու նպատակով 2019 թվականին մշակվել և գործում է **«ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժնի կանոնակարգը»,** որի համաձայն բաժինը պարբերաբար կազմակերպում է տարբեր սեմինարներ, կոնֆերանսներ, մասնակցում է Կարիերայի օրերին, տրամադրում տարբեր խորհրդատվություններ, կազմակերպում հանդիպումներ գործատուների հետ: Բաժինը կազմել է ծավալուն արխիվ 2007թ.-ից և շրջանավարտների շրջանում մշտապես կատարում է ուսումնասիրություններ նրանց զբաղվածության տվյալների ուղղությամբ՝ արխիվում լրացնելով նրանց աշխատանքային վայրի տվյալները, զբաղեցրած պաշտոնը կամ հաստիքը, իսկ գործազուրկ լինելու դեպքում օգնում աշխատանքի տեղավորման գործընթացում: Բաժնի կողմից կազմակերպվում են «Կարիերայի կառուցման հմտությունները» թեմայով մեկամսյա գործնական դասընթացներ, որի ընթացքում ուսանողները սովորում են ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ գրելու, հաղորդակցվելու, գործատուին ճիշտ ներկայանալու հմտություններ, իսկ ամփոփման ընթացքում կլոր սեղանի շուրջ հանդիպում տարբեր գործատուների հետ՝ դեմ առ դեմ խոսելով և հնարավորության դեպքում համալրելով թափուր հաստիքները:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դառնում, որ ուսանողների 90 և ավելի տոկոսը գոհ և բավարարված է բաժնի կատարած աշխատանքներից:

Պարբերաբար կազմակերպվում են ոչ ֆորմալ մասնագիտական մեկշաբաթյա, մեկամսյա դասընթացներ, ինտելեկտուալ խաղեր, ձմեռային և ամառային դպրոցներ հայտնի գիտնականների կամ ոլորտի կայացած մասնագետների մասնակցությամբ, որոնց ավարտին մասնակիցներին տրվում են համապատասխան հավաստագրեր:

Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	90-100%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	45-55%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	85-95%

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տրամադրած կրթության առավելություններից ամենակարևորն այն է, որ ԳԿՄԿ-ում առկա է կրթություն-գիտություն սերտ կապը, ԳԿՄԿ մագիստրոսները անմիջականորեն մասնակից են դառնում ԳԱԱ համակարգի գիտահետազոտական աշխատանքներին: ԳԿՄԿ-ում ուսանողները ներգրավված են և մասնակցում են գիտական հետազոտությունների իրականացման աշխատանքներում, որոնց ապահովման նպատակով ԳԿՄԿ-ն կազմակերպում է ամենամյա (կիսամյակային) գիտաժողովներ և միջոցառումներ, որոնց արդյունքում ուսանողներին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ իրենց գիտական աշխատանքներով ինչպես բանավոր հարթակում, այնպես էլ տպագրվել

համապատասխան պարբերականներում և գիտական ամսագրերում *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի և մեխանիզմների մասին կանոնակարգը)*:

ԳԿՄԿ-ում իրականացվում են տարատեսակ գիտական ծրագրեր, (բազային, դրամաշնորհային, միջազգային և այլն), որոնցում ուսանողների մասնակցությանը տրված է կարևոր առաջնահերթություն: Այդ ծրագրերի վերջնարդյունքում ձևավորվում է ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանք կատարելու արդյունավետության և որակի բարձրացում, մասնագիտական գործնական հմտությունների կատարելագործում, ինչպես նաև ԳԿՄԿ-ուսանող կապի ամրապնդում և հաստատում:

ԳԿՄԿ ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում ուսանողները ներգրավված են 1-ին կուրսից սկսած: Գրում և պաշտպանում են կուրսային աշխատանքներ, որոնք մագիստրոսական թեզերի անմիջական մաս են կազմում: Աշխատանքը մագիստրոսական թեզերի շրջանակում ընդգրկում է հետազոտական, փորձարարական աշխատանք, գիտական գրականության վերլուծություն, ստացված հետազոտության արդյունքների վերլուծություն, առաջադրանքներ և հանձնարարականներ՝ թեզերի թեմաների ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կարևորագույն գործառույթներից է ուսանողական համակազմի՝ գիտահետազոտական աշխատանքներում լիովին ներգրավվածություն ապահովելը: Այն ամրագրված է Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրում՝ ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, ապահովել գիտական ծրագրերում ասպիրանտների ու ուսանողների մասնակցությունը, խրախուսել ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարումը, նրանց ներգրավվածությունը պետական բյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական ծրագրերում ***(տե՛ս հավելված 4.4)***: ԳԿՄԿ ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությանը նպաստելու համար կենտրոնում ներդրված է առաջադեմ ուսանողների խրախուսման համակարգ: Մասնավորապես՝ ՀՀ ներբուհական մրցույթներում բարձր տեղեր զբաղեցրած, միջազգային ծրագրերի մասնակցության տարբեր ոլորտներում որպես լավագույն ուսանողներ ճանաչված պարգևատրելու և խրախուսելու, դրամական պարգևատրումներ և օտարերկրյա այլ բուհերում ուսանողների փոխանակման ծրագրերի մասնակցելու հնարավորության ընձեռում *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի և մեխանիզմների մասին կանոնակարգը)*:

Լինելով ՀՀ ԳԱԱ կառույցի՝ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողներ՝ ԳԿՄԿ մագիստրանտներն ու ասպիրանտները այս տեսանկյունից գտնվում են գերշահեկան վիճակում, որովհետև Կենտրոնի մասնագիտական ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտներում և գիտական հաստատություններում: Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողները, ըստ մասնագիտական առանձնահատկությունների և ամբիոնների տեղաբաշխվածության, իրենց ուսումնառության ողջ ընթացքը անց են կացնում տվյալ գիտական և մասնագիտական ուղղվածության հաստատության գիտամշակութային մթնոլորտում, շփվում, հաղորդակցվում, մասնակցում կամ անմիջական կատարողը դառնում

գիտահետազոտական աշխատանքների, կիրառում առկա նյութատեխնիկական, լաբարատոր հնարավորությունները, իրազեկվում մասնագիտական բնագավառի նորարարություններին, պարբերաբար հետազոտական աշխատանքներում ներգրավվում և գիտական հետազոտությունների տեսքով տպագրվում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտերկրի հեղինակավոր գիտական պարբերականներում: Քանի որ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնները տեղակայված են ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններում, ուստի հետազոտական աշխատանքները տարվում են համապատասխան ինստիտուտներում, ուսանողները ներգրավված են տվյալ գիտական հաստատության գիտահետազոտական ծրագրերում և անմիջականորեն մասնակցում են գիտահետազոտական աշխատանքի ողջ գործընթացին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործում է ուսանողներին միավորող ԳԿՄԿ ՈՒԳԸ-ն, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը *(տե՛ս ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԳԸ կանոնադրությունը)*: ՈՒԳԸ-ն իր նպատակներն ու խնդիրներն իրականացնում է՝ համագործակցելով ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնների, ՈՒԽ-ի, հանրային կապերի և կարիերայի բաժնի և այլ ստորաբաժանումների հետ: ՈՒԳԸ-ն սատարում է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունները, ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտակրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպումը, նպաստում է գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկմանը, միջնորդում է տնօրենությանը շնորհաշատ ուսանողներին, հայցորդներին և ասպիրանտներին աջակցելու համար գիտական աշխատանքներ իրականացնելու, գիտական աշխատանքներ հրատարակելու նպատակով:

ԳԿՄԿ ՈՒԳԸ-ն համագործակցում է ՀՀ-ում և նրա տարածքից դուրս գործող այլ բուհերի ՈՒԳԸ-ների, գիտական կենտրոնների հետ, իրականացնում համատեղ միջոցառումներ:

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի					
Ուսումնառողներ	**2016**	**2017**	**2018**	**2019**	**2020**
Բակալավր	-	-	-	-	-
Մագիստրոս	18	15	27	12	15
Հետազոտող	449	383	311	267	270

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործում է ԳԿՄԿ ուսանողական խորհուրդը, որը ապաքաղաքական, ինքնակառավարվող ընտրովի մարմին է, ներկայացնում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը: ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, «Կրթության մասին» ՀՀ օրենքին, իրավական այլ ակտերին, ԳԿՄԿ կանոնադրությանը և իր կանոնադրությանը համապատասխան: ՈՒԽ-ն

ակտիվ քաղաքականություն է վարում ուսանողությանն առնչվող հարցերի լուծման ու օժանդակման գործընթացում: Ուսանողների բարձրաձայնած բոլոր հարցերն իրենց պատասխանն են գտնում կա՛մ ցուցման, կա՛մ ուղղորդման տեսքով: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԽ-ն ակտիվորեն մասնակցում է ինչպես բուհի ներքին շահակիցներին առնչվող հիմնախնդիրների բարձրաձայնմանը, միջոցառումների կազմակերպմանը, այնպես էլ հարաբերություններ է հաստատում և զարգացնում արտաքին շահակիցների հետ: ՈՒԽ նախագահը ուսանողների իրավունքների պաշտպանն է և աջակցում է տարբեր խնդիրների լուծման գործընթացում: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողները ներգրավված են նաև կառավարման տարբեր մարմիններում, այդ թվում վարչական խորհուրդ և ԳԽ-ների կողմից իրականացվող տարբեր քննարկումներին, որոնց միջոցով կարող են բարձրացնել խնդիրներ, հետամուտ լինել դրանց լուծմանը: Առկա են նաև շահակիցների հետադարձ կապի ապահովման, բողոքների, առաջարկների ներկայացման էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար, սոցիալական էջերում նամակագրության հնարավորություն՝ ցանկացած առաջարկ, դիմում, խնդիր քննարկելու համար: Շատ կարևոր է նշել նաև, որ ուսանողները ցանկացած աշխատանքային օրվա աշխատանքային ժամերին կարող են մոտենալ նախընտրելի ստորաբաժանումների ներկայացուցիչներին, ինչպես նաև տնօրենությանը՝ իրենց խնդիրներին լուծում տալու նպատակով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողներին իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն է ցուցաբերում նաև ԳԿՄԿ իրավախորհրդատուն: Կենտրոնում ներդրված են իրավախորհրդատու-ուսանող փոխգործակցության հստակ մեխանիզմներ: ԳԿՄԿ իրավախորհրդատուի կողմից ուսանողների հետ տարվող աշխատանքներում իրականացվում են տարբեր բնույթի խորհրդատվություններ և իրավական փաստաթղթերի հետ կապված հարցերի պարզաբանումներ (պայմանագրերի, համաձայնագրերի, ԳԿՄԿ կարգերի, ուսանողներին առնչվող տարաբնույթ հարցերի):

Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	100%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	90-100%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	80-95%

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործող ՈԱ գործընթացները պարբերաբար կանոնակարգվել և բարելավվել են. ծավալուն և արմատական փոփոխություններ են իրականացվել «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և դրա հետագա բարելավում» ծրագրի շրջանակներում, ապա նաև ԳԿՄԿ ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում ՈԱԱԿ արտաքին փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա: Ուսանողների մասնակցությունը կրթական, խորհրդատվական և օժանդակ այլ ծառայությունների գնահատման և դրանց ՈԱ աշխատանքներում ապահովվում է ինչպես կառավարման տարբեր մարմինների հրավիրած նիստերին նրանց մասնակցության, այնպես

էլ իրականացվող տարաբնույթ հետազոտությունների և հարցումներին՝ նրանց մասնակցության միջոցով: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր կիսամյակ իրականացնում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցում: Հարցումն անց է կացվում հաստատված ընթացակարգի համաձայն և անանուն: Հարցման համար նախատեսված գործիքը հնարավորություն է տալիս ուսանողներին գնահատել իրենց ամբիոնի վարիչի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը և իրենց բաժնի ուսումնական խորհրդատու(ների)՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը: Ուսանողները նշված հարցերը գնահատում են 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկ 5-ը՝ ամենաբարձր: Իսկ հարցման մեջ ներառված բովանդակային գաղափարները նպատակ են հետապնդում բացահայտել, վերհանել և իմաստավորել ուսանողների դիրքորոշումներն ու կարծիքները կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մատուցման վերաբերյալ: Շրջանավարտների հարցումը իրականացվում է համաձայն «Գիտակրթական միջազգային կենտրոնում ստացված կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգի»:

Ուսանողների և շրջանավարտների հարցման արդյունքները և վերհանած հիմնախնդիրները քննարկվում են Գիտակրթական միջազգային կենտրոնում ԳԽ-ի, վարչական կազմի և ամբիոնների նիստերի ընթացքում:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարիների համար տե՛ս *հավելված 4.5-ում:*

Չափորոշիչ 4-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մասնագիտական ամբիոնները տեղակայված են ՀՀ ԳԱԱ գիտական հաստատություններում, որն ապահովում է կրթություն–գիտություն կամրջականությունն ու կապը, • Գիտակրթական միջազգային կենտրոնում հանրային կապերի և կարիերայի բաժնի առկայություն, • Ուսանողների կրթական կարիքների վերհանման հստակ կանոնակարգված մեխանիզմի առկայություն, • Միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների ակտիվ մասնակցության ապահովում, • Շրջանավարտների և ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների գործարծում. այդ ծառայությունների անընդհատ կատարելագործում, • Շրջանավարտների զբաղվածության բարձր ցուցանիշ, • Ուսանողների հավաքագրման և ընդունելության իրականացման քաղաքականություն և հստակ մեխանիզմներ, • Գիտակրթական միջազգային կենտրոնը ապահովում է ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների որակը գնահատող մեխանիզմներ, • Ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի առկայություն՝ ի դեմս ՈւԽ-ի, իրավախորհրդատու և ուսանողների ակտիվ մասնակցություն ԳԿՄԿ կառավարման մարմիններում, • Գիտահետազոտական աշխատանքներում մագիստրոսների մասնակցության բարձր մակարդակ, • Ուսանողների շրջանում անցկացվող պարբերական հարցումներ, որոնց շնորհիվ ամրապնդվում է

հետադարձ կապը, • ՈԱ հարցերում ուսանողների իրազեկվածության բավարար մակարդակ
Թույլ կողմեր
• Որոշ ուսանողների ուսուցման ցածր մոտիվացիա, • ՈՒԽ կազմի հաճախակի փոփոխություն՝ կապված մագիստրոսական կրթության 2-ամյա ծրագրերի հետ, • ԳԿՄԿ-շրջանավարտ թույլ կապ
Հնարավորություններ
• ՀՀ-ում միջազգային նախագծերի առկայություն՝ միտված ուսանողության շարժունության խթանմանը: • Միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ կենտրոնի ուսումնալաբորատոր տարածքների արմատական վերազինում գերժամանակակից տեխնիկական միջոցներով:
Վտանգներ
• Աշխատաշուկայի անկայուն վիճակ, որը բացասական է անդրադառնում իրականացվող որոշ մասնագիտությունների պահանջարկվածության և ընդունելության հոսքերի վրա:
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Ուսման նկատմամբ ուսանողների մոտիվացիայի և շահագրգռվածության մակադակի բարձրացում, խրախուսման մեխանիզմների կիրառում, այդ ուղղությամբ ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցության ապահովում, • ԳԿՄԿ – շրջանավարտ կապի հզորացում, ԳԿՄԿ-ի գործունեության ընթացքում շրջանավարտների հնարավորինս ներգրավում, հարաբերությունների զարգացում և շարունակականության ապահովում

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Կենտրոնի՝ այս չափանիշին համապատասխան հավակնությունները ներկայացված են «ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման կարգ»-ում, որոնք կարելի ամփոփել հետևյալ կետերով.

- Կենտրոնում դասավանդման որակի անընդհատ բարձրացում, լավագույն փորձի վրա հիմնված մեթոդիկայի կատարելագործում,
- մասնագիտական ոլորտում նորագույն տեխնոլոգիաների հմտությունների ձեռքբերում և արդյունավետ կիրառում,
- մասնագիտական ոլորտում գիտական նոր հետազոտությունների և մեթոդների կիրառում և մասնակցություն,
- լրացուցիչ կրթություն՝ վերապատրաստումների, սեմինարների և գիտաժողովների կազմակերպում,
- հեռավար ուսուցման մեթոդների կիրառում և կիրարկում ՄԿԾ–ների շրջանակներում,

- ՄԿԾ-ների, նախագծերի, փաստաթղթերի և նյութերի պատրաստում, գիտական հետազոտությունների անցկացում, այլ ուսումնական հաստատությունների, բուհերի, միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների և օտարերկրյա դասավանդողների կողմից սեմինարների և վերապատրաստումների իրականացում,
- ուսումնամեթոդական ձեռնարկների և ՄԿԾ-ների մշակում,
- մասնագիտական հմտությունների (գիտամանկավարժական մեթոդիկայի, հոգեբանական և այլն), առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաթեթի, գնահատման ձևերի նորացում ու արդիականացում:

ՀԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգը, որ նոր խմբագրությամբ ընդունվել է 2018 թվականին, սահմանում է Կենտրոնի ՊԴ կազմի պաշտոնների տարակարգերը, դրանց տեղակալման, պաշտոնների նշանակման սկզբունքները:

Կենտրոնում դեռևս 2014 թվականից գործում է ամբիոնների գործունեության որակի գնահատման կարգը, որով սահմանվում է Կենտրոնի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումների՝ մասնագիտական ամբիոնների գործունեության գնահատման կարգը՝ կրթության որակի պարբերական մշտադիտարկման և ամենամյա ներքին գնահատման շրջանակներում:

Քանի որ Կենտրոնը ծառայություններ է մատուցում բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակներում, ապա կարևոր են ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության, հայցորդության ձևակերպման համապատասխան ընթացակարգերը: Դրանց կարգավորման համար Կենտրոնում գործում է համապատասխան կանոնակարգը՝ ընդունված 2016 թվականին:

Կենտրոնի բոլոր աշխատակիցներին աշխատանքի ընդունելու, աշխատողներին այլ աշխատանքի փոխադրելու, խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ներառյալ՝ աշխատանքից ազատելու կարգը, խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցները, աշխատողների և սովորողների հիմնական իրավունքները, պարտականությունները, աշխատաժամանակի և հանգստի ռեժիմը, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին առնչվող այլ հարցերը կարգավորվում են «Կենտրոնի ներքին կարգապահական կանոններով»:

Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև Կենտրոնի ՌԾ-ն հիմք են հանդիսացել Կենտրոնի բոլոր աշխատակիցների (և՛ ակադեմիական, և՛ վարչական ու օժանդակ) պաշտոնների անձնագրերի ու աշխատանքային նկարագրերի համար ***(տե՛ս հավելված 2.3):***

Կենտրոնում ինչպես ՊԴ, այնպես էլ ուսումնաօժանդակ աշխատակիցների աշխատանքի ընդունումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների և դասախոսների թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրերով: Ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր են կնքվում ժամավճարով ներգրավվող բոլոր դասախոսների հետ: Բոլոր մրցույթների մասին հայտարարությունները նախապես հրապարակվում են Կենտրոնի պաշտոնական կայքէջում, հայտնի զանգվածային լրատվության միջոցներում, տարածվում են սոցցանցերով:

Կենտրոնի ՊԴ անձնակազմի որակավորումն ու վերապատրաստումը իրականացվում է ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի 19-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և 2018 թվականին ընդունված համապատասխան կանոնակարգի հիման վրա: ՊԴ անձնակազմի որակավորման և վերապատրաստման գործընթացի միջոցով կազմակերպվում և իրականացվում է մագիստրոսական կրթական ծրագրերով լրացուցիչ մասնագիտական կրթությունը: Որակավորումն ու վերապատրաստումը բաղկացած են ծրագրերից, որոնցով նախատեսված է տեսական և գործնական մեթոդների կիրառմամբ դասախոսների վերապատրաստման և որակավորման կազմակերպումը: Որակավորման գործընթացի շրջանակներում ՊԴ անձնակազմը ստանում է շարունակական և լրացուցիչ մասնագիտական կրթություն՝ զարգացնելով ՊԴ անձնակազմի մասնագիտական հմտություններն ու կարողությունները, տեսական և գործնական գիտելիքները՝ ժամանակակից գիտամանկավարժական, հետազոտական, համակարգչային հենքի վրա՝ բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան:

Քանի որ Կենտրոնը ՀՀ-ում հետազոտական համալսարանի նախատիպ է, որտեղ մեծ է գիտաշխատողների տեսակարար կշիռը, ապա 2020 թվականից մշակվել և կիրառվում է գիտաշխատողների խրախուսման հատուկ կարգ, որով սահմանվում են Կենտրոնի ՊԴ համակազմի և հետազոտողների հետազոտությունների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Կենտրոնի ՊԴ անձնակազմին ներկայացվող մասնագիտական պահանջների վերանայումն իրականացվում է ՄԿԾ մշակմանը կամ վերամշակմանը զուգընթաց: Ըստ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգի ՄԿԾ-ների վերանայումն իրականացվում է ընթացիկ, տարեկան կամ երկարաժամկետ մշտադիտարկման արդյունքների հիման վրա: Վերանայման համար հիմք կարող են ծառայել ներքին շահակիցների բավարարվածությունը կրթական ծրագրերից (կրթական բովանդակություն, ուսուցման և ուսումնառության մեթոդներ, գնահատման մոտեցումներ, ՊԴ անձնակազմի մասնագիտական պատրաստվածություն, խորհրդատվություն և այլն), ներքին աուդիտի կամ ինքնավերլուծության արդյունքները: ՄԿԾ վերանայումը ընթացիկ

գործընթաց է Կենտրոնում, որը կատարվում է նաև Կենտրոնի միջազգային գործընկեր բուհերի փորձի ուսումնասիրության հիմքի վրա: Վերջերս միջազգային փորձի ուսումնասիրության և բենչմարքինգի արդյունքում, օրինակ, Կենտրոնի մի շարք գործող կրթական ծրագրեր վերամշակվեցին ***(տե՛ս հավելված 3.3)***: Միաժամանակ հստակեցվել են ՊԴ անձնակազմին ներկայացվող մասնագիտական նվազագույն պահանջները, որոնք արտացոլվել են նաև նրանց պաշտոնների անձնագրերում: Այս աշխատանքներում ներգրավվում են ՊԴ անձնակազմը, ԳԽ անդամները, ՈԱ բաժինը: Տնօրենի կողմից հաստատված փաստաթղթերը պահպանվում են Կադրերի բաժնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Կենտրոնում դեռևս 2014 թվականից գործում է **Ամբիոնների գործունեության որակի գնահատման կարգը,** որով սահմանվում է Կենտրոնի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումների՝ մասնագիտական ամբիոնների գործունեության գնահատման կարգը՝ կրթության որակի պարբերական մշտադիտարկման և ամենամյա ներքին գնահատման շրջանակներում:

Կրթության որակի ապահովման, գնահատման համակարգի բարելավման, մոնիթորինգի կազմակերպման նպատակով պարբերաբար, իսկ վերջին անգամ 2020թ.մարտին, կազմակերպվում են ՊԴ և վարչական անձնակազմի վերապատրաստման դասընթացներ կամ քննարկումներ:

Կենտրոնի ՈԱ բաժինը ՊԴ անձնակազմի կարծիքը ուսումնասիրելու համար տարբեր մեխանզիմներ է օգտագործում՝ ֆոկուս խմբային քննարկումներ, քանակական հարցումներ: Կարևոր է նշել նաև այն, որ ՊԴ կազմի ներկայացուցիչները անմիջական հնարավորություն ունեն դիմելու ՈԱ բաժնի աշխատակիցներին՝ իրենց առաջարկներով և դիտողություններով: ՊԴ անձնակազմի առաջարկների հիման վրա վերանայվում են համապատասխան կարգերը, հարցաթերթիկները և այլն: Մասնավորապես վերամշակվել է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը, մշակվել է ՊԴ կազմի Գիտահետազոտական աշխատանքների գնահատման ձևաթուղթը ***(տե՛ս հավելված 5 1)***: Գնահատման արդյունքները հաշվի են առնվում նաև միջազգային փոխանակման ծրագրերում Կենտրոնի դասախոսներին առաջադրելիս:

2018թ -ից ՊԴ անձնակազմի գնահատման արդյունքները ՈԱ բաժնի կողմից անհատապես ուղարկվում են դասախոսներին՝ էլփոստի միջոցով, ինչն արժանացել է դասախոսների դրվատանքին: Կարևոր է նշել, որ, ՈԱ բաժինը տվյալները վերլուծելիս, պահպանում է հարցումը լրացրած ուսանողների անանության սկզբունքը, իսկ յուրաքանչյուր դասախոս ստանում է միայն իրեն տրված գնահատականները, բացառություն է միայն ամբիոնի վարիչը, ում ուղարկվում են հարցման ամբողջական տվյալները:

Ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում ամբողջությամբ գործարկվել է ՊԴ

անձնակազմի գործունեության գնահատման գործիքակազմը, որը կյանքի է կոչվել հեռավար ուսուցման հարթակում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Կենտրոնի ՈԱ բաժինը սահմանված կարգերով, կանոնակարգերով և ընթակարգերով իրականացնում է ներքին և արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրություններ, որոնց տվյալների վերլուծության հիման վրա Կենտրոնն իրականացնում է տարբեր գործառույթներ՝ ուղղված դասավանդողների կատարելագործմանը ***(ՈԱ բաժնի ուսումնասիրությունների մասին մանրամասն տե՛ս Չափորոշիչ 10-ում)***: Կարևոր է նշել, որ ՈԱ բաժինը ակտիվ համագործակցում է Կենտրոնի այլ ստորաբաժանումների, ամբիոնների, ինչպես նաև ՊԴ անձնակազմի հետ և կազմակերպում ու իրականացնում է տարբեր ուսումնասիրություններ, գնահատումներ, մոնիթորինգներ նաև ըստ անհրաժեշտության:

Կենտրոնի ռազմավարական նպատակներից մեկն է ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ՊԴ կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակների բարձրացմանը: Այդ նպատակով Կենտրոնում մշակվել է ՊԴ կազմի որակավորումների բարձրացման մասին կարգը:

Կենտրոնում վերապատրաստումն իրականացվում է տարբեր ձևաչափերով, մասնավորապես՝ անհատական խորհրդատվության, փորձի փոխանակման, կլոր-սեղան քննարկումների, աշխատաժողովների, սեմինարների, թրեյնինգների և այլ նախաձեռնությունների միջոցով: Դասախոսների մեթոդական վերապատրաստումների իրականացման համար հիմք է հանդիսանում ՈԱ բաժնի կողմից իրականացվող կարիքի գնահատման վերլուծությունները ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքները և այլն:: Իրականացված հետազոտությունների վերլուծությունները ՈԱ բաժինը ներկայացնում է տնօրենությանը, ուսումնական մասին, որն էլ իր հերթին կազմում է վերապատրաստումների ժամանակացույց, համաձայնեցնում կրթական ծրագրերի պատասխանատուների, ՈԱԱՊ-ների և ուսումնական մասի հետ: Ինչպես վերապատրաստողները, այնպես էլ վերապատրաստման մասնակիցները վաստակում են հավելյալ միավորներ:

Մասնագիտական ոլորտային վերապատրաստումները վերապահված են ամբիոններին, որոնք իրականացվում են ԳԱԱ հետազոտական ինստիտուտներիում ընթացող գիտական ծրագրերի շրջանակներում, ներպետական և միջազգային տարատեսակ գիտաժողովների, համաժողովների և սեմինարների մասնակցության միջոցներով: Այս առումով պետք է նշել, որ ԳԱԱ համակարգը լայն հնարավորություն է ընձեռնում հատկապես համակարգի հետազոտող-դասախոսներին, որոնք իրենց մասնագիտական գործունեության շրջանակներում մշտապես առնչակից են արտերկրի լավագույն փորձին:

Պետք է նշել նաև, որ շատ դեպքերում դասախոսներն իրեց հետազոտական աշխատանքներում ներգրավում են նաև ուսանողների և գիտագործնական սեմինարներն

իրականացնում են ուսանողների հետ համատեղ: Գիտագործնական սեմինարների իրականացման նպատակն է ոչ միայն դասախոսների մասնագիտական կատարելագործումը, այլ նաև հետազոտական կարողությունների անընդհատ բարելավումը: Գիտագործնական սեմինարներին մասնակցում են ինչպես ամբիոնի դասախոսները, այնպես էլ ուսանողները: Մասնագիտական ամբիոնների և հանրային կապերի բաժնի նախաձեռնությամբ իրականացվում են նաև վարպետության դասեր, որոնք վարում են հրավիրյալ մասնագետներ, գործատուներ, փորձագետներ, շրջանավարտներ կամ դասախոսներ: Վարպետության դասերը, գիտագործնական սեմինարները բաց են ինչպես դասախոսների, աշխատակազմի և ուսանողների, այնպես էլ արտաքին շահակիցների համար և նախապես հայտարարվում են Կենտրոնի կայքէջում:

Կենտրոնի մասնագիտական, մեթոդական և հետազոտական վերապատրաստումների կարևոր գործիքներից է նաև ԵՄ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում առկա դասախոսների փոխանակման հնարավորությունը: Այս ուղղությամբ ԳԿՄԿ միջազգային կապերի բաժինը կատարում է նպատակային աշխատանք՝ ապահովելու վերջիններիս արտերկրում փորձի փոխանակման հնարավորություններ: Այս մասին մանրամասն տե՛ս Չափորոշիչ 9-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Կենտրոնի ՊԴ անձնակազմը 2020թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ 255 հոգի է, որից 229-ն ունեն գիտական աստիճան (90%): Կենտրոնի հիմնական հաստիքային աշխատողները 17-ն են, որոնցից 16-ը գիտական աստիճան ունեն (94%) ***(տե՛ս հավելված 5.2):***

ՊԴ կազմի ավելի քան 79%-ը Կենտրոնում աշխատում է ավելի քան 3 տարի, իսկ շուրջ 60%-ը ավելի քան 5 տարի: ՊԴ կազմի 21%-ը Կենտրոնում աշխատում է մինչև 3 տարի: Հիմնական հաստիքային բոլոր աշխատողները Կենտրոնում աշխատում են ավելի քան 3 տարի, 82%-ը՝ ավելի քան 5 տարի: Սա փաստում է այն մասին, որ Կենտրոնն ունի կայուն ՊԴ կազմ, որի գերակշիռ մեծամասնությունը որակյալ մասնագետներ են՝ համապատասխան գիտական աստիճան ունեցող: Կենտրոնը, մաս կազմելով ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, միաժամանակ «օգտագործում է» ԳԱԱ ողջ պոտենցիալը, որտեղ կենտրոնացած է հանրապետության գիտական պոտենցիալի զգալի մասը:

Բարձր որակավորում ունեցող ՊԴ անձնակազմի ներգրավման, երիտասարդ կադրերով համալրելու, ինչպես նաև նրանց շարունակական մասնագիտական զարգացումն ապահովելու համար Կենտրոնն իրականացնում է ինչպես աշխատանքի գնահատման և խրախուսման տարբեր միջոցառումներ, այնպես էլ շարունակական մեթոդական և մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ: Հարկ է նշել նաև, որ Կենտրոնի ՊԴ կազմի զգալի մասը գործող գիտնականներ են և ընդգրկված են տարբեր միջազգային համագործակցություններում, գիտական նախագծերում: Դա ենթադրում է, որ նրանք աշխատանքին զուգահեռ անընդհատ կատարելագործման/վերապատրաստման

գործընթացներում են, որը դրական իմաստով ազդում է Կենտրոնի մատուցած կրթական ծառայությունների վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Կենտրոնն իր գործունեության ընթացքում մշտապես իրականացրել է դասախոսների վերապատրաստումներ՝ ուղղված մեթոդական, հետազոտական և մասնագիտական որակների բարձրացմանը: ԳԿՄԿ-ում մեթոդական վերապատրաստումների իրականացումը համակարգում է ՈԱ բաժինը՝ Ուսումնամեթոդական մասի հետ: Հետազոտական մասի պատասխանատուն ամբիոններն են: Գործընթացում ընդգրկված են ամբիոնները և վարչական անձնակազմը:

Քանի որ վերապատրաստումներ իրականացվում են նաև միջազգային մակարդակում, Կենտրոնի միջազգային ծրագրերի շրջանակներում, ապա գործընթացում ակտիվորեն ներգրավված է նաև Արտաքին կապերի բաժինը:

Վերապատրաստումների ոլորտներն ու թեմաներն ընտրվում են հաշվի առնելով ԳԿՄԿ Բարելավման պլանը և ՊԴ կազմի ընթացիկ կարիքներն ու պահանջները, որոնք պարբերաբար ուսումնասիրվում են ՈԱ բաժնի կողմից: Այդ մասին մանրամասն տե՛ս Չափորոշիչ 10-ում:

Հարկ է նշել նաև, որ տարիներ շարունակ իրականացվում է Կենտրոնի ՊԴ կազմի օտար լեզուների իմացության կատարելագործման գործընթաց: Այն համակարգվում է Օտար լեզուների ամբիոնի կողմից: Կենտրոնում մշակված է նաև օտար լեզվով դասընթացների վարման խրախուսման մեխանիզմ ***(տե՛ս հավելված 5.3):*** Համաձայն այդ որոշման, օտար լեզվով դասավանդման պարագայում դասախոսի վարձատրությունն ավելի մեծ է: Սա համապատասխանում է նաև Կենտրոնի՝ միջազգային լինելու առաքելությանը: Այն հնարավորություն է տալիս ներգրավել հայերենին չտիրապետող ուսանողների կամ ԳԿՄԿ ուսանողների շարժունակությանը, որոնք իրենց ուսումը շարունակում են ԳԿՄԿ գործընկեր բուհերում: Այս մասին մանրամասն ներկայացված է Չափորոշիչ 9-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՀՀ ԳԿՄԿ կառուցվածքի գծապատկերը, որ ներկայացված է ***հավելված 2.1-ում,*** մշակվել և գործարկվում է Կենտրոնի ներքին և արտաքին շահառուների ակտիվ մասնակցությամբ: Գծապատկերից պարզ երևում է, որ հստակ աշխատանքի բաժանում կա Կենտրոնի աշխատակազմի վարչական և ուսումնաօժանդակ մասերի միջև: Կենտրոնի աշխատակազմի այս երկու «թևերի» գործառույթների բարձր որակով իրականացման և համակցման արդյունքում ապահովվում է բոլոր շահակիցների ներգրավումն ու բավարարվածությունը: Գործառույթների անընդհատ կատարելագործման և ՈԱ նպատակով Կենտրոնում գործում են նաև խորհրդակցական մարմիններ, որտեղ քննարկվում են Կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրներ, կատարվում ու

գործադրվում կոնկրետ առաջարկություններ: Այդպիսի մարմիններից են Կենտրոնի գիտական խորհուրդը, Տնօրենությունը, Որակի հարցերի որակի ապահովման մշտական հանձնաժողովը, Ուսանողական խորհուրդը և այլն:

Կենտրոնի կառուցվածքին ու մարմինների գործառույթների հստակեցմանը անդրադարձ է եղել նաև Կենտրոնի ՌԾ-ի մշակման ընթացքում: Այն անհրաժեշտ էր օպտիմալացնել և համապատասխանեցնել ՌԾ-ին: Արդյունքում, լայն քննարկումների արդյունքում, այժմ ունենք ՌԾ-ին համապատասխան կառուցվածք, որտեղ հստակեցված են յուրաքանչյուր միավորի գործառույթները, որոնք նախկինում երբեմն կրկնվում էին կամ հստակեցված չէին:

Կենտրոնի կազմակերպական կառուցվածքում առկա բոլոր աշխատակիցները՝ վարչական, թե ուսումնաօժանդակ կազմից, ունեն պաշտոնի անձնագրեր, որոնցում մանրամասն ներկայացված է յուրաքանչյուրի գործառույթները և խնդիրները, պաշտոնին հավակնելու համար ներկայացվող պահանջները ***(տե՛ս հավելված 2.3):*** Կառուցվածքային վերջին փոփոխություններից հետո, օրինակ, ի հայտ եկան նոր պաշտոններ, որոնց համար մշակվեցին պաշտոնի անձնագրեր, որոնք հաստատվեցին տնօրենի հրամանով:

Հարկ է ընդգծել նաև, որ Կենտրոնի յուրաքանչյուր ստորաբաժանում, ՌԾ-ին համապատասխան, մշակում է իր տարեկան գործունեության պլանը, իսկ տարեվերջին ներկայացնում գրավոր հաշվետվություն ***(տե՛ս հավելված 1.1):***

Ստորաբաժանումների գործունեության որակը գնահատվում է տնօրենի կողմից՝ հաշվետվության հիման վրա:

Աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով Կենտրոնը կիրարկում է խրախուսման մի շարք մեթոդներ: Օրինակ, աշխատակիցները մասնակցում են միջազգային փոխանակման ծրագրերի, սեմինարների ու գիտաժողովների, ինչպես նաև ստանում են ուսման վարձի մասնակի կամ ամբողջական զեղչ՝ տարբեր կրթական ծրագրերում, օտար լեզուների ակումբում ներգրավվելիս: Ուսման վարձի զեղչեր են կիրառվում աշխատակիցների երեխաների ու ընտանիքի անդամների պարագայում: Վարչական և հիմնական դասախոսական անձնակազմը տարեկան կտրվածքով ստանում է նաև խրախուսական լրավճար:

Չափորոշիչ 5-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• Հետազոտական համալսարանին բնորոշ կառավարման ընդունելի կառուցվածք՝ ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներով, • Վարչական և ՊԴ անձնակազմի մեթոդական և մասնագիտական որակների, կարողությունների անընդհատ կատարելագործում, • ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի՝ աշխատանքի ընդունման և ազատման հստակ կանոնակարգված մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն և կիրառություն, • ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի բազմագործոն գնահատման մեխանիզմների

առկայություն և կանոնակարգված, գործարկված համակարգ, • Կարիքների վերհանման հիման վրա իրականացվող համակարգված մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների իրականացում, • ՊԴ, ուսումնաօժանդակ կազմի միջազգային վերապատրաստումների հնարավորություն և շարունակական միջազգային համագործակցության ծրագրերի առկայություն, • Բարձր որակավորումներ ունեցող ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ, գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսների առկայություն և անընդհատ աճ, • Հետազոտական աշխատանքներում, մասնագիտական առաջընթացի նպատակով իրականացվող նախաձեռնություններում ուսանողների և դասախոսների ակտիվ ներգրավվածություն, • Ռազմավարական խնդիրների իրականացմանն ուղղված ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների բարելավման նպատակային աշխատանքների իրականացում և համապատասխան ֆինանսական միջոցների պլանավորում և տրամադրում, • Աշխատանքի հստակ բաժանում՝ ուսումնաօժանդակ և վարչական աշխատակիցների պաշտոնների անձնագրերի առկայություն՝ հստակ գործառույթներով, • Հետազոտական գործունեության արդյունքների վրա հիմնված գիտաշխատողների խրախուսման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի առկայություն
Թույլ կողմեր
• Մշտական-հաստիքային աշխատակիցների փոքր տոկոս ընդհանուր ՊԴ կազմի մեջ
Արտաքին հնարավորություններ
• Միջազգային ծրագրերով դասախոսների վերապատրաստման հնարավորությունների ընդլայնում, • Հիմնական դասավանդողների թվի ավելացում՝ առավել գրավիչ աշխատանքային միջավայրի և վարձատրության միջոցով, • Առավել մեծ թվով գործնական հմտություններ և պրակտիկ ժամանակակից փորձ ունեցող դասախոսների ներգրավում, • ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի անգլերենի (կամ այլ օտար լեզուների) շարունակական կատարելագործում, • Միջազգային հետազոտական դրամաշնորհային ծրագրերում դասախոսների ներգրավման հնարավորությունների շարունակական ընդլայնում (ԵՄ և այլ դոնորների հովանա-վորությամբ,) • Օտարազգի դասախոսների և վարչական աշխատակիցների ներգրավում՝ աշխատակազմի միջազգայնացում
Վտանգներ
• Բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսք երկրից
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• ՊԴ և վարչական կազմի գնահատումներում մեծ կշիռ տրամադրել մասնագետների լեզուների իմացությանը և թվային հմտությունների շարունակական բարելավմանը, այդ նպատակով մի շարք վերապատրաստումների իրականացմանը, • ՊԴ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի համար շարունակել ապահովել գրավիչ միջավայր՝ տարեցտարի մեծացնելով խրախուսման համար տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև ազգային և միջազգային վերապատրաստումների նոր հնարավորություններ ապահովելով, • Հնարավորության դեպքում ներգրավել օտարազգի դասավանդողների և վարչական աշխատակիցների՝ նպաստելով բուհի ակադեմիական կազմի և կառավարման միջազգայնացմանը,

• Ուսումնասիրել աշխարհի առաջատար հետազոտական համալսարանների փորձը ՊԴ և ուսումնաօժանդակ ու վարչական կազմի վերապատրաստումների առումով, այն տեղայնացնել ու կիրառել Կենտրոնում

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար միջավայրի շարունակական արդիականացում և կատարելագործում, մագիստրոսներին և երիտասարդ գիտնականներին խրախուսման քաղաքականության ներդրում, ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող մեխանիզմների կատարելագործում, ակադեմիական ազնվությունը երաշխավորող կանխարգելող քաղաքականության կատարելագործում, ուսումնական և հետազոտական գործունեության առավել սերտացմանը նպաստող մեխանիզմների ներդրում, համագործակցային կապերի ընդլայնում, ուսանողական համակազմի ներգրավմամբ՝ միջազգային հետազոտական նոր նախագծերի իրականացում, գիտահրատարակչական գործունեություն ***(տե՛ս*** *ԳԿՄԿ ՌԾ):*

Նորարարությունը, հետազոտական աշխատանքների իրականացումը, հետազոտության և ուսումնառության միջև կապի զարգացման անհրաժեշտությունը ԳԿՄԿ-ում կարևորագույն արժեքներից և ռազմավարական հիմնական նպատակներից են, որոնք արտացոլված են ԳԿՄԿ Հետազոտական ռազմավարության և ԳԿՄԿ գիտական հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականության մեջ: Մանրամասն վերլուծությունը տե՛ս ստորև՝ Չափորոշիչ ա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն հետազոտական համալսարանի նախատիպ է, որտեղ արդյունավետ կերպով զուգակցվում են ուսուցման գիտական և կրթական բաղադրիչները և որտեղ ակտիվ գիտական միջավայրում հնարավորություն է ընձեռված պատրաստել բարձր որակավորում ունեցող և գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ: ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների հենքի վրա ԳԿՄԿ-ն իրականացնում է մագիստրոսական, ասպիրանտի և հայցորդի ծրագրերով հետբուհական մասնագիտական կրթություն ՀՀ ԳԱԱ համապատասխան գիտական կազմակերպություններում մասնագիտական ամբիոնների տեղակայմամբ: Մագիստրոսական ծրագրերն իրականացվում են *հավելված 6.1-ում* նշված գիտահետազոտական կազմակերպություններում:

Կենտրոնում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն: Նորարարությունը, հետազոտական աշխատանքների իրականացումը, հետազոտության և ուսումնառության միջև կապի զարգացման անհրաժեշտությունը ԳԿՄԿ-ում կարևորագույն արժեքներից և ռազմավարական հիմնական նպատակներից են: Չնայած այն հանգամանքին, որ Կենտրոնը հետազոտական ոլորտում միշտ ունեցել է իր հետաքրքրություններն ու հավակնությունները, այն որպես հիմնական ռազմավարական նպատակ ամրագրվել է 2019-2023թթ -ին Կենտրոնի ՌԾ-ի՝ Ուղենիշ չորրորդի՝ «Գիտահետազոտական գործունեություն» բաժնում, ինչին համապատասխան գործողությունների հիմնական ուղղություն է ընտրվել գիտահետազոտական գործընթացի կազմակերպման համար միջավայրի շարունակական արդիականացումն ու կատարելագործումը: Հետազոտական ոլորտում Կենտրոնի նպատակադրումներից՝ արդյունքների ապրանքայնացման միտմամբ՝ հայեցակարգի մշակում, հետազոտական գործունեության արդյունքների որակի և արդիականացման գնահատման ցուցիչների հիմքով լավագույն մագիստրոսներին ու երիտասարդ գիտնականներին խրախուսման քաղաքականության կատարելագործում: Հետազոտական ոլորտի առաջնահերթություններից է ակադեմիական ազնվությունը երաշխավորող անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերումը, ուսումնական և հետազոտական գործունեության առավել սերտացմանը նպաստող արդյունավետ մեխանիզմների ներդրումը, ՀՀ կառավարման համակարգի սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական սոցիալ-հոգեբանական և այլ առաջնահերթություններից բխող մագիստրոսական թեզերի և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը: Առանձնակի նշանակություն է տրվում գիտահետազոտական գործունեության ոլորտում համագործակցային կապերի ընդլայնմանը՝ հանրապետական և արտերկրի առաջատար գիտական կենտրոնների, ձեռնարկությունների, գործարար ոլորտի և այլ կառույցների հետ, ինչպես նաև միջազգային հետազոտական նոր նախագծերի իրականացմանը՝ ուսանողական համակազմերի ներգրավմամբ: Հետազոտական ուղղության կատարելագործման համատեքստում շեշտադրվում է որակյալ ասպիրանտական կրթության համար անհրաժեշտ ակադեմիական, հետազոտական, մեթոդական, նյութատեխնիկական միջավայրի ապահովման քաղաքականությունը: Իբրև առաջնահերթություն ամրագրվում է Կենտրոնի մասնագիտական ամբիոնների գիտական գործունեության որակի բարձրացումը, մագիստրոսական և ասպիրանտական թեզերի գիտական նորույթների հանրայնացումը, գիտահրատարակչական գործունեությունը, գիտական պարբերականների միասնական չափանիշների մշակումն ու ներդրումը: Առաջադրված հիմնախնդիրների լուծմանը միտված՝ Կենտրոնում ստեղծվեց **Հետազոտության ռազմավարություն**, որտեղ ներառված են հստակ ուղենիշներ գիտահետազոտական գործունեության բարելավման, զարգացման և արդիականացման հստակ քայլեր և որի շրջանակներում, հետազոտական ռազմավարության հիմնական խնդիրներին և ակնկալիքներին համահունչ, աշխատանքներ են ծավալվել մագիստրոսների գիտաուսումնական և հետազոտական գործունեության խթանման, գիտական և հետազոտական ներուժի ամրակայման, միջազգային

գիտահետազոտական համագործակցության, ԳԿՄԿ-ի ասպիրանտուրայի կատարելագործման ուղղություններով: Փորձագիտական այցից հետո ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բարելավման միտումներում առկա էին դիտարկումներ առ այն, որ կառավարման համակարգի վերակառուցման շրջանակներում անհրաժեշտ էր ստեղծել գիտահետազոտական գործունեությունը համակարգող պատասխանատու կառավարիչի պաշտոնատեղի ներմուծման հնարավորություն: Հիմք ընդունելով նշյալ դիտարկումը և վերջինիս հաշվառմամբ՝ ԳԿՄԿ-ում ներդրվել է նոր՝ գիտահետազոտական գործունեության գծով փոխտնօրենի հաստիքը, որը 2020 թվականից ամբիոնների վարիչների և համակարգող աշխատակազմի հետ համատեղ իրականացնում է գիտահետազոտական գործունեությունը Կենտրոնում ***(տե՛ս հավելված 6.2, 6.3)***: Վերջինիս աշխատանքների շրջանակներում մշակվել է Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականություն , ստեղծվել գործուն մեխանիզմներ՝ հիմքում դնելով հետազոտական գործունեության արդյունքների որակի և արդիականության գնահատման ցուցիչներ, Հետազոտության արդյունքների հանրայնացման, իրազեկման և ապրանքայնացման գործընթացն ուղղորդող կարգ, ԳԿՄԿ-ում հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականություն, Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ-քաղաքականություն, Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ, Ակադեմիական ազնվության հայեցակարգ , ընթացքի մեջ է ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող գործիքակազմի և միջոցների ձեռքբերման ու կիրարկման քաղաքականության ու ընթացակարգերի ներդրումը ***(տե՛ս հավելված 6.4)***:

ԳԿՄԿ-ն կարևորում է ուսանողների և ՊԴ համակազմի գոհունակությունը և դիրքորոշումները կրթական գործընթացի հետազոտական բաղադրիչից, ինչի արդյունքում մշակվել և կիրարկվում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից ինչպես ուսանողների բավարարվածությունը բացահայտող, այնպես էլ դասախոսական համակազմի բավարարվածության մակարդակը բացահայտող հարցարաններ, վերհանվում առկա խնդիրները և մշակվում հաղթահարման ուղիները:

Գիտահետազոտական գործունեության ուղենիշի շրջանակներում յուրաքանչյուր տարի, ինչպես ԳԱԱ գիտական ինստիտուտներում, այնպես էլ ԳԿՄԿ-ում կազմակերպվել են գիտաժողովներ, գիտագործնական սեմինարներ, ինչը հնարավորություն է ընձեռում թե՛ ՊԴ համակազմին, թե՛ մագիստրանտներին ու ասպիրանտներին մասնակցել, հանդես գալ զեկույցներով, տպագրել իրենց հետազոտությունների դրույթները ***(տե՛ս https://www.isec.am/articles/events/future-armenia.html, https://www.isec.am//articles/events/an-international-conference-dedicated-to-the-20th-anniversary-of-the-foundation-of-the-isec.html)***:

ԳԿՄԿ-ի աշխատակիցների ջանքերով է հրատարակվում նաև «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը (տարեկան 4 համար), որտեղ հրապարակվելու հնարավորություն ունեն ինչպես Կենտրոնի դասախոսները, այնպես էլ մագիստրանտները և ասպիրանտները

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ԳԿՄԿ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն, կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում Կենտրոնի հետաքրքրությունները և հավակնությունները: Կենտրոնում հետազոտական բաղադրիչի շարունակական զարգացման և գործողությունների իրականացման համար հետազոտական ռազմավարության համատեքստում հստակեցված են անհրաժեշտ միջոցառումների ցանկը, ակնկալվող վերջնադյունքները, ցուցիչները, ժամկետները և դրանց կատարման համար պատասխանատու ստորաբաժանումները (***տե՛ս հավելված 6.5***): Ընթացքի մեջ է գիտական հետազոտական բաղադրիչի անընդմեջ զարգացումը: Բացի այդ, Կենտրոնում որպես միջնաժամկետ պլանավորում ընդունվել է ԳԿՄԿ Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության վերաբերյալ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, որը ևս դրվել է ստորաբաժանումների պլանավորման հիմքում:

ԳԿՄԿ-ում ուսումնական գործընթացի հետազոտական բաղադրիչը ապահովվում է Կենտրոնի մասնագիտական ամբիոններում հաստատված մագիստրոսական և ասպիրանտական թեմաների ընդգրկվածությամբ՝ Ակադեմիայի ինստիտուտներում իրականացվող հետազոտություններում և գիտական թեմաներում (***տե՛ս հավելված 6.6***):

Ամբիոնների կտրվածքով՝ յուրաքանչյուր ամբիոն հստակեցրել է իր հետաքրքրությունների շրջանակները՝ հետազոտական բաղադրիչի համատեքստում, հիմնական շեշտադրումը դնելով կիրառական բնույթի հետազոտական ծրագրերի վրա: Աշխատանքներ են իրականացվում ներգրավելու արտաքին շահակիցներին ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, հետազոտությունների ղեկավարման և գրախոսման ուղղությամբ, վերանայվել են մասնագիտությունների կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի վերջնարդյունքները, ներառվել է հետազոտական կարողությունների գնահատման բաղադրիչը: ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում ասպիրանտական կրթություն են ստանում 400-ից ավելի ասպիրանտ և հայցորդ: Կատարելով համատեղ հետազոտական աշխատանք համապատասխան ինստիտուտների և կենտրոնների գիտաշխատողների հետ՝ նրանք լիիրավ ներգրավվում են տվյալ գիտական կազմակերպության բոլոր միջոցառումներին՝ գիտաժողովներին, սեմինարներին, ամառային դպրոցներին և գործուղումներին, միջազգային ծրագրերին: Ստացված գիտական ձեռքբերումները վավերացվում են համատեղ հոդվածների, ներդրումների, զեկուցումների ձևով (***տես՝ ՀՀ ԳԱԱ տարեկան հաշվետվությունները***): Կենտրոնի բոլոր ամբիոններում դասավանդվում է «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկան, ինչը հնարավորություն է ընձեռում մագիստրոսների ու ասպիրանտների շրջանում ամրակայել գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ գիտական հետազոտությունների իրականացման ողջ գործընթացի, փիլիսոփայության ու մեթոդաբանության վերաբերյալ:

Գիտահետազոտական գործունեության ուղենիշի շրջանակներում, մասնավորապես, վերջին երեք տարիների ընթացքում կազմակերպվել են ներհանրապետական և միջազգային գիտաժողովներ, որոնց արդյունքում տպագրված գիտական հոդվածների ժողովածուներում ներառվել են Կենտրոնի ՊԴ կազմի, ասպիրանտների և ուսանողների հետազոտությունների արդյունքները *(հավելված 6 7, 2016, 2017, 2018, 2019, 2020 թթ. «Կաճառ» գիտական պարբերական, «Ինովացիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում» և այլն):* Աճել է Կենտրոնի կողմից ազգային և միջազգային գիտաժողովներին մասնակցող ԳԿՄԿ-ի դասախոսների և ուսանողների քանակը (գիտաժողովների արդյունքները հրապարակվում են ժողովածուների տեսքով, տեղադրվում պաշտոնական կայքէջում, տարածվում տարբեր գրադարաններում, որտեղ ակտիվ մասնակցում են նաև ԳԿՄԿ-ի դասախոսները), 2018թ.-ին ԳԿՄԿ ԳԽ որոշմամբ Կենտրոնում հիմնադրվել է «Կաճառ» գիտական պարբերականը (գլխավոր խմբագիր. Ն. Հակոբյան), որը լույս է տեսնում տարեկան երկուանգամյա պարբերականությամբ: Գիտական պարբերականը լույս է տեսնում Կենտրոնի ֆինանսավորմամբ, որում զետեղվում են ինչպես ՊԴ համակազմի, այնպես էլ ասպիրանտների ու մագիստրոսների գիտական հոդվածները, որոնց տպագրմանը ներկայացվող պահանջներն են. հոդվածները պետք է լինեն արդիական, ունենան նորույթ, արտացոլեն առաջադրված խնդիր, հետազոտության մեթոդներ ու գործիքակազմ, նկարագրեն հետազոտության հիմնական արդյունքները և եզրահանգումները, ինչպես նաև համապատասխանեն հրատարակվելիք հոդվածների նկատմամբ առաջադրված տեխնիկական պահանջներին և ձևավորման սահմանված կանոններին: Պարբերականում ընդգրկված գիտական հոդվածները գրախոսվում են: ՊԴ կազմի գործունեության գնահատման և հավելավճարի սահմանման կանոնակարգի համաձայն 2020 թվականից ավելացել է դասախոսների հավելավճարի տրամադրման ծավալը ***(տե՛ս հավելված 6.8):***

2016-2017թթ. «Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» Տեմպուս ծրագրի շրջանակներում կազմվել է «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» ասպիրանտական ծրագրի տեղեկատվական գրքույկը անգլերեն լեզվով և իրականացվել է «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» ասպիրանտական ծրագրի ինքնավերլուծությունը, որն անցել է արտաքին գնահատում ՈԱԱԿ-ի կողմից: Փորձագիտական խմբում ընդգրկվել էին երկու տեղացի փորձագետ, մեկ միջազգային փորձագետ Գերմանիայի Հայդելբերգի համալսարանից, մեկ ուսանող-փորձագետ (ասպիրանտ) և մեկ դիտորդ ծրագրի գործընկեր ուսումնական հաստատությունից *(տե՛ս https://www.isec.am/images/veritas_dzernark/MCB_BOOKLET.pdf, https://www.isec.am/images/mshakvac_pastatxter/PhD_Program_IMB_final.pdf, https://www.isec.am/images/pastatxter_ver/IMB_ISEC_Self-assessment14.02.2017.pdf)*:

2020 թվականի դեկտեմբերի 11-13-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաֆինանսավորմամբ ԳԿՄԿ-ում իրականացվել է «Ապագայի Հայաստան» վերտառությամբ երիտասարդ գիտնականների գիտաժողով-դպրոց, որին մասնակել են

ինչպես ԳԿՄԿ ուսանողներ ու ասպիրանտներ այնպես էլ ՊԴ համակազմի ներկայացուցիչներ:

2020 թվականից ԳԿՄԿ-ն ընդգրկված է ԵՄ *Էրազմուս +* «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» ծրագրում *(Էրազմուս+ ՀԳ2 Կարողությունների զարգացում (609850-EPP-1-2019-1-AM-EPPKA2-CBHE-SP), Տևողությունը՝ 36 ամիս (2020-2023)):*

ARMDOCT ծրագիրը նպատակ ունի բարեփոխելու դոկտորական (բարձրագույն կրթության երրորդ մակարդակ) կրթությունը Հայաստանում Զալցբուրգի սկզբունքներին համահունչ՝ ազգային քաղաքականության և իրավական կարգավորող փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Ծրագիրը նպատակ ունի խթանելու բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (EHEA) և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին (ERA) ինտեգրմանը: ԳԿՄԿ-ի ծրագրային թիմի կողմից մշակվել են ասպիրանտուրայի ընդունելության, ուսուցման կազմակերպման, գիտական աստիճանաշնորհիման, ինչպես նաև կրթություն-գիտություն-տնտեսություն կապին վերաբերող հայեցակարգային դրույթները: Դրանք ներկայացվել են ինչպես ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, այնպես էլ շահագրգիռ այլ կառույցներին:

2020 թվականի հոկտեմբերի 28-ին տեղի ունեցավ միջազգային հեռավար գիտաժողով «Պատմական հիշողությունն ու ժամանակակից քաղաքական գործընթացները» վերտառությամբ, որի համակազմակերպիչ էր ԳԿՄԿ-ն, Ռուսաստանի Գ.Վ. Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի Երևանյան մասնաճյուղի, Ա. Ս. Պուշկինի անվան Լենինգրադի պետական համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի, Մարդասիրության պրոբլեմների ակադեմիանի հետ: Գիտաժողովին մասնակցության նպատակով հրավիրված էին պատմաբաններ, քաղաքագետներ, հոգեբաններ, սոցիոլոգներ, տնտեսագետներ, մարդաբաններ և այլ գիտակարգերի գիտնական-ներկայացուցիչներ, դասախոսներ, ասպիրանտներ, ինչպես նաև պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Հնչած զեկուցումները տպագրվել են ***(տե՛ս հավելված 6 9):***

2021-ին ԳԿՄԿ-ում «Բարձրագույն կրթության զարգացման միտումները և մարտահրավերները» խորագրով գիտաժողովի կազմակերպման նպատակով՝ մշակվել և ամերիկյան «Սպենսեր» հիմնադրամին է ներկայացվել դրամաշնորհային հայտ Հայտը ընդունվել է առաջին փուլով և գիտաժողովի իրականացումը նախատեսվում է 2021 թվականի աշնանը ***(տե՛ս հավելված 6 10):***

2020 թվականի դեկտեմբերի 7-ի ԳԽ որոշմամբ 2022թ -ից ԳԿՄԿ-ում գործելու է

«Ամարաս» վերլուծական ուղեղային կենտրոնը (Think tank), որը ՀՀ հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ոլորտների վերաբերյալ կիրականացնի հետազոտություններ և արդյունքները կտրամադրի ՀՀ կառավարությանը, ՀՀ Ազգային ժողովին և շահագրգիռ այլ կառույցներին Կենտրոնի ոլորտային աշխատանքները համակարգելու են մասնագիտական ամբիոնների վարիչները՝ ՊԴ համակազմի ներգրավմամբ ու ակտիվ աջակցությամբ ***(տե՛ս հավելված 6.11):***

ՀԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

2020թ.-ին ԳԿՄԿ ԳԽ-ն ընդունել և հաստատել է հետազոտության վերաբերյալ մի շարք փաստաթղթեր, որոնք ապահովում են այս ոլորտի հստակ քաղաքականությունը և ընթացակարգերը *(տե՛ս ԳԿՄԿ կայքէջի կանոնակարգեր բաժինը:)*

Հետազոտության զարգացումը ԳԿՄԿ-ում ենթադրում է հետազոտական գործունեության՝ իբրև առանձին ոլորտի համակարգման անհրաժեշտություն՝ համապատասխան պատասխանատու անձով, ինչպես նաև ոլորտում սեփական հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն և պլան-ժամանակացույցի առկայություն, հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ հիմքում ունենալով հետազոտության արդյունքների ապրանքայնացում, երիտասարդ գիտաշխատողների խրախուսման քաղաքականություն և այլն:

Ըստ այդմ՝ հաշվի առնելով ԳԿՄԿ 1-ին հավատարմագրման ժամանակ արձանագրված թերությունները և հիմնվելով դրանց վերացմանն ուղղված ԳԿՄԿ բարելավման պլանով նախատեսված գործողությունների վրա՝

1. ԳԿՄԿ-ում ստեղծվել է Գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի հաստիք՝ իբրև ոլորտի պատասխանատու ***(տե՛ս հավելված 6 1)***
2. Ոլորտում առաջադրված և հիմնախնդիրների լուծմանը միտված՝ հետազոտության ռազմավարություն և պլան-ժամանակացույց ***(տե՛ս հավելված 6 5)***
3. Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականություն:
4. Հետազոտության արդյունքների հանրայնացման, իրազեկման և ապրանքայնացման գործընթացն ուղղորդող կարգ:
5. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:
6. ԳԿՄԿ-ում հետազոտությունների խթանմանն ուղղված քաղաքականություն:
7. Հետազոտական գործունեություն և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:
8. Ակադեմիական ազնվության հայեցակարգ (*Մշակման փուլում է ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող գործիքակազմի և միջոցների ձեռքբերման ու կիրարկման քաղաքականությունը):*

9. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից, ինչպես ուսանողների բավարարվածությունը բացահայտող, այնպես էլ դասախոսական համակազմի բավարարվածության մակարդակը բացահայտող հարցարաններ:
10. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտների (հայցորդների) կողմից զոհունակության հարցում և գնահատման կանոնակարգ:
11. Հետազոտական գործունեության արդյունքների վրա հիմնված գիտաշխատողների խրախուսման համար վճարող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ:
12. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կանոնակարգ:
13. ՊԴ կազմի որակավորման բարձրացման կարգ:
14. Վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
15. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների գնահատման կարգ:

Այս կարգերն ու ընթացակարգերը էականորեն կանոնակարգել են ԳԿՄԿ տարվող հետազոտական աշխատանքները և բավարար հիմք ստեղծել այստեղ տարվող հետազոտական աշխատանքների արդյունավետության գնահատման համար: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ այս պահի դրությամբ ԳԿՄԿ-ում առկա են բավարար հիմքեր հետազոտական գործունեության պլանավորման, իրականացման, զարգացման և գնահատման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԳԱԱ ԳԿՄԿ միջազգային գործունեությունը նպատակաուղղված է նպաստելու և ապահովելու միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությանը, նրանց առավել ակտիվ մասնակցությանը համատեղ միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին: Այդ իմաստով ԳԿՄԿ-ն կուտակել է գիտագործնական բավականին մեծ փորձ: Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել ՀՀ ԳԱԱ համակարգի գիտաշխատողներին և գիտահետազոտական կառույցներին ու ԳԿՄԿ ՊԴ համակազմին միավորելու, կոորդինացնելու ջանքերն ու հնարավորությունների ներդրումը հիմնարար գիտական հետազոտությունների իրականացման գործընթացին՝ հասարակական, հիմնարար ու կիրառական, բնական գիտությունների բնագավառներում: Ներկայում ԳԿՄԿ-ն մասնակցում և իրականացնում է տարբեր միջազգային և ԳԿՄԿ գիտակրթական հետաքրքրություններին համապատասխան դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրեր, մշտական կապի և տեղեկատվության փոխանակում Կենտրոնի և արտասահմանյան գործընկերների միջև:

Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Տուշայի համալսարանի միջև իրականացվող Erasmus+ KA107 շարժունության ծրագրով 2017թ. մայիսի 22-ից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակության այցը Տուշայի համալսարանում

(Իտալիա) հնարավորություն է ընձեռել զարգացնել և ապահովել համագործակցությունը համալսարանի Կենսաբանական, ագրոպարենային և անտառային համակարգերի նորարարության դեպարտամենտի հետ (DIBAF), ծանոթանալու շրջակա միջավայրի աղտոտման փորձաքննության ընթացակարգերին, հեղուկային քրոմատոգրաֆիայի լաբորատորիայում՝ սննդամթերքում մնացորդային նյութերի փորձաքննության ժամանակակից մեթոդներին, գենետիկայի, մոլեկուլային և բջջային կենսաբանության լաբորատորիայում՝ ուսումնասիրելու գենետիկ մուտացիաների բացահայտման արդի խնդիրները:

Հետատազոտության բաղադրիչի զարգացման և միջբուհական համագործակցության զարգացման տեսանկյունից հատկանշական ենք համարում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնի և Իտալիայի Բոլոնիայի համալսարանի պատմության և մշակույթների դեպարտամենտի հետ գիտական և հետազոտական համագործակցությունը՝ թուրքագիտության և արաբագիտության հարցերի շուրջ:

Փաստենք նաև, որ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ-ի «Արևելագիտություն» մասնագիտության մագիստրանտները 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրենց ուսումնառությունն անցկացրել են Բոլոնիայի համալսարանում, ինչը հնարավորություն ընձեռեց մագիստրանտներին ծանոթանալ հիշյալ համալսարանի մագիստրոսական կրթության հետազոտական բաղադրիչին, ինչպես նաև մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացակարգին:

Միջազգային տարբեր գիտական կառույցների անդամակցում են նաև ՀՀ ԳԱԱ-ի տարբեր ինստիտուտներ և կառույցներ, որտեղ տեղակայված են ԳԿՄԿ մասնագիտական ամբիոնները՝ օրինակ ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը անդամակցում է Հեռահաղորդակցման միջազգային միությանը՝ International Telecommunication Union (ITU), ՀՀ ԳԱԱ ֆիզոլոգիայի ինստիտուտը՝ Մտքի փորձագիտական միջազգային կազմակերպությանը՝ International Brain Research Organization (IBRO): Իսկ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջազգային գործունեության մասին մանրամասն ***տե՛ս Հավելված 9-ում:***

Գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև նրանց լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխան հետազոտություններ կատարելու համար կամ ստեղծվում են նոր լաբորատորիաներ: Օրինակ՝ Էրազմուս+ Մենվիպրո՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» ծրագրի շրջանակներում, գրանցվել է ևս մեկ ուղենիշ. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը, որտեղ տեղակայված է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիան (ERLEP), և ծրագրային գործընկեր համալսարանները՝ Գավառի պետական համալսարանը (ՀՀ), Իլյայի պետական համալսարանը և Վրաստանի համալսարանը (Վրաստան) կնքել են հետազոտական ենթակառուցվածքների հասանելիության համաձայնագրեր, համաձայն որոնց ԳԿՄԿ-ն իր գործընկեր բուհերին տրամադրում է իրավունք կատարել

հետազոտություններ, գիտական փորձեր միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական լաբորատորիայում՝ կրթության և ուսուցման նպատակով, մինչդեռ գործընկեր բուհերը, լինելով Էրազմուս+ Մենվիպրո կոնսորցիումի մաս, իրավունք ունեն օգտագործել սարքավորումները մշակված/փոփոխված ուսումնական պլանների շրջանակներում կրթական գործողություններ իրականացնելու նպատակով:

Ձեռք է բերվել գերժամանակակից էլեկտրոնային մանրադիտակ ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի համար, արդեն իսկ հաստատվել է բարձրաէֆեկտիվ հեղուկային քրոմատագրային համակարգի մատակարարման պայմանագիրը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնը և Հայաստանի ազգային ագրարային համալսարանը կնքել են համագործակցության համաձայնագիր, որի շրջանակներում մասնակիցները կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝ Հայաստանում և գործընկեր երկրներում կենսամթերքի տեխնոլոգիայի և գիտության ոլորտում համատեղ նախագծերի իրականացում՝ ժամանակակից մեթոդաբանությունների և ձեռնարկատիրական գործիքների կիրառման միջոցով բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների փոխանակում՝ ուսումնառության և հետազոտություն իրականացնելու նպատակներով:

Նշենք նաև, որ ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը ներկայացված է *հավելված 6.12-ում:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	70-90%
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	66-90%
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	80-100%

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի գիտական և կրթական գործընթացների փոխկապակցվածությունը բխում է Կենտրոնի առաքելությունից, ռազմավարական նպատակներից ու հետազոտության ռազմավարությունից: Գիտական և հետազոտական աշխատանքը ԳԿՄԿ-ի գործունեության կարևորագույն բաղկացուցիչն է, որը փոխկապակցված է կրթական գործունեության հետ: Այն ուղղված է ԳԿՄԿ-ում նոր հիմնարար գիտելիքների ստացմանը, կիրառական խնդիրների նորովի լուծումների որոնմանը, բարձրակարգ գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, նոր արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթացում: ԳԿՄԿ-ում այս ուղղությամբ իրականացված աշխատանքները ամփոփվում են ուսումնառողների շրջանում հետազոտական հմտությունների ու կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման, հետազոտության տարբեր օբյեկտների, սկզբունքների և

եղանակների ճանաչման համակարգված մեթոդաբանության ձևավորման, սեփական գիտական հետազոտությունների արդյունքների ներկայացման կարողության (հաշվետվությունների, պրեզենտացիաների, գիտական հոդվածների և այլն պատրաստում) զարգացման համատեքստում: Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցման քաղաքականությունը ԳԿՄԿ-ում արտահայտվում է ուսումնառողների հետազոտական գործունեության զարգացման, խթանման, արդյունքների ներկայացման նպատակով՝ ներբուհական մրցույթների, օլիմպիադաների, ուսանողական գիտական կոնֆերանսների և սեմինարների կազմակերպման, ուսանողական գիտական հոդվածների ժողովածուի պատրաստման ու տպագրման, գիտական, գիտատեխնիկական, ինովացիոն տեղական և միջազգային ծրագրերին ուսումնառողների մասնակցության ապահովման վերջնարդյունքներով: ԳԿՄԿ-ում ուսումնական և գիտական գործընթացների միասնությունը ապահովում ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների հենքի վրա և տվյալ տարածքում տեղակայված մասնագիտական ամբիոնների առկայությունը:

Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցումը անմիջականորեն իրականացվում է այն սկզբունքով, որ ուսումնառողների համար անմիջականորեն ապահովված է ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտներում տեղակայված մասնագիտական լաբորատորիաների ու անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսի հասանելիությունը ինստիտուտներում տեղակայված մասնագիտական ամբիոններին ու ուսանողական համակազմին, այդ հենքի վրա մասնագիտական ամբիոնների ուսումնական և գիտահետազոտական գործունեությունը, ինչպես նաև ամբիոններում տվյալ բնագավառի գիտության առաջատար գիտնականների, հետազոտողների ներգրավվածությունը՝ իբրև ՊԴ համակազմ, համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման նպաստավոր պայմանների ստեղծումը, ինստիտուտների բազային հետազոտական աշխատանքներում ԳԿՄԿ-ի մագիստրանտներին ներգրավումը: Դա է հավաստում ԳԿՄԿ-ում, ինչպես նաև այլ գիտակրթական կենտրոններում իրականացված միջազգային գիտաժողովներին մասնակցության ու գիտական հանդեսներում կամ գիտական հոդվածների ժողովածուներում տպագրությունների առկայության փաստը *(այս մասին տե՛ս https://www.isec.am/science.html)*:

Չափորոշիչ 6-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ԳԱԱ-ն՝ իր ողջ գիտական և գիտատեխնիկական հարուստ ներուժը, կազմակերպությունները, ենթակառուցվածքներն ու միջազգային կապերը, • ԳԱԱ գիտական ինստիտուտների կողմից պարբերաբար կազմակերպվող գիտական միջոցառումները, • ԳԱԱ գիտագործնական հսկայածավալ փորձն ու գիտական ու գիտատեխնիկական ներդրումները, • ԳԱԱ կողմից իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունների համակարգող դերը, • ԳԱԱ համակարգի գիտական հաստատությունների և կազմակերպությունների ընձեռած մարդկային, գիտական, տարածքային և գիտատեխնիկական ռեսուրսները ԳԿՄԿ-ին, • ԳԿՄԿ մագիստրոսական և ասպիրանտական համակազմի ամբողջական ներգրավվածությունը գիտական հաստատությունների գիտահետազոտական աշխատանքներում

Թույլ կողմեր
• Կիրառական կարևոր խնդիրների լուծման, ստացված արդյունքների ապրանքայնացման ու ներդրման ներուժի օգտագործման ոչ բավարար մակարդակ, • Աշխատաշուկայի և ԳԿՄԿ ամբիոնների ոչ ամբողջ ծավալով համագործակցությունը, • Ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար մակարդակը, • Որոշ մասնագետների ոչ բավարար մոտիվացվածությունը
Հնարավորություններ
• Արդիական ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի ստեղծում և զարգացում՝ առաջատար գիտատեխնոլոգիական և արտադրական ընկերությունների մասնակցությամբ, • Պետական պատվերով և նպատակային ֆինանսավորմամբ իրականացվող գիտահետազոտական և գիտատեխնիկական հետազոտությունների համար խթանների առկայություն, • Արդյունաբերական ձեռնարկությունների հետ համատեղ հետազոտությունների և ծրագրերի իրականացում, • Միջազգային գիտատեղեկատվական ցանցերում հեղինակավոր գիտավերլուծական շտեմարաններում և տարաբնույթ վարկանիշային ցանկերում ԳԱԱ ԳԿՄԿ գիտական աշխատանքների առավելագույնս ներկայացում, • Միջազգային, արտասահմանյան գիտակրթական կենտրոնների հետ համատեղ հետազոտական նոր ծրագրերի իրականացում, • Ընձեռված մեծ հնարավորությունը՝ միջազգային գիտաժողովների մասնակցության
Վտանգներ
• ՀՀ ԳԱԱ համակարգի նկատմամբ պետական քաղաքականության անկանխատեսելիություն, • Գիտահետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորման ցածր մակարդակ, • Հետազոտությունների պատվիրատուների ոչ բավարար ներգրավվածություն, • Որոշ հետազոտական ոլորտների նկատմամբ պահանջարկի անկում, • Գիտական հետազոտությամբ զբաղվող երիտասարդ կադրերի պակաս և արտահոսք
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Հետազոտական արդյունքների ապրանքայնացմանն ուղղված գործողությունների իրականացում. գործատուների հետ համագործակցության ընդլայնում, • Արտաքին դրամշնորհների ներգրավում և կրթական լրացուցիչ ծառայությունների մատուցում, • Երիտասարդ կադրերի ներգրավում և խրախուսման մեխանիզմների զարգացում, • Մասնակցություն իրավական ակտերի փոփոխությունների քննարկումներին և համապատասխան առաջարկությունների ներկայացում, • Պետական մարմինների հետ համագործակցության ինտենսիվացում, • Նոր պատվիրատու գործընկերների հետ համագործակության հաստատում, • Գիտության և կրթության հանրայնացման աշխատանքների ընդլայնում

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՀԱՔԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Գիտակրթական միջազգային կենտրոնի 2019-2023 թթ. ՌԾ-ում որպես առաքելություն սահմանված է՝ գիտության, կրթության և տնտեսության արդի պահանջներին համահունչ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը ժամանակակից տեխնոլոգիաների

կիրառմամբ, ինչպես նաև Կենտրոնի հետազոտական հնարավորությունների զարգացումը և գիտահետազոտական ու գիտամեթոդական գործունեության խթանումը: ՌԾ-ում որպես առաքելություն՝ ի թիվս այլոց սահմանված է արդիական ենթակառուցվածքների ապահովումը, զարգացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	77.10%
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	95.30%

Գիտակրթական միջազգային կենտրոնը Հայաստանի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է, որը ձևավորվել է ՀՀ ԳԱԱ գիտական և ենթակառուցվածքային բազայի վրա: ԳԱԱ հետազոտական ինստիտուտներն իրենց հզոր լաբորատորիաներով, ինչպես նաև Հիմնարար գիտական գրադարանը ապահովում են պատշաճ հենք Գիտակրթական միջազգային կենտրոնի կողմից մագիստրոսական և ասպիրանտական կրթության արդյունավետ կազմակերպման համար, և ըստ այդմ՝ ուսումնական ռեսուրսները, ըստ առանձին ոլորտների, ապահովում են համապատասխան որակավորումների շրջանակը:

Փաստացի, ԳԿՄԿ ամբիոնները տեղակայված են հետազոտական ինստիտուտներում, ինչը թույլ է տալիս Կենտրոնում ուսումնառություն ստացող ուսանողների համար ապահովել կրթություն-գիտություն արդյունավետ կապը և ուսումնառության ընթացքում ժամանակակից հետազոտությունների անցկացումը: Ավելին, բացի վերոգրյալից, Կենտրոնում գործում են նաև Տնտեսագիտական լաբորատորիա, Հոգեբանական դիտարան, Իրավաբանական կլինիկա, որոնց գործունեությունն իր հերթին նպաստում է համապատասխան մասնագիտական ոլորտներում հետազոտական բաղադրիչի ընդլայնմանը: Բացի նշվածից, Կենտրոնում առկա են նաև առարկայական կաբինետներ ևս, որոնք ստեղծված են առանձին մասնագիտացված առարկաների համար:

Կարևոր է փաստել, որ ԳԿՄԿ լսարանները ունեն տեխնիկական միջոցներով բավարար հագեցվածություն (համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն), ինչը դասավանդողներին և ուսումնառողներին հնարավորություն է տալիս ուսուցումը կազմակերպել նոր ժամանակների պահանջներին համապատասխան: Շատ կարևոր է նաև այն, որ Կենտրոնի բոլոր հարկերում ապահովված է անվճար WI-FI-ի հասանելիություն: Կենտրոնը ձեռք է բերել նաև eduroam համակարգին հասանելիություն, ինչը ևս մեկ անգամ փաստում է Կենտրոնի նորարական ձգտումների և հնարավորությունների մասին:

Կենտրոնի ֆինանսական միջոցներով 2020թ-ին բացվեց դահլիճ, որը բավարարում է նորագույն պահանջները և հագեցած է ժամանակակից տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն է ստեղծում այնտեղ կազմակերպել գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, հեռավար հանդիպումներ և այլն:

Covid-19-ով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում Կենտրոնի տեխնիկական միջոցներով հագեցվածությունը և համապատասխան մասնագետների պատրաստվածությունը թույլ տվեցին հաղթահարել ուսուցումը հեռավար ձևաչափով անցկացնելու դժվարությունները: Այս հարցում մեծապես օգնեց հեռավար ուսուցման համար հատկացված առանձին լսարանը, որտեղ առկա են հեռավար ձևաչափով դասընթացն անցկացնելու բոլոր տեխնիկական միջոցները: Այն դասախոսները, ովքեր տարբեր պատճառներով չէին կարող տանից վարել իրենց դասաժամերը, հակահամաճարակային բոլոր կանոնների պահպանմամբ դասընթացներն անցկացնում էին հենց այդ լսարանից:

Դիտարկելով Կենտրոնի ՈԱ բաժնի կազմակերպած միայն 2017-2019 և 2018-2020 ուսումնական տարիների առկա և հեռակա ուսուցմամբ մասնագիտությունների շրջանավարտների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, պարզ է դառնում, որ հարցվածների միջինում 77.1%-ը բավարարված է Կենտրոնի ռեսուրսների ապահովվությունից, ընդ որում՝ բազմաթիվ խմբերում այս ցուցանիշը հասնում է մինչև 96.5% ***(տե՛ս հավելված 7.1):***

Ինչ վերաբերվում է դասավանդողների բավարարվածությանը, ապա իրականացված հարցումներից ակնհայտ է դառնում, որ վերջիններիս 95.3%-ը բավարարված է Կենտրոնի ռեսուրսային ապահովությունից ***(տե՛ս հավելված 7.2):***

Սա միանգամայն վկայում է այն մասին, որ Կենտրոնն ունի ՄԿԾ-ների համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, այդ թվում հագեցված է անհրաժեշտ ռեսուրսներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

2018-2020թթ. Կենտրոնի ֆինանսատնտեսական ոլորտում իրականացվել են մի շարք կարևոր բարեփոխումներ՝ միտված Կենտրոնի առաքելությանը և նպատակներին համահունչ ֆինանսական քաղաքականության որդեգրմանը և գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Կենտրոնում մշակվել և հաստատվել է ԳԿՄԿ Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականություն, որի նպատակն է՝ Կենտրոնի ֆինանսական հոսքերի արդյունավետ բաշխումը գործունեության ռազմավարական նպատակների իրագործման և կրթության որակի ապահովման գծով միջոցառումների ապահովմանը համապատասխան: Նշված քաղաքականության շրջանակում հաստատվել է նաև ֆինանսական միջոցներին համապատասխան Կենտրոնի գործունեության պլանավորման և մշտադիտադիտարկման կարգը, որն ապահովելու է Կենտրոնի գործառույթների ամբողջական և պատշաճ իրականացումն ու տնտեսական կայունության ապահովումը՝ բյուջեի միջոցների առավել արդյունավետ բաշխման և պատշաճ վերահսկողական մեխանիզմների ներդրման միջոցով:

Վերոհիշյալ բարեփոխումների համատեքստում՝ ԳԿՄԿ 2019 և 2020 թվականների տարեկան ծախսերի նախահաշիվներում առանձին հոդվածներով սահմանվել են կրթության որակի ապահովման գծով համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստման, հետազոտական աշխատանքների

խրախուսման, գիտաժողովների մասնակցության գծով: Մասնավորապես, դասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման և գիտական հետազոտությունների խրախուսման գծով բյուջեի հատկացումները՝ 2019 թվականին 2018 թվականի համեմատ կրկնապատկվել են, իսկ 2020 թվականի բյուջեով 2019 թվականի համեմատ աճել են ավելի քան 5 անգամ: Արդեն սկսած 2020 թվականից յուրաքանչյուր տարվա բյուջեով գումար է նախատեսվում նաև ժամանակակից մասնագիտական գրականության ձեռքբերման համար ***(տե՛ս հավելվածներ 7.3, 7.4):***

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Կենտրոնում մշակվել և ներդրվել է **Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականություն**, որի նպատակն է՝ Կենտրոնի ֆինանսական հոսքերի արդյունավետ բաշխումը՝ գործունեության ռազմավարական նպատակների իրագործման և կրթության որակի ապահովման գծով միջոցառումների ապահովմանը համապատասխան:

Կենտրոնի գործունեության ֆինանսական պլանավորումն իրականացվում է բյուջետային գործընթացի միջոցով, որը հիմնվում է երկու հիմնական գործիքների վրա

- ֆինանսական պատասխանատվության կենտրոնների սահմանում,
- Կենտրոնի բյուջեի մշակում:

Կենտրոնի ֆինանսական պատասխանատվության կենտրոններն են՝ Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց ղեկավարները մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը կազմում և ֆինանսական բաժնին են ներկայացնում իրենց ղեկավարած ստորաբաժանման առաջիկա տարվա իրականացվելիք միջոցառումների պլանը, այդ միջոցառումների իրականացման համար պահանջվող ապրանքների և նյութերի ծախսերը, դրանց հիմնավորումները, միջոցառումների վերջնարդյունքները:

Կենտրոնի բյուջեն վերջինիս նպատակներին հասնելուն միտված տնտեսական կայուն զարգացման պլանի ֆինանսական արտահայտությունն է: Կենտրոնի կառավարման համակարգում բյուջեի կարևորությունը բնութագրվում է վերջինիս հիմնական գործառույթներով, որոնք հետևյալն են.

- գործառնությունների պլանավորում, որոնք ապահովում են Կենտրոնի գործունեության և զարգացման նպատակների իրագործումը,
- Կենտրոնի գործունեության տարբեր տեսակների և ստորաբաժանումների ընդհանուր կոորդինացում, ֆինանսական պատասխանատվության կենտրոնների և Կենտրոնի շահերի փոխհամաձայնեցում,
- բոլոր մակարդակների ղեկավարների խթանում իրենց ղեկավարած ստորաբաժանում երի առջև դրված նպատակներին հասնելու ուղղությամբ

- ընթացիկ գործունեության վերահսկողություն և պլանային կարգապահության ապահովում,
- գործունեության հետազոտություն. բյուջետավորումը նպաստում է Կենտրոնի գործունեության մանրամասն հետազոտությանը, ինչպես նաև ստորաբաժանումների միջև և Կենտրոնի վարչական կազմի հետ առկա փոխհարաբերությունները:

Բյուջետավորման նպատակներն են.

- Կենտրոնի կայուն զարգացման հայեցակարգի մշակում, այդ թվում՝
- Կենտրոնի ֆինանսա-տնտեսական գործունեության պլանավորում որոշակի ժամանակահատվածի համար,
- ռեսուրսների բաշխման օպտիմալացում,
- ստորաբաժանումների և ֆինանսական պատասխանատվության կենտրոնների գործունեության կոորդինացում,
- հաղորդակցությունների ապահովում՝ բյուջեի ցուցանիշների մասին տարբեր մակարդակի ղեկավարներին իրազեկում և դրանց հասանելության ապահովում,
- ստորաբաժանումների և դրանց ղեկավարների շահադրդում՝ Կենտրոնի զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ,
- ստորաբաժանումների գործունեության վերահսկողություն և գնահատում՝ փաստացի արդյունքների և բյուջետային նորմատիվների համեմատության միջոցով,
- ֆինանսական ռեսուրսների պահանջմունքների բացահայտում և դրամական հոսքերի օպտիմալացում:

Կենտրոնի ֆինանսական բաժնի կողմից մշտադիտարկում է իրականացվում բյուջեի միջոցների ծախսման նպատակայնության և արդյունավետության նկատմամբ: Սա թույլ է տալիս ժամանակին ճշգրտումներ մտցնել ծախսային ուղղություններում, անհրաժեշտության դեպքում կատարել ծախսային հոդվածների միջև վերաբաշխումներ:

ՀԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Կենտրոնում իրականացված բարեփոխումների համատեքստում՝ ԳԿՄԿ 2019 և 2020 թվականների տարեկան ծախսերի նախահաշիվներում առանձին հոդվածներով սահմանվել են կրթության որակի ապահովման գծով համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստման, հետազոտական աշխատանքների խրախուսման, գիտաժողովների մասնակցության գծով: Մասնավորապես, դասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման և գիտական հետազոտությունների խրախուսման գծով բյուջեի հատկացումները՝ 2019 թվականին 2018 թվականի համեմատ կրկնապատկվել են, իսկ 2020 թվականի բյուջեով 2019 թվականի համեմատ աճել են ավելի քան 5 անգամ: Արդեն սկսած 2020 թվականից յուրաքանչյուր

տարվա բյուջեով գումար է նախատեսվում նաև ժամանակակից մասնագիտական գրականության ձեռքբերման համար *(տե՛ս հավելվածներ 7.3, 7.4)*: Որդեգրած քաղաքականությունը լինելու է շարունակական և տարեցտարի ավելի ընդլայնվելու են որակի շարունակական բարելավման միջոցառումների շրջանակը և դրանց ֆինանսավորման ծավալը, ինչը թույլ կտա արդյունավետ կերպով իրագործել Կենտրոնի ՌԾ-ում նախատեսված նպատակները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Կենտրոնում վերամշակվել և 2019 թվականի սեպտեմբերի 13-ից ներդրվել է Կենտրոնի գործավարության և փաստաթղթաշրջանառության կարգ, որով սահմանված պահանջների հիման վրա է կազմակերպվում և իրականացվում ԳԿՄԿ ստորաբաժանումներում գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունն, այդ թվում էլեկտրոնային եղանակով: Նշված կարգով կանոնակարգվել են Կենտրոնում թղթակցության վարման կարգը, դիմումների և փաստաթղթերի կազմումը, ձևակերպումը, փաստաթղթերի ընդունման և քննարկման ժամկետները, ԳԿՄԿ ելքի գրությունների թղթակցությունը և ձևակերպումը, ԳԿՄԿ ստացված փաստաթղթերի նկատմամբ վերահսկողությունը և փաստաթղթերի հետագա պահպանությունն ու արխիվացումը:

Կենտրոնում գործում է նաև ներքին տեղեկատվական էլեկտրոնային ցանց և էլեկտրոնային դեկանատ, որոնք ապահովում են փաստաթղթաշրջանառության և ներքին ուսումնական գործընթացների արդյունավետ կառավարումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Կենտրոնի որդեգրած ֆինանսավորման նոր քաղաքականության շրջանակում արդեն իսկ 2019 և 2020թթ.-ի տարեկան ծախսերի նախահաշիվներում առանձին ծախսային հոդվածով գումար է հատկացվել առողջության և անվտանգության միջոցառումների համար *(տե՛ս հավելվածներ 7.3, 7.4)*:

Կենտրոնի շահակիցների կողմից դեռևս առողջության և անվտանգության հետ կապված որևէ դեպք չի արձանագրվել և ըստ այդմ էլ արձագանքները ևս բացակայում են:

Կենտրոնում գործում է բուժկետ, որն անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնություն է ցուցաբերում դրա կարիքն ունեցողներին: Կապված COVID-19 համավարակի տարածման հետ՝ Կենտրոնում ձեռնարկվել են բոլոր կանխարգելիչ միջոցառումները՝ վարակի տարածումը կանխելու ուղղությամբ, այդ թվում՝ ջերմաչափում, շենքի ախտահանում, ախտահանիչ նյութերի տեղադրում, տարածքում սոցիալական հեռավորության պահպանում:

Բացի այդ, մասնաշենքի բոլոր հարկերում՝ վերելակի կողքին, տեսանելի հատվածում փակցված է շենքից տարհանման սխեման՝ արտակարգ իրավիճակների դեպքում արդյունավետ տարհանում կազմակերպելու նպատակով:

Կարևոր է նաև նշել այն մասին, որ ԳԿՄԿ հիմնական աշխատողները օրենքով սահմանված կարգով հնարավորություն ունեն օգտվել սոցիալական փաթեթի հնարավորությունից՝ ի տարբերություն բուհերի, քանի որ ԳԿՄԿ-ն հանդիսանում է ՀՀ ԳԱԱ համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպություն: Բացի այդ աշխատողները մատչելի պայմաններով հնարավորություն ունեն օգտվել նաև ԳԱԱ համակարգում առկա հանգստյան տներից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող ամենաարդյունավետ մեխանիզմը՝ պարբերաբար վերջիններս շրջանում անցկացվող կրթական ծրագրից գոհունակության անանուն հարցումներն են, որն ապահովում է հստակ պատկերացում կազմել շահակիցների բավարարվածության աստիճանի վերաբերյալ: Ստորև ներկայացված հարցերն, օրինակ հնարավորություն են տալիս բացահայտել շրջանավարտների՝ ռեսուրսներով բավարարվածությունը.

- Ընդհանուր կրթաբլոկի առարկաներն ապահովված էին բավարար որակավորմամբ դասախոսական կազմով,
- Մասնագիտական բլոկի առարկաներն ապահովված էին բավարար որակավորմամբ դասախոսական կազմով,
- Ուսումնական լաբորատորիաները)մասնագիտացված լսարանները բավարար չափով հագեցված են ժամանակակից տեխնիկական սարքերով,
- Կրթական ծրագիրը ապահովված է մասնագիտական գրականությամբ, դասախոսությունների համառոտագրով և ուսումնամեթոդական այլ նյութերով:

Կրթության որակի ապահովման բաժինը 2017-2019 և 2018-2020 ուստարվա շրջանավարտների շրջանում անցկացված հարցումների տվյալների հիման վրա ներկայացրել է շրջանավարտների ռեսուրսներով բավարարվածության վերլուծություն ***(տե՛ս հավելված 7.1):***

Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինն իրականացրել է նաև դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում, որի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դասավանդողներն ընդհանուր առմամբ գոհ են Կենտրոնի տրամադրած ռեսուրսներից ***(տե՛ս հավելված 7.2, էջ 12-14):***

Կարևոր և գործուն մեխանիզմ է նաև պարբերաբար կազմակերպվող քննարկումները և հանդիպումները:

Ուսանողները հնարավորություն ունեն նաև մասնակցել ԳԽ-ի, ՈԱՄՀ-ի, ամբիոնների նիստերին, որտեղ կարող են բարձրաձայնել իրենց հուզող հարցերը:

Չափորոշիչ 7-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ԳԿՄԿ արդիական ենթակառուցվածքների առկայություն՝ անհրաժեշտ տեխնիկական հագեցվածությամբ (լսարաններ, լաբորատորիաներ, գիտաժողովի դահլիճներ, ներքին կառավարման և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ և այլ), • Հեռավար կրթական հարթակի և SS ռեսուրսների և ծառայությունների առկայություն, • Զբոսաշրջության ամրագրումների **ԱՄԱԴԵՈՒՍ** էլեկտրոնային համակարգի առկայություն՝ համապատասխան բաժնի ուսանողների ուսումնառության համար, • ԳԱԱ տարածքային և նյութատեխնիկական ռեսուրսների հասանելիություն, • Գիտական կազմակերպությունների բազայի առկայություն և հասանելիություն, • Ֆինանսական ռեսուրսների բաշխման հստակ մեխանիզմների առկայություն, • ՀՀ ամենախոշոր գիտական գրադարանի ծառայությունների հասանելիութուն
Թույլ կողմեր
• Ուսանողների թվաքանակի տատանումներն ըստ տարիների, ինչի հետ կապված առաջանում է նաև ֆինանսական հոսքերի անկայունություն, • Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիայի պակաս
Հնարավորություններ
• Հետազոտական համալսարանի ձևավորման լիարժեք հնարավորություն, • Կրթական և գիտական ոլորտներում արտերկրյա բուհերի հետ սերտ համագործակցության հնարավորություններ, • Դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն և դրամաշնորհային ֆինանսավորման հնարավորություններ
Վտանգներ
• ԳԱԱ կարգավիճակի հետ կապված օրենսդրական ոչ բարենպաստ նախագծի առկայություն, • Պետության կողմից հարկային քաղաքականության փոփոխության հեռանկար, երբ կրթական ծառայությունները կհարկվեն ԱԱՀ-ով, ինչ կբարձրացնի ուսման վարձավճարի չափը, • Ենթակառուցվածքների պետական ֆինանսավորման գումարների նվազման վտանգ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Նոր՝ արդի պահանջներին համահունչ մասնագիտական ծրագրերի կազմակերպում, ինչը կմեծացնի ուսանողների հետաքրքրվածությունը ԳԿՄԿ մագիստրոսական ծրագրերի հանդեպ, • Գործատուների և շրջանավարտների հետ սերտ փոխգործակցության հաստատում, որը թույլ կտա բացահայտել մասնագիտությունների գործնական ոլորտում առկա արդի պահանջները,և ըստ այդմ՝ կրթական ծրագրերում պարբերաբար համապատասխան փոփոխությունների իրականացում, • Ֆինանսական բուֆերի ձևավորում, ինչը թույլ կտա ունենալ բավարար ֆինանսական ռեսուրսներ անգամ ուսանողների թվաքանակի էական տատանումների պարագայում, • Ներքին ռեսուրսների վերլուծություն, ծախսերի օպտիմալացում

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ՉԱՓԱՆԻՇ: ***ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը***

Համաձայն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2019-2023թթ ՌԾ-ի՝ Կենտրոնն իր առջև խնդիր է դրել ակտիվացնել և բարձրացնել հասարակության տարբեր շահակից խմբերի շրջանում թափանցիկության և հասարակական պատասխանատվության մակարդակը: Այս ուղղությամբ կարևորագույն գործառույթներից են՝

- հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների և պահանջների ուսումնասիրությունը, դրանց համապատասխան լրացուցիչ և շարունակական կրթական նոր ծրագրերի առաջարկների ներկայացումը,
- Կենտրոնի գործունեության և կրթական տարբեր ծառայությունների, միջոցառումների պատշաճ ներկայացումն ու լուսաբանումը տարբեր հանրային հարթակներում, ներքին և արտաքին շահակիցների շրջանում,
- հասարակության հետ համագործակցության կապերի սերտացումը, սոցիալական կյանքի ամենատարբեր ոլորտների հետ գործընկերային հարաբերությունների ապահովումը,
- գործատու-Կենտրոն կապի մշտական ստեղծումը, նոր գործընկերների ձեռքբերումն ու առկա ցանկի ընդլայնումը,
- ԳԿՄԿ վարկանիշի բարձրացման ուղղությամբ տարբեր ցուցահանդեսների, սեմինարների, գիտաժողովների, գործատուների հետ անհատական և խմբային հանդիպումների, մասնավորապես՝ «Կարիերայի օր», «Աշխատանքային տոնավաճառ» և այլն, ինչպես նաև էքսկուրսիաների, փոխայցերի և այլ միջոցառումների կազմակերպումը,
- ԳԿՄԿ վարկանիշի բարձրացման, դրական հասարակական կարծիքի ուղղությամբ տարբեր աշխատանքների կազմակերպումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Շահակիցների հետ երկխոսությունը ենթադրում է ցանկացած արդյունավետ ձևաչափով շահակիցների և Կենտրոնի միջև բաց, երկկողմանի և անկեղծ շփման հնարավորության ստեղծում: ԳԿՄԿ ներքին և արտաքին շահակիցները մեծ ազդեցություն ունեն Կենտրոնի գործունեության վրա: Կենտրոնն ունի մշակված հստակ քայլեր, որոնց միջոցով կարողանում է շահակիցների հետ արդյունավետ երկխոսություն վարել:

Ունենալով շահակիցների լայն ընդգրկում՝ ապահովում է նրանց ակտիվ մասնակցությունը Կենտրոնի գործունեության տարբեր ոլորտներում, տարբեր ծրագրերին և միջոցառումներին: Իրականացվող յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ անցկացնելով գնահատման հարցում շահակիցների շրջանում՝ հնարավոր է դառնում մշտապես բարելավել գործող ծառայությունները և ապահովել թափանցիկություն, ապա նաև հաշվետվողականություն: Կենտրոնի պաշտոնական կայքում են զետեղված տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունները, իրականացվող ծրագրերի մասին տեղեկությունն ու վերլուծությունները, ինչի շնորհիվ հնարավոր է լինում ապահովել Կենտրոնի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ***(տե՛ս հավելված 1.1):***

Կարևոր են նաև դասախոսների պարբերական քննարկումները ամբիոնի վարիչների հետ, գիտական ղեկավարների հաշվետությունները ամբիոնի վարիչին և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կարևոր և պարտադիր սկզբունքներից է հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, որն ամրագրված է որակի ապահովման քաղաքականությամբ, ինչն էլ իր հերթին ապահովում է հաշվետվությունների, ընթացակարգերի, քաղաքականությունների և այլ փաստաթղթերի հասանելիություն շահակիցների շրջանում: Կենտրոնի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմներից է նաև Հանրային կապերի և կարիերային բաժնի կանոնակարգը, ինչպես նաև ԳԿՄԿ ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և հետադարձ կապի քաղաքականությունը:

Տեղեկատվության զգալի մասը շահառուներին հասանելի է դառնում պաշտոնական կայքէջի, սոցիալական ցանցերում ստեղծված էջերի (https://www.facebook.com/www.isec.am, https://www.facebook.com/ISECPRCareer, https://www.facebook.com/isec.nasra//) և խմբի հրապարակումների, ինչպես նաև ԶԼՄ-ի միջոցով: Կայքում հասանելի են Կենտրոնի գործունեությանն ուղղված բոլոր կարգերը, ընթացակարգերը, ընդունելության, քննությունների մասին համապարփակ տեղեկատվություն, կառուցվածքի, կրթական ծրագրերի, ամենատարբեր միջոցառումների, փոխհամագործակցությունների, միջազգային ծրագրերի և այլ գործընթացների մասին փաստաթղթեր: Հանրային կապերի և կարիերայի բաժնի կողմից մշտապես վերահսկվում, լուսաբանվում և հանրայնացվում են Կենտրում տեղի ունեցող կարևոր գործընթացները. նորություններն ու հայտարարություններն արտացոլվում են կայքի, սոց.ցանցերի, ինչպես նաև տեղական ԶԼՄ-ի միջոցով, որոնց հետ համագործակցությունն իրականացվում է ծավալուն արխիվի հիման վրա՝ ըստ որի համագործակցություն և անհրաժեշտ տեղեկատվություն է կիսվում գրեթե բոլոր կոնտակտային հասցեներով, հեռուստաալիքների, ռադիոալիքների, տպագիր և թվային մամուլի համապատասխան հարթակներում: ԶԼՄ արխիվային կոնտակները գերազանցում են 500-ը: Կենտրոնի պաշտոնական կայքէջում հասանելի է նաև ԳԿՄԿ տարբեր ստորաբաժանումների տվյալները, բաժնի պետերի, աշխատակիցների մասին տեղեկատվություն, համապատասխան փաստաթղթերը և կոնտակտային տվյալները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ներքին և արտաքին շահակիցների խմբերը տարբեր են, որոնց հետ հետադարձ կապն ապահովվում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Հասարակայնության և արտաքին շահակիցների հետ կապերի ապահովման հիմնական օղակներն են՝ Հանրային կապերի և կարիերայի բաժինը, Որակի ապահովման բաժինը, արտաքին կապերի բաժինը և ԳԿՄԿ ամբիոնները: Հասարակայնության հետ կապերի ամրապնդմանը նպաստում են նաև տարատեսակ ոչ ֆորմալ դասընթացները, կրթական ցուցահանդեսները, Expo-ները (Logos-expo, աշխատանքային տոնավաճառ, Կրթություն և կարիերա), կարճաժամկետ և երկարաժամկետ արտալսարանային սեմինարները,

մասնագիտացված դպրոցները, Կարիերայի կառուցման հմտությունները, որի շրջանակներում փոխհամագործակցության պայմանագրեր են կնքվել ՀՀ 5 խոշորագույն գործատուների հետ՝ Կոկա-Կոլա, Ռոսգոսստրախ Արմենիա, Բեթ քոնսթրաքթ, Գրանդ Քենդի, Ալեքս գրուպ և այլն:

Նմանատիպ դասընթացների և միջոցառումների վերաբերյալ մասնակիցների կարծիքների ամփոփումը, ֆոկուս-խմբային քննարկումները, սոցիալական էջերում հետևորդների թվի մշտապես ավելացումը, Կենտրոնի վերաբերյալ թողարկված տեսանյութերի և առդիոնյութերի դիտողականության աճի վերահսկումը, ԶԼՄ-ի հետ մշտական համագործակցությունը, ուղիղ եթերների և տարատեսակ հեռուստառադիո հաղորդումների ընթացքում ԳԿՄԿ աշխատակիցների և դասախոսների մասնակցության կազմակերպումը, ուսանող-դասախոս ոչ ֆորմալ շփումը օգնում է մշտապես բարելավել հանրային կապերի աշխատանքը: Իհարկե, ԳԿՄԿ համար առաջին գործատուն ԳԱԱ համակարգն է, որի տարբեր հետազոտական կազմակերպությունները պարբերաբար համալրվում են ԳԿՄԿ շրջանավարտներով, օրինակ՝ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում աշխատում է Կենտրոնի 10, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում՝ 3, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ 2, Արևելագիտության ինստիտուտում՝ 3, իսկ ՀՀ ԳԱԱ նախագահությունում՝ 4 շրջանավարտներ և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տարբեր բաժինները ևս կազմակերպում և իրականացնում են կրթական, տեղեկատվական, գիտական ծրագրեր և միջոցառումներ, որոնք իրենց հերթին նպաստում են կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետությանը: Կատարված ծրագրերի ավարտին կատարվում է մշտադիտարկում՝ մասնակիցների կարծիքների ուսումնասիրում, տպավորությունների գնահատում: Նման մեխանիզմի կիրառությունն արդյունավետ է կարծիքների հավաքագրման և հետագա աշխատանքների որակի բարձրացման ուղղությամբ:

Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և պարբերական վերանայումը ենթադրում է շարունակական և պարբերաբար ուսումնասիրություն, ինքնավերլուծություն և ինքնագնահատում, որի հիմնական նպատակն է կրթական ծրագրերի որակի բարձրացումը և արդյունավետության ապահովումը:

Շատ մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների հաղորդակցման հմտություններին՝ կազմակերպելով տարատեսակ դասընթացներ՝ «Ձմեռային դպրոց», «Կարիերայի կառուցման հմտությունները», «Արդի տարածաշրջանային հիմնախնդիրներ, մարտահրավերներ և հնարավորություններ», «Իրավաբանական դպրոց», «Ժամանակակից բիզնես. Մարտահրավերներ և հնարավորություններ», «Համաշխարհային քաղաքականություն», «Ապագայի Հայաստան», «Խորհրդարանական դիվանագիտություն», «Ինտելեկտուալ խաղեր», «Գործատուին ներկայանալու հմտություններ», «Հաղորդակցման հմտություններ» և այլ վերտառությամբ դպրոցներ (*տե՛ս https://www.facebook.com/isec.nasra*):

Դասընթացներին մասնակցում են ինչպես Կենտրոնի շրջանավարտները, մագիստրոսները, այնպես էլ այլ բուհերի ուսանողներ, որոնց զգալի մասը հետագայում իրենց մագիստրոսական կրթությունը շարունակում է ԳԿՄԿ-ում:

2015-2020թթ.-ին կազմակերպվել է 5 Ձմեռային դպրոց, յուրաքանչյուր տարի ավելի քան 20 սեմինար-հանդիպում: Կարևոր է նշել նաև, որ տարեցտարի դասընթացների քանակը զգալի ավելացել է, բացառությամբ վերջին՝ 2020 թվականի՝ պայմանավորված համավարակի և երկրում ստեղծված իրավիճակի հետ:

ԳԿՄԿ-ում գիտամանկավարժական որակյալ կադրերի պատրաստմանը զուգահեռ բարձր ուղենիշի վրա է պահվում Կենտրոնի ունեցած դերն ու նշանակությունը արժանապատիվ քաղաքացի դաստիարակելու ձևորման ուղղությամբ, որոնք իրականացվում են մի շարք միջոցառումների, կրթական արտալսարանային ծրագրերի, նախագծերի միջոցով:

ԳԿՄԿ շրջանավարտներն ու ուսանողներն անվճար հիմունքներով, նախապես ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա, օգտվում են դասական երաժշտական միջոցառումներից, թատերական տարատեսակ ներկայացումներից: Կենտրոնում ակտիվ կերպով կազմակերպվում են այցեր գիտական կենտրոններ, ՀՀ պատմամշակութային և տեսարժան վայրեր:

Հանրային կապերի և կարիերայի բաժինը ամեն տարի մեծ բարեգործական ծրագիր է իրականացնում սահմանամերձ որևէ գյուղում, ուսանողների և ԳԿՄԿ տրամադրած միջոցներով օգնություն տրամադրում անապահով ընտանիքներին, մանկապարտեզին, այցելում նաև տեղի զորամաս:

ԳԿՄԿ հանրային կապերի և կարիերայի բաժինը ամեն տարի կազմակերպում և ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տարբեր կրթական ցուցահանդեսներին, «Կարիերայի օրերին», որի ընթացքում ձեռք են բերվում նոր համագործակցություններ և գործընկեր կազմակերպություններ ԳԿՄԿ ուսանողների գործնական գիտելիքների ամրապնդման, իսկ հետագայում թափուր հաստիքների համալրման ուղղությամբ *(տե՛ս https://www.isec.am/articles/news.html):*

Չափորոշիչ 8-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ԳԿՄԿ ղեկավար կազմի, ԳԽ-ի, վարչական աշխատակազմի, ստորաբաժանումների ղեկավարների գործունեության և թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, • ԳԿՄԿ պաշտոնական կայքի առկայություն, • Մշտապես թարմացվող տեղեկատվության ապահովում, • Ուսումնական և այլ գործընթացների վերաբերյալ հասանելիություն, • Կազմակերպվող դասընթացների, դպրոցների, տարատեսակ միջոցառումների հանրայնացում և տարածում շահակիցների շրջանում, • Միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն, ներկայացում և լուսաբանում, • Շրջանավարտների տվյալների հավաքագրում, արխիվի ստեղծում, • Ֆոկուս-խմբային քննարկումների կազմակերպում, լուսաբանում, • Սոցիալական տարբեր ցանցերում հետևորդների մեծ թիվ,

• Խորհրդատվության տրամադրում ԳԿՄԿ ներքին և արտաքին շահակիցներին, • ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի, ԳԿՄԿ տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցություն • Կամավորական աշխատանքի խրախուսում, • Դպրոցների, միջին մասնագիտական կառույցների հետ սերտ համագործակցություն, դասավանդման փորձի կիրառում, • Արտաքին շահակիցների համագործակցության առկայություն, • Հետադարձ կապի ապահովման գործող մեխանիզմների առկայություն, • Կենտրոն-ուսանող սերտ կապ, • Ուսանողական միջոցառումների կազմակերպում՝ նաև շրջանավարտների մասնակցությամբ, • Ոչ ֆորմալ դասընթացների և պրակտիկաների ապահովում
Թույլ կողմեր
• ԳԱԱ ինստիտուտներում տեղակայված ԳԿՄԿ ամբիոններում կազմակերպվող միջոցառումների ոչ բավարար լուսաբանում, • Գովազդի պակաս
Հնարավորություններ
• Պետական և միջազգային տարատեսակ ծրագրեր, նախագծեր, դրամաշնորհներ
Վտանգներ
• Ֆորսմաժորային իրավիճակներ
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• ԳԱԱ ինստիտուտներում տեղակայված ԳԿՄԿ ամբիոնների հետ տարվող աշխատանքների բարելավում, առկայության դեպքում՝ կառույցների հանրային կապերի ստորաբաժանումների հետ համագործակցության ընդլայնում, • Գովազդային և մուլտիմեդիա նյութերի ավելացում, կրթական էքսպոների պարտադիր մասնակցություն, ՋԼՄ-ների հետ տարվող աշխատանքների բարելավում, • Ֆորսմաժորային իրավիճակներում աշխատանքների հեռավար կազմակերպում

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԳԿՄԿ-ն, հիմքը ընդունելով իր ռազմավարական ուղղությունները, հետագա հինգ տարիների ընթացքում իր գործունեությունը կուղղի հետևյալ խնդիրների լուծմանը՝

- Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում:
- Միջազգային ծրագրերում ԳԿՄԿ-ի մասնակցության ընդլայնում, եվրոպական գիտակրթական տարածքին Կենտրոնի ինտեգրման ամբողջականացում, Կենտրոնի

միջազգայնացում:

- Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում:
- Ուսանողական և ՊԴ համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում:
- Միջազգային ծրագրերի ֆինանսավորման ավելացում, միջազգային ու եվրոպական ֆինանսավորման ներգրավում դրամաշնորհների տեսքով:
- Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում:

ՀԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԳԿՄԿ փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, նպատակները և խնդիրները սահմանվում են բուհի՝ 2014-2018թթ ՌԾ-ում և 2019-2023թթ ՌԾ-ում և կից գործողությունների ծրագրում: Հիմք ընդունելով ՈԱԱԿ փորձագիտական խորհրդատվությունը՝ ԳԿՄԿ-ն մշակել է նաև Միջազգայնացման ռազմավարություն: ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարությունը մշակվել է հարցման հիման վրա. ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային գործընթացները և միջազգայնացման ներուժը ուսումնասիրելու նպատակով, ԳԿՄԿ արտաքին կապերի բաժինն անցկացրել է հարցում, որի նպատակն էր, օգտագործելով հարցման միջոցով ստացված տվյալների վերլուծության արդյունքները, նպաստել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում միջազգային շարժունության պատուհանների նոր հնարավորությունների ստեղծմանը, խթանել միջազգային համագործակցությունը կրթության ոլորտում: ԳԱԱ գիտական կազմակերպությունների ընտրությունը կատարվել է համագործակցության համաձայնագրերի հիման վրա՝ կնքված ԳԿՄԿ և համապատասխան գիտական կազմակերպության միջև, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ համապատասխան ամբիոնը: Հարցաթերթիկների արդյունքներն ամփոփվել են հաշվետվությամբ: **Միջազգայնացման ռազմավարությունը** ներկայացվել է ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների քննարկմանը, այնուհետև՝ վերջնական հաստատվել:

ԳԿՄԿ-ն միջազգային համագործակցությունն ընդլայնել է 2016թ -ին՝ մեկնարկելով ուսանողների, ՊԴ և վարչական կազմերի փոխանակում Էրազմուս+ KA1 ծրագրի շրջանակներում: Այժմ գործում է փոխանակման 8 ծրագիր, իսկ տարբեր ծրագրերի շրջանակներում ԳԿՄԿ-ն համագործակցել և համագործակցում է առավել քան 40 օտարերկրյա բուհերի և գիտակրթական հաստատությունների հետ ***(տե՛ս հավելված 9.1):*** Վիճակագրական տեսանկյունից, յուրաքանչյուր տարի ԳԿՄԿ-ն շահում է հայտ ներկայացրած Էրազմուս+ KA1 ծրագրերի մոտ 30%-ը:

Ընդհանուր առմամբ, բուհում ուսանողների, ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի փոխանակումները նպաստել են ոչ միայն անհատական առաջընթացին և փորձառությանը,

այլ նաև բուհի ընդհանուր կառավարման, կրթական բովանդակության միջազգայնացմանը, ինչպես նաև բուհի միջազգային ճանաչելիության բարձրացմանը: ԳԿՄԿ ամբիոնների կողմից վերամշակված մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման հիմքում ընկած է նաև գործընկեր բուհերի փորձի ուսումնասիրությունը և բենչմարքինգը ***(տե՛ս հավելվածներ 3.4, 3.5, 3.6):***

ԳԿՄԿ-ին հաջողվել է մեծամասամբ իրականացնել ԳԿՄԿ և՛ նախկին, և՛ գործող ՌԾ-ներով, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցով սահմանված միջազգայնացմանը վերաբերվող ակնկալվող արդյունքները՝ ապահովելով միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացում, ԳԿՄԿ ուսանողների, ՊԴ կազմի, վարչական աշխատակիցների, ասպիրանտների և շարժունության հնարավորություններ: Միջազգային փոխանակման ծրագրերի առկայությունը խթանում է նաև ուսանողների առաջադիմությունը, հետազոտական և հասարակական ակտիվությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտը համակարգվում է ԳԿՄԿ ՌԾ-ով՝ **Միջազգայնացման ռազմավարության**, Արտաքին կապերի բաժնի կանոնադրության և հաստատված պաշտոնների անձնագրերի համաձայն ***(տե՛ս հավելված 9.2):*** Ինչպես նախատեսվում էր ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի 35-րդ կետով, ստեղծվել է ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների ցանց, որոնց հետ բաժինը ակտիվորեն համագործակցում է միջազգայնացման գործընթացն առավել սահուն դարձնելու նպատակով, որը և լրացնում է արտաքին կապերի աշխատակիցների սակավ թիվը ***(տե՛ս հավելված 9.3):***

Միջազգայնացման առումով օրինակելի ամբիոն է բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը, որը նշանակել է արդեն իսկ երկու միջազգայնացման պատասխանատու՝ միջազգային կրեդիտային շարժունության և կարողությունների զարգացման ծրագրերի համակարգման նպատակով:

Տվյալ պահին ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կայքէջը ԳԿՄԿ առավել ծավալուն կայքէջն է՝ բաղկացած 4 մասից, որը տրամադրում է բազմակողմանի և համընդգրկուն տեղեկատվություն ԳԿՄԿ միջազգային գործընթացի, Կենտրոնում առկա ծրագրերի մասին, և որտեղ ներկայացված են միջազգայնացման գործընթացին նպաստող բոլոր փաստաթղթերը, միջազգային և տեղական գործընկերները և այլն: ԳԿՄԿ առանձնահատկությունն այն է, որ կարողությունների զարգացման և կրեդիտային շարժունության յուրաքանչյուր ծրագրի համար մշակվում է առանձին կայքէջ, որտեղ բոլորը կարող են գտնել տեղեկատվություն տվյալ ծրագրի մասին, կարդալ համապատասխան նորությունները, հայտարարությունները, պրեզենտացիաները և հաշվետվությունները, որոնք բարձրացնում են բաժնի գործունեության թափանցիկությունը և տրամադրում

տեղեկատվության ամբողջական հասանելիություն *(տես՝ https://www.isec.am/structure/department/international-relations/projects.html/erasmus-plus)*:

Վիճակագրական թվերը նույնպես փաստում են բաժնի գործունեության ակտիվ լուսաբանման և տեղեկատվության հասանելիության մասին՝

- 2017թ. բաժնի տրամադրած հայտարարությունները և նորությունները կազմել են ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 60%-ը:
- 2018թ. բաժնի տրամադրած հայտարարությունները և նորությունները կազմել են ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 50%-ը:
- 2019թ. բաժնի տրամադրած հայտարարությունները և նորությունները կազմել են ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 80%-ը:

Ծրագրով վերադառնալուց հետո ուսանողները ներկայացնում են ԳԿՄԿ-ում հաշվետվություն՝ օտարերկրյա բուհում իրենց ուսումնառության գործընթացի մասին: Սույն գործընթացի կանոնակարգման և ներդաշնակեցման նպատակով 2020թ. մշակվել և ներդրվել է Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ուսանող մասնակիցների հարցման ընթացակարգ, որի նպատակն է աջակցել ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներին և Արտաքին կապերի բաժնին՝ վերլուծելու և վերհանելու ընտրված դասընթացների առավելություններն ու թերությունները և ապագայում կատարել առավել թիրախավորված ընտրություն, ինչպես նաև ներդնել դասավանդման առաջավոր փորձը և նոր թեմաներ համապատասխան ամբիոնում: Ավելին՝ Արտաքին կապերի բաժնի 2021թ. աշխատանքային պլանով նախատեսվում է մշակել միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ասպիրանտ մասնակիցների հարցման ընթացակարգը՝ այսպիսով ապահովելով երկու կրթափուլերի կապակցվածությունը այս տեսանկյունից:

ՊԴ/վարչական կազմը նույնպես ներկայացնում է հաշվետվություն՝ օտարերկրյա բուհում իրականացրած ծրագրի, հետագա համագործակցության, ձեռք բերված պայմանավորվածությունների, առաջիկայում նախատեսված անելիքների, բենչմարքինգի և ցանկացած այլ ձեռքբերումների վերաբերյալ, սակայն ՊԻԳԲ շրջափուլն ապահովելու նպատակով Արտաքին կապերի բաժնի 2021թ. աշխատանքային պլանով նախատեսվում է մշակել ԳԿՄԿ ուսանողների, պրոֆեսորադասախոսական եւ վարչական աշխատակազմի շարժունության կանոնակարգ:

Իրականացվող գործառույթների ՈԱ նպատակով բաժինն առաջնորդվում է համագործակից բուհերի հետ կնքվող պայմանագրերի պահանջներով: Բացի այդ, միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի մասնակիցների շրջանում կազմակերպել էր հարցում, որտեղ հարցման մասնակիցները նշել են, թե ինչպես են գնահատում իրենց շարժունության կազմակերպման գործում ամբիոնի միջազգայնացման

պատասխանատուի աշխատանքը և արտաքին կապերի բաժնի աշխատանքը: Այս հարցին տրված պատասխանները՝ ըստ պատասխանողների թվի հաճախականության, ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

	Ամբիոնի միջազգայնացման պատասխանատուի աշխատանքը	Արտաքին կապերի աշխատանքը
Շատ լավ	4	5
Լավ	2	1

Բացի այդ, դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցման արդյունքերի վերլուծությունը ցույց է տվել, որ «Գիտակրթական միջազգային կենտրոնի միջազգային կապերի ընդլայնում, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության խթանում» հարցին պատասխանելիս՝ «Ծանոթ եմ» պատասխանը նշել է հարցված դասախոսների 47,62%-ը, իսկ «Մասամբ եմ ծանոթ» տարբերակն ընտրել է հարցվածների 42,86%-ը, մնացած 9,52%-ը՝ «Դժվարացել է պատասխանել», իսկ միջազգային ծրագրերի իրազեկվածության մասով հարցվողների 57,1%-ը պատասխանել է, որ տեղյակ է, 23,8%՝ մասամբ տեղյակ, 4,8%՝ տեղյակ չի, իսկ 47,3%-ը դժվարացել են պատասխանել:

Մասնակիցների պատասխաններից պարզ է դառնում, որ ըստ նրանց Կենտրոնում իրականացվող թվարկված գործընթացներից ամենաթափանցիկ գործընթացներից մեկը միջազգային ծրագրերի իրականացումն է՝ 71.4%: Կենտրոնի տնօրինության և վարչական մասի աշխատանքի գնահատման մասով երկրորդ տեղում Արտաքին կապերի բաժնի աշխատանքն է, որին տրված գնահատականների միջին արժեքը 3,87 է ***(տե՛ս հավելված 1.2):***

ՀԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԳԿՄԿ և՛ նախկին, և՛ գործող ՌԾ գործողությունների պլանով, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցով նախատեսվում էր խթանել միջազգային գիտակրթական համագործակցությունը՝ մեկնարկելով շարժունության ծրագրեր ուսանողների, աշխատակազմի, ՊԴ կազմի փոխանակման համար, ավելացնել համալսարանի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերի թվաքանակը: Նշյալ բոլոր ուղղություններով բուհն արձանագրել է նշանակալի ձեռքբերումներ, որոնք ներկայացնում ենք ստորև՝ վիճակագրական տվյալների տեսքով.

Ներգնա և արտագնա շարժունություն

Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2015	2016	2017	2018	2019	2020
Պայմանագրերի թիվը	14	18	25	24	33	50
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	1	6	11	15	37	0

Այցելություններ/գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2015	2016	2017	2018	2019	2020
Այցելություններ/գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	0	9	12	6	13	0

Եթե 2012-2016թթ. ընթացքում Գիտակրթական միջազգային կենտրոն եղել է 11 այցելություն արտասահմանից, ապա 2017-2019թթ. ընթացքում արտասահմանից ԳԿՄԿ այցելել են 31 ՊԴ/վարչական կազմ:

Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2015	2016	2017	2018	2019	2020
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	0	8	2	14	8	0
ԳԿՄԿ-ում սովորող օտարերկրյա ուսանողների թիվ					2	0

Մինչ 2016թ. ԳԿՄԿ ուսանողները արտասահմանում ուսանում էին իրենց սեփական նախաձեռնությամբ և այդ ուղղությամբ որևէ վիճակագրական տվյալներ չի հավաքագրվել, իսկ 2016 թվականից ԳԿՄԿ ուսանողները ուսանում են միջբուհական համաձայնագրերի հիման վրա:

*Բացի այդ, 2015-2019թթ. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին մասնակցել են՝

- ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի 6 ասպիրանտ
- ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների 4 ասպիրանտ

Բոլոր ցուցանիշներով գրանցվել է կայուն աճ, այնուամենայնիվ, համավարակով պայմանավորված՝ 2020թ.-ին չեղարկվել են շարժունության բոլոր ծրագրերի իրականացումը, սակայն բաժինը շարունակել է արդյունավետորեն գործել՝ մշակելով հիմնարար փաստաթղթեր և կնքելով 17 նոր համագործակցության համաձայնագիր և հուշագիր, որ կազմում է ընդհանուր կնքված համաձայնագրերի և հուշագրերի 34%-ը:

Արդյունքում՝ 2021-2023թթ համար միջինստիտուցիոնալ համաձայնագրերով արդեն իսկ հաստատված են շարժունության հետևյալ թվերը՝

	ասպիրանտ	Մագիստրանտ	դասախոսական կազմ՝ դասավանդման նպատակով	դասախոսական կազմ՝ վերապատրաստման նպատակով
ԳԿՄԿ → օտարերկրյա գործընկեր բուհեր	**10**	**12**	**17**	**4**
օտարերկրյա գործընկեր բուհեր → ԳԿՄԿ	**3**	**3**	**11**	**2**

Առանձնահատուկ պետք է նշել, որ շարժունության ծրագրերի մասնակից ԳԿՄԿ դասախոսները և ուսանողները առաջատար են ՀՀ-ում իրենց օտարերկրյա համաղեկավարների հետ տպագրված համատեղ գիտական աշխատությունների թվով ***(տե՛ս հավելված 9.4):***

Արտաքին կապերը նաև ակտիվորեն լուսաբանում է և կիսվում է ձեռք բերված փորձով, գիտելիքներով և քաղած դասերով և՛ տեղական, և՛ միջազգային հարթակներում, որոնք արտացոլված են բաժնի հաշվետվություններում ***(տե՛ս հավելված 9.5):***

ԳԿՄԿ-ն նաև փորձում է դիվերսիֆիկացնել շարժունության ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները և այդ ոլորտում արդեն իսկ կան հաջողություններ՝

- Լեհաստանի WSB համալսարանը «Prom-international mobility of PhD students and academic staff» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի հատկացնում է մեկ ասպիրանտի տեղ,
- Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության հետ ակտիվ համագործակցության շնորհիվ լավագույն արևելագետ ուսանողներին հնարավորություն է ընձեռում մեկնել ԱՄԷ, շրջագայել տեղի գիտակրթական կենտրոններում և ծանոթանալ նրանց կրթական համակարգին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցով սահմանված հիմնական ինստիտուցիոնալ ձեռքբերումներն են:

- 2017թ. ԳԿՄԿ-ն և ՀՀ պետական կառավարման ակադեմիան ստորագրել են համատեղ հեռավար մագիստրոսական ծրագրի իրականացման համաձայնագիր «Կառավարում» մասնագիտության «Գործարար վարչարարություն (Կառավարում)» կրթական ծրագրով, ընդունել են ուսանողների երեք հոսքը այս մասնագիտությամբ: Տվյալ պահին ԳԿՄԿ-ն և ՊԿԱ-ն ՀՀ-ում միակ բուհերն են, որոնց ԿԳՄՍ հրամանով շնորհվել է հեռավար ուսուցմամբ կրթություն կազմակերպելու իրավունք՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» մասնագիտության գծով: /ԳԿՄԿ բարելավման պլանի 3-րդ ենթակետ/
- Կնքվել է կրկնակի դիպլոմի շնորհման համաձայնագիր WSB ակադեմիայի հետ (Լեհաստան) «Կառավարում» մասնագիտության գծով: / ԳԿՄԿ բարելավման պլանի 39-րդ կետի 4-րդ ենթակետ/
- Կնքվել է կրկնակի դիպլոմի շնորհման համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ (Իտալիա) «Ֆինանսական վարչարարություն» և «Շուկայաբանություն և որակ» մասնագիտություններով: Անհրաժեշտ է նշել, որ այս ծրագրի իրականացման համար արդեն իսկ առկա է շահած Էրազմուս+ շարժունության ծրագիր, որն ապահովում է ծրագրի իրականացման մեկնարկը: / ԳԿՄԿ բարելավման պլանի 39-րդ կետի 4-րդ ենթակետ/
- Կնքվել է ցանցային համագործակցության պայմանագիր՝ առցանց դասընթացների միջոցով կրթական ծրագրերի իրականացման մասին Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի հետ: Լրացուցիչ կրթության համատեքստում Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի

25 ուսանող գրանցվել է բարձրագույն տնտեսագիտական դպրոցի առցանց դասընթացներին և, բարեհաջող ավարտելով, ստացել հավաստագրեր, այնուհետև ԳԿՄԿ-ն մասնակցեց «eLearning Stakeholders and Researchers Summit» (eSTARS 2020) երրորդ միջազգային գիտաժողովին, որը բարձրագույն տնտեսագիտական դպրոցը կազմակերպում է՝ համագործակցելով «Coursera» կրթական հարթակի հետ:

- Նույն համալսարանի հետ ԳԿՄԿ-ն նաև կնքել է հեռավար կրթության զարգացման ոլորտում գործընկերության համաձայնագիր, որի շրջանակներում ԳԿՄԿ-ի ՊԴ կազմին անվճար հիմունքներով հնարավորություն է ընձեռնվել մասնակցել «Образовательный интенсив НИУ ВШЭ U4U Online 2020» վերապատրաստման եզակի ծրագրին, որի արդյունքում 9 դասախոս ստացել են մասնակցության հավաստագիր և մեկ դասախոս ստացել է որակավորումների բարձրացման հավաստագիր ***(տես՝ հավելված 9.6):***
- ԳԿՄԿ-ն դարձել է «EURAXESS՝ գիտնականները շարժման մեջ» եվրոպական ցանցի կոնտակտային կազմակերպություն. «EURAXESS» ցանցը Եվրահանձնաժողովի առանցքային նախաձեռնություններից է, նպատակ ունենալով նպաստել գիտնականների շարժողությանը և կարիերայի զարգացմանը՝ ըստ այդմ խթանելով եվրոպական գիտական տարածքի զարգացումը:
  https://www.euraxess.am/armenia/armenian-network
- ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը նշանակվել է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) հոգաբարձուների խորհրդի անդամ:
  http://armenic.am/հոգաբարձուների-խորհուրդ/
- ԳԿՄԿ միջազգային գործունեության հանրայնացում՝ 2019թ. Էրազմուս+ ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերին ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը ներկայացրեց Էրազմուս+ նմանատիպ ծրագրերի «շահագործման» ուղիները, իսկ այնուհետև «Բուհերում աշխատակազմի միջազգային շարժունության խթանումը» խորագրով տարածաշրջանային սեմինարի շրջանակներում ներկայացրեց անձնակազմի շարժունության ձեռքբերումներն ու մարտահրավերները ԳԿՄԿ տեսանկյունից:
- «Ինֆորմատիկա» Ե.13.04 մասնագիտությամբ իրականացվել է գիտական աստիճանաճանաշնորհում՝ հայկական և ֆրանսիական դիպլոմների շնորհմամբ կրթության երրորդ մակարդակում:
- 2015-2020թթ. ընթացքում կնքվել է միջազգային և արտաքին համագործակցության պայմանագրերի, հուշագրերի և համաձայնագրերի մոտ 70%-ը ***(տե՛ս հավելված 9.7):***

Կարողությունների զարգացման ծրագրեր՝

- «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման Էրազմուս+ ծրագիր

Բնապահպանության ոլորտում միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական լաբորատորիան ծրագրի հիմնական շոշափելի արդյունքներից է, որը

տարիներ շարունակ սահմանելու է հետբուհական կրթության որակի չափանիշները: Ավելին՝ լաբորատորիան հասանելի կդարձնի ժամանակակից լաբորատորայի ենթակառուցվածքները և հնարավորություն կտա իրականացնելու տարբեր նախագծեր համալսարանների և արտաքին շահառուների միջև: Արդեն իսկ ձեռք է բերել գերժամանակակից էլեկտրոնային մանրադիտակ ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» ամբիոնի համար

- Կատարվել է ԳԿՄԿ «Բնապահպանության և բնօգտագործում» մագիստրոսական կրթական ծրագրի դասընթացների բենչմարքինգ գործընկեր համալսարանների դասընթացների հետ՝
- Իրականացվել է ՀՀ-ում բնապահպանական կրթության ՍՎՈԹ վերլուծություն
- Մշակվել են բնապահպանական կրթության բարելավմանն ուղղված առաջարկներ:

2020թ.-ի հունվարից ԳԿՄԿ-ն մասնակցում է կարողությունների զարգացման նոր Էրազմուս+ ծրագրին՝ «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT):

Ընդհանուր առմամբ, միջազգային պայմանագրերի չգործելու հիմնական պատճառներից է տվյալ պայմանագրով ֆինանսական հատկացումների բացակայությունը: Փորձը ցույց է տալիս, որ ակտիվ գործում են հիմնականում միջազգային դրամաշնորհային ծրագրերը: Օրինակ, ակտիվ գործում է ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ուսանողների և ՊԴ կազմի փոխանակման ծրագրերը: Վերջին տարիներին նաև մի քանի հուշագրեր անվավեր ճանաչվեցին, քանի որ համագործակցության եզրեր ի վերջո հնարավոր չեղավ տարբեր հիմքերով ***(տե՛ս հավելված 9.8):***

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԳԿՄԿ-ն ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար տարբեր միջոցառումներ է ձեռնարկում: Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար ներկայացված է ***հավելված 9.9-ում:***

ԳԿՄԿ բարելավման պլանի 39-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն 2018թ.-ին Արտաքին կապերի բաժինը անցկացրել է կարողությունների գնահատում՝ ամբիոններից խնդրելով ներկայացնել այն առարկաների ցանկը, որոնք կարող են դասավանդվել օտար լեզվով՝ մասնավորապես անգլերեն լեզվով ***(տե՛ս հավելված 9.10):*** Այնուհետև պիլոտային կարգով այն ամբիոններում, որտեղ առկա էին միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր, ներդրվել է օտար լեզվով դասավանդվող մեկ դասընթաց՝ սահմանելով տարբերակված ժամավճարային մոտեցում, իսկ դասընթացների ցանկն այնուհետև ընդլայնվել է ***(տե՛ս հավելված 9.11):***

2019թ.-ին ՈԱ բաժինը կազմակերպեց ֆոկուս խմբային քննարկում օտար լեզվով դասավանդող դասախոսների հետ: Քննարկման հիմանական նպատակն էր հասկանալ, թե

որքանով է արդյունավետ օտար լեզվով դասավանդումը և առաջացած խնդիրների լուծման համար ինչ հնարավոր առաջարկներ կան ***(տե՛ս հավելված 9.12):***

2020-2021 ուստարում՝ համավարակով պայմանավորված, դադարեցվել է օտար լեզվով դասավանդումը՝ բացառությամբ երկու դասընթացի՝ հաշվի առնելով այն, որ տվյալ ուսումնական տարում այլևս չի նախատեսվում շարժունության ծրագրեր իրականացնել և, քանի որ ուսումնական գործընթացը ամբողջովին հեռավար տարբերակով էր իրականացվում, որոշում կայացվեց ուսանողներին լրացուցիչ սթրեսի չենթարկել: Դրա փոխարեն Արտաքին կապերի բաժինը իրականացրեց մեկ այլ նախաձեռնություն՝ սկսվեց մշակվել այն դասընթացների հակիրճ նկարագրությունը, որոնք կարող են անգլերեն դասավանդվել օտարերկրյա դիմորդների առկայության դեպքում: Ուղեցույցն անընդհատ համալրվում է նոր դասընթացներով և նախատեսվում է վերջնական տեսքի բերել սույն ուստարվա ավարտին ***(տե՛ս հավելված 9.13):***

ԲՈՒՀ-ի ինչպես ուսանողների, այնպես էլ աշխատակիցների (ուսումնաօժանդակ և ՊԴ կազմի) անգլերենի իմացությունը բարելավելուն և մոտիվացիան բարձրացնելուն անխոս նպաստում են միջազգային փոխանակման ծրագրերի ներգրավվածությունը, քանի որ մասնակցության համար համագործակից բուհերի կողմից հիմնականում պահանջվում է նվազագույնը անգլերենի իմացության B1 մակարդակի համապատասխան վկայական:

ԳԿՄԿ բարելավման պլանի 40-րդ կետի համաձայն 2017-18 ուստարում ՀՀ ԳԱԱ դասախոսական ու վարչական աշխատակազմի վերապատրաստման ծրագրի շրջանակներում օտար լեզուների ամբիոնի և ՈԱ բաժնի կողմից անցկացված հարցման արդյունքների հիման վրա անցկացվեց ՊԴ կազմի օտար լեզվի (անգլերեն) թեստավորում և այնուհետև վերապատրաստում:

2020թ.-ին անցկացվեց առցանց թեստավորում ((ՊԴ/վարչական կազմ, առկա) հեռակա սովորող մագիստրոսներ, ասպիրանտներ) տարբեր օտար լեզուների իմացության մակարդակը որոշելու համար, որի հիման վրա կազմվել է ՊԴ և վարչական կազմին 2020-21թթ. օտար լեզվով (անգլերեն) անվճար հավելյալ դասընթացների ժամանակացույցը, ընդ որում՝ կից ներկայացված աղյուսակում ներկայացված են ուսանողների օտար լեզվի իմացությունը Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի վեց մակարդակի համաձայն: Արդյունքում գրանցվել է և՛ ՊԴ, և՛ վարչական կազմերի անգլերեն լեզվի իմացության աճ: Մասնավորապես՝ ՊԴ կազմի շրջանակներում A1 մակարդակի լեզվի տիրապետողների թիվը 2020թ -ին 0% է 2018թ.-ի 7 հոգու հետ համեմատած, իսկ A2 մակարդակի տիրապետողների թիվը նվազել է 82.6%-ով՝ կազմելով 7 հոգի՝ ի տարբերություն 2018թ.-ի 23 հոգու: Առավել մեծ փոփոխություն գրանցվել է B2 մակարդակում՝ 1 հոգի նման մակարդակ է գրանցել 2018թ.-ին, իսկ 2020թ.-ին արդեն 30 հոգի: Լեզվի իմացության C1 մակարդակում նույնպես դրական աճ է գրանցվել՝ 20%-ի չափով:

Ինչ վերաբերվում է ուսանողների օտար լեզվի իմացության թեստավորմանը, այն առաջին անգամ անցկացնվել է միայն առկա և հեռակա համակարգում սովորող առաջին կուրսի ուսանողների համար, սակայն այսուհետ կրելու է մշտական բնույթ, ուստի՝ միայն երկու տարի անց հնարավոր կլինի արտացոլել լեզուների իմացության իրական պատկերը՝

Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի համաձայն: Սույն գործողությունը արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել օտար լեզվի պարտադիր թեստավորման իրականացման մեխանիզմները և ՊԴ/վարչական կազմերի և ուսանողական համակազմի համար ***(տե՛ս հավելված 9.14):*** Անհրաժեշտ է նշել, որ երկու տարում էլ օտար լեզվի թեստավորումը կատարվել է կամավորության հիմունքներով, որով և պայմանավորված է համամասնությունը. արդյունքները չեն արտացոլում ՊԴ և վարչական կազմի օտար լեզուների իմացության ամբողջական պատկերը: Առարկայական քայլեր են իրականացվել նաև ուսանողների օտար լեզուների տիրապետման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: 2017թ.-ին ԳԿՄԿ օտար լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ բացվեց Անգլիական ակումբը, որն այնուհետև վերանվանվեց Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության ակումբ:

Ակումբի հիմնական խնդիրներն են հաստատված ծրագրերով անգլերեն լեզվի բարձր որակավորում ունեցող դասախոսների միջոցով սկսնակ և ոչ սկսնակ ուսանողների հիմնական կրթական ծրագրերից դուրս վերոնշյալ բոլոր լեզուներով ուսուցանումը և բարձրագույն կրթություն ունեցող այլ մասնագետների վերապատրաստումը: Նախատեսված դասընթացները փոխլրացնում են օտար լեզուներով դասընթացներին՝ նպաստելով ուսանողների ընդհանուր լեզուների իմացության բարելավմանը: Յուրաքանչյուր դասընթացի ավարտին ուսանողներին տրվում է լեզվական մակարդակը փաստող վկայական ***(տե՛ս հավելված 9.15):***

Բենչմարքինգ իրականացվել է բոլոր այն օտարերկրյա բուհերում, որտեղ գործուղվել է վարչական անձնակազմ՝

- *Տուշայի համալսարան, Իտալիա*
- *Թուլուզի համալսարան, Ֆրանսիա*
- *Կրակովի մանկավարժական համալսարան, Լեհաստան*

Չափորոշիչ 9-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• ԳԿՄԿ տնօրենության միտվածությունը միջազգայնացմանը, համապատասխան քաղաքականության և նպատակային քայլերի առկայություն, • Երիտասարդ աշխատակազմը, որը արագ է արձագանքում բուհի կողմից ներկայացվող նոր պահանջներին, ադապտացվում է փոփոխություններին, • Միջազգայնացման պատասխանատուների ցանցի ստեղծում և լավագույն փորձի փոխանակում, • ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգայնացման ներուժի առկայություն, • ՊԴ/վարչական կազմերի և ուսանողների համար առկա տարբեր փոխանակման ծրագրերի մասնակցության հնարավորություն, • Միջազգային կարողությունների զարգացման ծրագրերի առկայություն, • Շարժունության ծրագրերի մասնակիցների գիտահետազոտական արդյունք՝ համատեղ տպագրված հոդվածների տեսքով, • Օտար լեզուներով դասավանդող ՊԴ կազմի առկայություն, • Համատեղ և կրկնակի դիպլոմի շնորհման ծրագրերի առկայություն, • Մեծաթիվ գործընկերային կապերի առկայությունը հեղինակավոր հաստատությունների և

կառույցների հետ
Թույլ կողմեր
• Օտար լեզուներով ամբողջական կրթական ծրագրերի նկատմամբ պոտենցիալ դիմորդների անբավարար հետաքրքրություն, • Ներգնա ուսանողների բացակայություն, • Ամբիոնների անհամաչափ միջազգայնացում, • Օտարերկրյա դասախոսների պակաս, • Արտաքին կապերի բաժնի փոքր աշխատակազմ
Արտաքին հնարավորություններ
• ԵՄ Erasmus+ և այլ դրամաշնորհային ծրագրերում ներգրավումը, օտարերկրյա բուհերի հետ ակտիվ համագործակցության շարունակականության ապահովում, • Հայաստանում տեղակայված օտարերկրյա դեսպանությունների և միջազգային կառույցների հետ ակտիվ համագործակցություն, • Միջազգային շուկաներում մարքեթինգի իրականացում, համալսարանի կրթական ծառայությունների իրացման համար պոտենցիալ շուկաների հստակեցում, միջազգային ուսանողների ներգրավմանն ուղղված գովազդային արշավների կազմակերպում
Վտանգներ
• Մուտքի/ելքի արտոնագրերի տրամադրման խիստ քաղաքականություն, • Փոխանակման ծրագրերի ֆինանսավորման կրճատում
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Վերլուծել և հասկանալ, թե ինչու ՀՀ-ն գրավիչ չէ ներգնա ուսանողների համար, չնայած ԳԿՄԿ և ԳԱԱ ներկայացմանը գործընկեր հաստատություններում, • Իրականացնել ընդունվող ուսանողների լեզվի իմացության մակարդակի պարտադիր թեստավորում՝ օտար լեզվով դասավանդվող դասընթացների արդյունավետությունն ապահովելու համար, • Զարգացնել համագործակցությունը այն երկրների հետ, որոնք ունեն իրենց դիվանագիտական ներկայացուցչությունը ՀՀ-ում՝ մուտքի/ելքի արտոնագրերի հետ կապված խնդիրներից և լրացուցիչ ծախսերից խուսափելու նպատակով, • Ուսումնասիրել Էրազմուս+ ծրագրի 2021-2027թթ -ի գերակայությունները, որոնք կենտրոնացած են կանաչ գործարքների, թվային վերափոխման, կայուն աճի և աշխատատեղերի, ինչպես նաև կրթության քաղաքականության շրջանակներում արտաքին համագործակցության վրա և ձևավորել հստակ գործողությունների պլան՝ մրցունակությունն ապահովելու նպատակով

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՇԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2019-2023թթ. ՌԾ-ում *(էջ 13-14)* ներկայացված են ՈԱ ներքին համակարգի հավակնությունները, որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերով.

- «Որակի ներքին ապահովման գործընթացների քաղաքականության, թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում,

- բարելավման միջոցառումների իրականացում՝ հիմնված գնահատման արդյունքների վրա,
- շահակիցների հետ բաց երկխոսությունների, նրանց ներգրավվածության ա պահովում,
- նախապատրաստում է ԳԿՄԿ-ի արտաքին գնահատումը,
- կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում և արդիականացում, արդյունքների, վերլուծությունների հրապարակում, շահակիցների ներգրավմամբ ՈԱ կառուցակարգերի հստակեցում և ամբողջականացում,
- ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների արմատավորում»:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում ՈԱ բաժինը, որպես առանձին ստորաբաժանում, բացվել է 2013թ -ին, բայց մինչ այդ էլ բուհում ՈԱ գործառույթներ իրականացվել են, մասնավորապես կրեդիտային համակարգին անցումը սկսել է ներդրվել 2010 թվականից: Իսկ 2013թ -ից սկսած աշխատանքներն ավելի համակարգված բնույթ են կրել:

ԳԿՄԿ-ում ՈԱ գործընթացների հիմքում ընկած են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ՈԱ չափորոշիչներն ու ուղենիշները և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված դրույթները:

Գործընթացները ներառում են՝

- ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում (ծրագրի մշակման և իրականացման արտոնում, ծրագրի ընթացքի մշտադիտարկում, ծրագրի ամփոփիչ գնահատում և վերանայում),
- որակի ներքին ապահովման գործընթացների մշակում, իրականացում և մշտապես բարելավում, ընդունված եվրոպական պահանջներին համահունչ որակի ներքին չափանիշների և չափորոշիչների սահմանում,
- ուսանողների գնահատում (դիագնոստիկ, ընթացիկ և եզրափակիչ գնահատման համակարգ),
- Կենտրոնի բոլոր ստորաբաժանումներում ՈԱ գործընթացների իրականացմանը միտված վարչական աջակցության տրամադրում, համակարգում և վերահսկում,
- ՊԴ համակազմի գործունեության որակի ապահովում (դասախոսների գործունեության արդյունավետության փորձագիտական գնահատում, գնահատում ուսանողների կողմից, վարկանիշավորման և խրախուսման համակարգ),
- Համագործակցություն ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային Կենտրոն» հիմնադրամի հետ,
- ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների և ներքին փորձագետների մասնակցություն,

- Կենտրոնի ինստիտուցիոնալ և/կամ ծրագրային հավատարմագրման, ինքնագնահատման գործընթացի կազմակերպում, հաջորդող գործողությունների պլանավորում և վերահսկում,
- անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների ապահովում, տեղեկատվական համակարգերի առկայություն,
- հանրային տեղեկատվության ապահովում:

2014 թ.-ին մշակվել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԽ կողմից հաստատվել են «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման հայեցակարգը» և «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման քաղաքականությունը»: Այս փաստաթղթերը, ՈԱ սկզբունքները, համակարգի նպատակներն ու խնդիրները, հիմնական ոլորտները, համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործընթացները, որակի շարունակական բարելավման մեխանիզմները և ՈԱ միտված բոլոր կանոնակարգերը, կարգերն ու ընթացակարգերը հավաքական ներկայացված են «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման ձեռնարկ»-ում, որը հրատարակվել է 2014 թվականին: Այստեղ տեղ գտած բազմաթիվ ընթացակարգեր 2015-2020թթ կիրարկման ընթացքում վերանայվել, լրամշակվել և բարելավվել են, այսինքն՝ ՈԱ համակարգն անընդմեջ վերանայվում և կատարելագործվում է՝ դառնալով ավելի ու ավելի արդյունավետ աշխատող համակարգ: Հաշվի առնելով ԳԿՄԿ ամբիոնների տարածվածության աշխարհագրությունը՝ վերջին շրջանում ներդրվել է նաև որակի կառավարման նոր համակարգ՝ որակի ապահովման ամբիոնային պատասխանատուների (ՈԱԱՊ) համակարգը, որը տարեցտարի դառնում է առավել գործուն և աշխատող մեխանիզմ: ՈԱԱՊ-երը իրենց տեղն ունեն նաև ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքում: ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման և կառավարման համակարգի պատասխանատվությունների, իրավասությունների և տեղեկատվության ընթացակարգում էլ ներկայացված են նրանց ընտրման չափանիշները և սկզբունքները, այնտեղ ամրագրված են նաև նրանց պարտականությունները և լիազորությունները: ***Հավելված 2.6-ում*** ներկայացված է ՈԱԱՊ-ների 2021թ -ին թարմացված տվյալները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Համաձայն ԳԿՄԿ առաջին ինքնավերլուծության և ՈԱԱԿ փորձագետների եզրակացության, ապա վերջինիս վրա հիմնված **ԳԿՄԿ բարելավման պլանի՝** Կենտրոնում անհրաժեշտ էր ավելացնել ՈԱ ուղղությամբ աշխատող առկա մարդկային ռեսուրսները կամ առկա ռեսուրսները վերաբաշխել և հստակեցնել ՈԱ կառուցվածքային սխեման: Այս բացը լրացնելու համար Բաժնի աշխատակազմը համալրվել է սոցիոլոգի թափուր հաստիքով ***(տե՛ս հավելված 10.1):*** 2018թ.-ի մարտի 22-ի թիվ 124 որոշմամբ ԳԿՄԿ ԳԽ հաստատմամբ կյանքի է կոչվել ԳԿՄԿ ամբիոններում ՈԱԱՊ-ների ներառման գաղափարը: Վերջիններիս աշխատանքի նկարագիրը ներկայացված է ԳԱԱ ԳԿՄԿ կրթության որակի ապահովման և

կառավարման համակարգի պատասխանատվությունների, իրավասությունների և տեղեկատվության ընթացակարգ-ում, որը ներդրվել է նաև ՈԱԱՊ-ների պաշտոնների անձնագրերում: Փաստացի ստեղծված այս նոր մոդելով առավել արդյունավետորեն է կազմակերպվում ԳԿՄԿ ամբիոնների հետ հաղորդակցումն ու հետադարձ կապը, հնարավոր է լինում արագ և արդյունավետ հաղորդակցում ապահովել ներքին շահակիցների հետ, իսկ սա շատ կարևոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԳԿՄԿ ամբիոններն ունեն տեղակայման լայն աշխարհագրություն: ՈԱԱՊ-ներն աշխատում են անմիջականորեն ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ ՈԱ բաժնի ղեկավարի ու մասնագետի հետ՝ ապահովելով ներքին շահակիցների հետ հետադարձ կապը և վերջիններիս տեղեկացվածությունը և մասնակցությունը Կենտրոնի կառավարման, բարելավման, գնահատման և բարելավման տարատեսակ գործընթացներին:

Բացի այդ, ԳԿՄԿ ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը ձևավորելու նպատակով 2014թ.-ին ստեղծվել է Որակի ապահովման մշտական հանձնաժողովը, որը պարբերական նիստեր է գումարում, որտեղ քննարկվում են բարելավման պլանի կատարման ընթացքը, ՈԱ ներբուհական խնդիրները, վերանայման ենթակա կանոնակարգերը, ընթացակարգերն ու մեխանիզմները և որակի ներքին կառավարման այլ հարցեր: Հանձնաժողովում ընդգրկված են վարչական, դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչներ ***(տե՛ս ԳԿՄԿ ՈԱՄՀ մասին աշխատակարգը, հավելված 10.2):***

Բացի այդ, ըստ անհրաժեշտության՝ ՈԱ գործընթացների իրականացման համար կազմվում են աշխատանքային տարբեր խմբեր, օրինակ՝ բարելավման պլանով նախատեսված գործողությունների իրականացման համար, իսկ հետագայում նաև՝ ինստիտուցիոնալ ինքնավերլուծության գործընթացի իրականացման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության մշակման և տրամադրման համար կազմվել են վերլուծության իրականացման համար պատասխանատու աշխատանքային խմբեր, որոնցում ներգրավված են ԳԿՄԿ ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ամբիոնների վարիչներ, ուսանողներ, ՈԱԱՊ-ներ և այլք:

2013թ.-ից ՈԱ բաժնին հատկացվել է մշտական գործող աշխատասենյակ, որն ապահովված է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականության «4. Կենտրոնի ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմի նկարագիրը» բաժնի 4.4 կետով սահմանվում է, որ. «Յուրաքանչյուր տարվա բյուջեի մեջ առանձին հոդվածով կրթության որակի բարելավման միջոցառումների գծով հատկացումների նախատեսում՝ առնվազն պլանավորված ընդհանուր ծախսերի 2 տոկոսի չափով»: Այդ գումարով են կազմակերպվել տարատեսակ վերապատրաստումներ (օրինակ՝ 2019 թ. «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջամբիոնային կապերի սերտացում և որակի ներբուհական համակարգի զարգացում» թեմայով ամբիոնների վարիչների հետ 3-օրյա սեմինար-վերապատրաստումը Ծաղկաձորում (տե՛ս https://www.isec.am/articles/news/strengthening-the-quality-of-education-and-interconnectivity-in-the-priority-line-of-the-international-center-for-ethical-education.html), 2020

թվականին՝ «Կրթական ծրագրերի և ներքին մոնիթորինգի կազմակերպում» թեմայով 2-օրյա վերապատրաստումը Երևանում (տե՛ս https://www.isec.am/images/voraklink/Verapatrastum.pdf), Կենտրոնի մասնագետների պարբերական մասնակցությունը ՈԱԱԿ-ի տարատեսակ վերապատրաստման դասընթացներին և այլն)։

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ֆինանսական խնդիր ԳԿՄԿ ՈԱ բաժինը չունի՝ պլանավորված գործողություններն իրականացնելու համար։

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ՈԱ գործառույթներում Կենտրոնը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, այն կանոնակարգված է և հաստատված ԳԽ-ի կողմից: Շահակիցների մասնակցությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

- կառավարման և վարչական գործընթացներ
- ուսումնական գործընթացներ
- հետազոտական գործընթացներ
- սոցիալական գործընթացներ:

Ուսանողները և դասախոսները, որպես ներքին շահակիցներ.

- ✓ ընդգրկված են կրթության որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական/դասախոսական ընթացիկ հարցումներին և շրջանավարտների բավարարվածության հարցումներին, ինչպես նաև ֆոկուս խմբային քննարկումներին,
- ✓ ընդգրկված են Կենտրոնի ԳԽ կազմում ***(տե՛ս հավելված 2.4)***, ՈԱՄՀ-ում ***(տե՛ս հավելված 10.3)***,
- ✓ մասնակցում են Կենտրոնի ՈԱ գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություններ) ներկայացուցիչներ,
- ✓ մասնակցում են ինքնավերլուծության գործընթացին՝ համաձայն սահմանված ընթացակարգի:

Արտաքին շահակիցների (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ) դերը և կարծիքը որոշիչ է

- ✓ կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության ժամանակ,
- ✓ շրջանավարտների եզրափակիչ (ամփոփիչ) ատեստավորման հանձնաժողովներում,
- ✓ կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներից, քննարկումներից ստացված տվյալների վերլուծությունների հիման վրա Կենտրոնի կրթության որակի վերանայման և շարունակական բարելավման գործընթացնում:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ արտաքին և ներքին շահառուները լիովին ընդգրկված են Կենտրոնում ընթացող որակի գնահատման գործընթացներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Կենտրոնի ՈԱ գործընթացները կազմված են շարունակական բարելավման սկզբունքով՝

1. **Պլանավորում՝** սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները,
2. **Իրականացում՝** կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները,
3. **Գնահատում՝** ստուգվում, չափվում և գնահատվում են փաստացի ստացված արդյունքները պլանավորված վերջնարդյունքների համեմատությամբ:
4. **Բարելավում՝** մշակվում և հաջորդ տարվա համար պլանավորվում ենլրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և ակնկալվող վերջնարդյունքները գործընթացի հաջորդ փուլում ձեռք բերելու համար:

Այս շղթայի պահպանմամբ ԳԿՄԿ-ում պարբերաբար վերանայվել են ՈԱ ներբուհական խնդիրներն արտացոլող բազմաթիվ կարգեր, ընթակարգեր, մեխանզիմներ և գործիքներ, ըստ անհրաժեշտության ավելացել են նաև նորերը: Այս առումով կարևոր էր հատկապես Covid-19-ի պատճառով ստեղծված արտակարգ դրության պայմաններում կրթության հեռավար փուլին անցնելուն զուգահեռ նախկին գործիքների վերանայումը և նորերի ավելացումը: Ստորև ներկայացվում է վերջին երեք տարիներին ավելացած և վերանայված կարգերը, ընթակարգերը և գործիքները.

2018 թվականին վերանայվել է

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման ընթացակարգը:

2019 թվականին վերանայվել են հետևյալ փաստաթղթերը.

- Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը,
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտների (հայցորդների) կողմից գոհունակության հարցում-գնահատման կանոնակարգը,
- Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում ***(տե՛ս հավելված 10.4):***

2020 թվականին վերանայվել են հետևյալ փաստաթղթերը.

- Կանոնակարգ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների կողմից կրթական ծրագրի հարցում-գնահատման կանոնակարգը,
- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողների կողմից պրակտիկայի հարցում-գնահատման կանոնակարգը,
- Գործատուների կողմից Գիտակրթական միջազգային կենտրոնի շրջանավարտների վերաբերյալ գոհութնակության հարցում-գնահատման կանոնակարգը,

- Ֆոկուս խմբային քննարկում շրջանավարտների հետ *(տե՛ս հավելված 10.5),*
- Ֆոկուս խմբային քննարկում ուսումնառողների հետ *(տե՛ս հավելված 10.6):*

2020 թվականին ավելացել են հետևյալ ընթացակարգերը.

- Ուսանողների կողմից հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված հարցում *(տե՛ս հավելված 10.7),*
- Հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների արդյունավետությունից դասախոսների գոհունակության հարցում *(տե՛ս հավելված 10.8),*
- «Կրթական ծրագրերի և ներքին մոնիթորինգի կազմակերպում» թեմայով վերապատրաստման մասնակիցների գոհունակության գնահատում *(տե՛ս հավելված 10.9),*
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ միջազգային շարժունության ծրագրերի ուսանող մասնակիցների հարցման ընթացակարգը,
- Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասավանդողների բավարարվածության հարցաթերթը,
- Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից ուսանողական բավարարվածության հարցաթերթը:

2020թ -ի դրությամբ գործարկվել են նոր և վերամշակված կարգերը 99%-ով, որոնց հիման վրա կատարված վերլուծությունները ներկայացված են *հավելված 10.10-ում:*

Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի տարեկան հաշվետվություններում մանրամասն ներկայացված են, թե ինչ գործիքներ են ավելացել և վերանայվել տվյալ տարում:

Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինը ՈԱ գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ կատարել է Տուշայի համալսարանի (Իտալիա) և Թուլուզի Պոլ Սաբատիե համալսարանի օրինակներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԳԿՄԿ-ն ինստիտուցիոնալ առաջին հավատարմագրման ժամանակ արդեն իսկ իրականացրել է ինքնավերլուծություն (2014թ.), որը գնահատվել է ՈԱԱԿ գնահատման փորձագիտական խմբի կողմից: ԳԿՄԿ ինքնավերլուծության մեջ և արտաքին փորձագիտական զեկույցում նշված բացթողումների վերացման նպատակով ԳԿՄԿ ՈԱ բաժնի կողմից 2016թ.-ին կազմվել և 17թ.-ին հաստատվել է բարելավման գործողությունների ծրագիր, որի իրականացման մշտադիտարկման նպատակով բոլոր չափանիշների գծով միջնաժամկետ հաշվետվությունը ՈԱԱԿ է ներկայացվել 2018 թվականին: Այստեղ մանրամասն ներկայացված են հաշվետու ժամանակաշրջանում ԳԿՄԿ ստանձնած և իրականացված գործողությունները:

Բացի այդ, արտաքին գնահատման գործընթացներին էապես կարող են նպաստել նաև.

- հաշվետվողականության համակարգի առկայությունը՝ սկսած կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվություններից մինչև տնօրենի հաշվետվությունները, որոնք տեղ են գտնում ԳԿՄԿ կամ ԳԱԱ կայքերում (*ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները տե՛ս հավելված 1.1-ում*): Պետք է նշել, որ նախորդ հավատարմագրումից ի վեր, սա կարևոր և առաջընթաց քայլ է, որը մինչ այդ չէր իրականացվում:
- ԳԿՄԿ-ի թափանցիկ գործունեությունը և տեղեկատվության տարածման արդյունավետ մեխանիզմների կիրառումը (մասնավորապես՝ ԳԿՄԿ պաշտոնական կայքէջում տեղադրված են Կենտրոնի գործունեությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը, պայմանագրերը, ԳԿՄԿ ամբիոնների, դրանց հետազոտման ուղղությունների, դասավանդող անձնակազմի վերաբերյալ հակիրճ տվյալներ, կրթական ծրագրերի և դրանց որակի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն, արտաքին կապերի շնորհիվ իրականացվող բոլոր միջազգային և ներպետական ծրագրերի, դրանց մասնակցության հնարավորությունների, պահանջների վերաբերյալ հստակ տեղեկույթ, ինչպես նաև ԳԿՄԿ իրականացվող ծրագրերի և այլնի վերաբերյալ տարատեսակ հայտարարություններ, իրադարձություններ և նորություններ),
- Կենտրոնի ՈԱ բաժնի կողմից անընդմեջ իրականացվող վերլուծությունները, հետազոտություններն ու գնահատումները, մասնավորապես 2014թ.-ից ի վեր ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների շրջաններում իրականացվող համապարփակ հետազոտություններն ու վերլուծությունները: Ի դեպ, եթե 1-ին հավատարմագրման օրերին ԳԿՄԿ ՈԱ բաժնի կողմից իրականացվում էր շահակիցների շրջանում 4 անուն հետազոտություն (դասավանդման որակի վերաբերյալ ուսանողական հարցում, գործատուների շրջանում հարցումներ, ԳԿՄԿ շրջանավարտների շրջանում՝ ՄԿԾ-ների գնահատում և վերապատրաստումների վերաբերյալ դասախոսների շրջանում իրականացվող հարցումներ, ապա այսօր դրանց թիվը անցել է 15-ից և ներառում է ԳԿՄԿ գործունեության գրեթե բոլոր ոլորտները, ընդ որում՝ հաճախ կառավարման մարմինների կողմից է պահանջ իջեցվում ԳԿՄԿ որևէ գործունեության որակը և արդյունավետությունը հետազոտելու վերաբերյալ, ինչը ակնհայտ առաջընթաց է և նպաստում է որակի կառավարման մոդելի և որակի մշակույթի զարգացմանը ԳԿՄԿ գործունեության բոլոր ոլորտներում:.
- Կենտրոնի հեռավար ուսուցման հարթակում մշտապես իրականացվող մշտադիտարկումների հիման վրա կազմված հաշվետվությունները, որոնք լիարժեք և համակողմանի տեղեկույթ են պարունակում Կենտրոնի մագիստրոսական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքի և դրանց որակի վերաբերյալ: Պետք է նշել, որ այս գործիքը հատկապես մեծապես արժևորվեց ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված ամբողջապես հեռավար ուսուցման մոդելին անցնելու օրերին: Հեռավար հարթակում կազմակերպված ուսումնառության գնահատման համար մշակվեց բազմաբաղադրիչ գործիք, որը թույլ տվեց տարեկան կտրվածքով իրապես գնահատել և հասկանալ, թե որքան արդյունավետ են աշխատել ԳԿՄԿ ամբիոնները հեռավար ձևաչափով:

Վերլուծությունը ցույց տվեց, որ հեռավար հարթակում կազմակերպված դասընթացները հաջողությամբ են անցել, որին նպաստել է հեռավար հարթակի ընձեռնած լայն հնարավորությունները, օրինակ՝ տեսաձայնագրությունների պահպանումը, ֆորումները, առցանց հանձնարարությունները և այլն ***(տե՛ս հավելված 3.8):*** Այս համատեքստում կարևոր էր նաև դասավանդողների կարծիքի ուսումնասիրումը: Վերլուծությունը ցույց տվեց, որ դասավանդողների մեծամասնությունը՝ գրեթե 76%-ը լրիվ կամ որոշ չափով պատրաստ էր դասընթացները հեռավար ձևաչափով անցկացնելուն: Դուրս բերվեցին նաև հեռավար հարթակում կազմակերպվող դասընթացների ժամանակ ի հայտ եկող հիմնական խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում էին տեխնիկական խափանումներին, ուսանողի հետ անմիջական շփման բացակայությանը և այլն: Իսկ առավելությունների մեջ ընդգծվեց ժամանակի արդյունավետ օգտագործումը, դասընթացներն ինտերակտիվ անցկացնելու հնարավորությունը, նոր գործիքների տիրապետելը և այլն ***(տե՛ս հավելված 10.10.9):*** Կարևոր է ընդգծել, որ ՈԱ բաժինը ուսանողների կողմից դասվանդման որակի և արդյունավետության կիսամյակային հարցումների իրականացման գործիքը համավարակի շրջանում ձևափոխել և հարմարեցրել է հեռավար ձևաչափով անցկացվող դասընթացների գնահատմանը: *Հավելված 10.10.6-ում* ներկայացված վերլուծությունը ցույց տվեց, թե ինչպիսի գոհունակություն ունեն հեռավար դասընթացների վերաբերյալ ուսանողները: Վերլուծությունը ցույց տվեց ինչպես ԳԿՄԿ առավելություններն այս ձևաչափում, այնպես էլ վեր հանեց առկա խնդիրները և թերությունները:

Այս հետազոտությունները մեկ անգամ ևս ցուցադրեցին, որ, ի տարբերություն այլ բուհերի, ԳԿՄԿ-ն այս մարտահրավերին առավել պատրաստ էր, և վերլուծության արդյունքները ցույց են տալիս գոհունակության բարձր ցուցանիշներ: Բացի այդ՝ ԳԿՄԿ տնօրենությունը, հասկանալու համար առկա խնդիրները և թերացումները, որոնք հիմնականում պայմանավորված էին դասախոսների կարողություններով և հմտություններով, օգտագործեց վերլուծությունները, դրանց հիման վրա մշակվեցին հաղթահարման կոնկրետ առաջարկներ, պլանավորվեցին առաջիկա վերապատրաստումների բովանդակային հարցերը:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ ԳԿՄԿ ՈԱ ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր ՈԱ արտաքին գնահատման գործընթացների համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Կենտրոնի գործունեության հրապարակայնությունը և ՈԱ ներքին համակարգի թափանցիկությունն ապահովվում է դրա մասին պարբերական տեղեկատվության ներկայացմամբ, օգտագործելով հնարավոր բոլոր ներքին և արտաքին միջոցները, հանդիպումները ուսանողների ու դասախոսական կազմի հետ և հրապարակային

քննարկումներն ու մտքերի փոխանակումները, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերի ու խմբի, լրատվական միջոցների և կայքի օգտագործումը, ԶԼՄ-ները և այլն:

Կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովման մեխանիզմներից է ցանկացած նոր նախաձեռնության նախագծի տեղադրումը Կենտրոնի կայքում և շահակիցների առաջարկությունների ու դիտողությունների հավաքագրումը, քննարկումների հնարավորությունը:

Բացի այդ, որակի ապահովման ներքին համակարգի շրջանակներում նախորդ հավատարմագրումից հետո գործուն մեխանիզմ է ներդրվել, համաձայն որի դասընթացներից գոհունակության հարցումները նախ ուղարկվում են ամբիոնների վարիչներին՝ ի գիտություն, ապա մեկ օր անց՝ նաև յուրաքանչյուր դասախոսին անհատական էլեկտրոնային նամակի միջոցով՝ անհատապես իր արդյունքներին ծանոթանալու համար: Պետք է նշել, որ սա գործող և արդյունավետ մեխանիզմ է, որովհետև հետադարձ կապով հաճախ ստանում ենք հետաքրքիր արձագանքներ դասախոսների կողմից. իսկ նախկինում, երբ ամբիոնների դասախոսական կազմին գնահատումների մասին տեղեկույթը տրամադրելը թողնված էր ամբիոնների վարիչների հայեցողությանը, արձագանքներ էին ստացվում, որ արդյունքների մասին միշտ չէր, որ դասախոսը իրազեկված էր լինում: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ներկայումս այս առումով որակի ապահովման ներքին համակարգն ակնհայտ առաջընթաց է գրանցել:

Բացի այդ, համաձայն բարելավման պլանի՝ առավել հաճախակի են դարձել գործատուների հետ հանդիպումները, ԳԿՄԿ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ վերջիններիս կարծիքի ուսումնասիրումը և գնահատումը: Օրինակ՝ միայն բնապահպանություն և բնօգտագործում կրթական ծրագրի գործատուների շրջանում հետազոտություն է անցկացվել՝ հասկանալու համար տարբեր տարիների ԳԿՄԿ շրջանավարտների մասնագիտական գիտելիքների գնահատումը՝ գործատուի չափորոշիչներով և հաշվի առնելու նրանց առաջարկներն ու կարծիքները ՄԿԾ-ի բարելավման ուղղությամբ: Վերլուծությունը ցույց տվեց, որ, օրինակ, հարցված գործատուների ճնշող մեծամասնությունը՝ 91%-ը, իր աշխատողների մոտ կարևորում է վերլուծական կարողությունների առկայությունը, իսկ 72%-ը՝ համակարգչայի տեխնիկայի և կիրառական ծրագրերի իմացությունը: Դուրս բերվեցին նաև այն առարկայական-ուսումնական ուղղվածությունները, որոնք կարևորում են գործատուները իրենց կազմակերպության համար (օրինակ՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգեր, լանդշաֆտային պլանավորում և այլն): Վերլուծությունը թույլ տվեց նաև դուրս բերել գործատուների կողմից կարևորվող գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք անհրաժեշտ և ցանկալի է, որ ունենան շրջանավարտները: Տվյալ հետազոտության արդյունքները առավել մանրամասն ներկայացված են *հավելված 3.9-ում*:

Ձևավորված մեխանիզմ է դարձել նաև պարբերական հանդիպումները բոլոր կուրսերի ավագների հետ, առկա խնդիրների վերհանումը, դրանց ուղղությամբ բարելավման քայլերի իրականացումը:

Այսպիսով՝ արձանագրենք, որ նախորդ հավատարմագրումից ի վեր ԳԿՄԿ որակի ապահովման ներքին համակարգն անընդհատ զարգանում է, տարածվում, ակնհայտ բարելավում է գրանցվում գործուն մեխանիզմների մշակման և դրանց կիրարկման ուղղությամբ:

Չափորոշիչ 10-ի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր
• Որակի կառավարման և ապահովման գործուն համակարգի և անձնակազմի առկայություն, • ՈԱ քաղաքականության, սկզբունքների և հաստատված ընթացակարգերի առկայություն, • Կենտրոնի ՌԾ-ներում ՈԱ-ին ուղղված նպատակների առկայություն, մշակված գործողությունների, գնահատման ցուցանիշների առկայություն, աշխատանքի բաժանում, • Ակնհայտ և նպատակային աշխատանք՝ Կենտրոնում որակի մշակույթի ձևավորման, ՊԻԳԲ սկզբունքի կիրառման և անընդհատ բարելավման ուղղությամբ, • Գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ձգտում և այդ նպատակով պաշտոնական կայքի ակտիվ կիրառում, • ՈԱ նպատակով տեղեկատվության հավաքագրման տեղեկատվական ներքին համակարգի առկայություն, • Կենտրոնում ՈԱԱՊ-ների առկայություն, • Իրականացվող քանակական և որակական հետազոտությունների արդյունքների մշակման և արձագանքման կառուցակարգ, • ՈԱ գործընթացում ներքին և արտաքին շահակիցների մասնակցություն՝ հանդիպում-քննարկումների, ֆոկուս-խմբային քննարկումների, քանակական հարցումների միջոցով, • Հեռավար կրթության անցնելու փուլում համապատասխան մեխանիզմների, գործիքների վերանայում և արդյունավետ կիրառում, • Կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության պարբերական տրամադրում շահակիցներին, • Կենտրոնի աշխատակիցների մասնակցություն ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներին
Թույլ կողմեր
• Ուսանողների շրջանում ՈԱ գործընթացներին ոչ բավարար մասնակցություն՝ ցածր մոտիվացիայի պատճառով, • ՈԱ բաժնի կողմից ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքներում ստացված կարծիքներից բխող ոչ համարժեք գործողություններ
Հնարավորություններ
• Կառավարության կողմից սահմանված որակի գնահատման չափանիշներ: • Արտասահմանյան բուհերի հետ համագործակցության շարունակական ընդլայնում, լավագույն փորձի ներդրում
Վտանգներ
• ՈԱ մշակույթի ձևավորմանն ուղղված ոչ բավարար պետական ֆինանսական միջոցներ, • Հայաստանյան բուհերի հետ համագործակցության պակաս, • Ֆորսմաժորային իրավիճակներ երկրում
Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները
• Ուսանողների շրջանում կրթության որակի ապահովման գործընթացին մասնակցելու կարևորության գիտակցության ամրապնդում,

- ՈԱ բաժնի կողմից անցկացված հարցումներին հնարավորինս շատ մասնակիցների ընդգրկում և առավելագույն ներկայացուցչության ապահովում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

	ՀԱՎԵԼՎԱԾ 1
1.1	ԳԿՄԿ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները
1.2	Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության վերաբերյալ հարցման տվյալների վերլուծություն
	ՀԱՎԵԼՎԱԾ 2
2.1	ԳԿՄԿ կազմակերպական կառուցվածք
2.2	ԳԿՄԿ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը
2.3	ԳԿՄԿ անձնակազմի պաշտոնի անձնագրերը
2.4	ԳԿՄԿ ԳԽ կազմ
2.5	Հանրային կապերի և կարիերի բաժնի վերլուծություն
2.6	ՈԱԱՊ-ների մասին տվյալներ
2.7	ԳԿՄԿ շրջանավարտների հետ ֆոկուս խմբային քննարկման վերլուծության օրինակ
2.8	ԳԿՄԿ պաշտոնական կայքի վերաբերյալ գոհունակության հարցման տվյալների վերլուծություն
	ՀԱՎԵԼՎԱԾ 3
3.1	Արևելագիտություն ՄԿԾ-տեղեկագիրք
3.2	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ՄԿԾ-տեղեկագիրք
3.3	Բնապահպանություն և բնօգտագործում ՄԿԾ-տեղեկագիրք
3.4	Արևելագիտություն ՄԿԾ բենչմարքինգ
3.5	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ՄԿԾ բենչմարքինգ
3.6	Բնապահպանություն և բնօգտագործում ՄԿԾ բենչմարքինգ
3.7	ՈԱՇ և վերջնարդյունքների համապատասխան աղյուսակը (3 ՄԿԾ-երի օրինակը)
3.7.1	ՄԿԾ-ի վերջնարդյունքների համապատասխանությունը ՈԱՇ-ի բնութագրիչներին ըստ ձևաչափ
3.7.2	ՄԿԾ-ի դասընթացների վերջնարդյունքների համապատասխանությունը ՄԿԾ վերջնարդյունքներին, դասավանդման և գնահատման մեթոդներին
3.8	ՈԱ բաժնի կողմից իրականացված մոնիթորինգի վերլուծությունը
3.9	Բնապահպանություն և բնօգտագործում ամբիոնի համար գործատուների հետազոտություն
3.10	Առարկայական ծրագրի օրինակ (Արևելագիտության ամբիոն)
3.11	Առարկայական ծրագրի օրինակ (Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն)
3.12	Առարկայական ծրագրի օրինակ (Բնապահպանության և բնօգտագործման ամբիոն)
3.13	ՄԿԾ ուսանողների ներհոսք, ՄԿԾ ուսանողների արտահոսք, ՄԿԾ դասավանդողների ներհոսք, ՄԿԾ դասավանդողների արտահոսք
3.14	«Մուդլ» հեռավար ուսուցման հարթակ. դասախոսների և ուսանողների ուղեցույց
3.15	Պրակտիկայի կազմակերպման կարգ
3.15.1	Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտահետազոտական պրակտիկայի ծրագիր
3.15.2	Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտամանկավարժական պրակտիկայի ծրագիր
3.15.3	Գիտահետազոտական պրակտիկայի օրագիր
3.15.4	Գիտամանկավարժական պրակտիկայի օրագիր
3.16	Մագիստրոսական թեզի ղեկավարի կիսամյակային հաշվետվություն թեզի կատարման շրջանակներում գիտահետազոտական բաղադրիչի ապահովման և գնահատման նպատակով (3 ՄԿԾ-երի օրինակը)
3.17	Կրթական ծրագրերի մոնիթորինգի տարեկան հաշվետվությունը/Կատարողականը/-(3 ՄԿԾ-

	երի օրինակը)
3.18	Ուսումնառության արդյունքներ և գնահատման մեթոդներ (3 ՄԿԾ-երի օրինակը)
3.19	Քաղվածք Արևելագիտության ԱՁ N /20 թ. (Պրակտիկաների անցկացման վերաբերյալ)
3.20	Քաղվածք Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ԱՁ N58 /2020 թ. (Պրակտիկաների անցկացման վերաբերյալ)
3.21	Քաղվածք Բնապահպանություն և բնօգտագործում ԱՁ N7 /2020 թ. (Պրակտիկաների անցկացման վերաբերյալ)
3.22	Քաղվածք Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա ԱՁ N34 /2017 թ. (Ամպային տեխնոլոգիաներ առարկայի վերաբերյալ)
	ՀԱՎԵԼՎԱԾ 4
4.1.	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի
4.2.	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսանողների ներհոսք/ արտահոսք, պատճառները
4.3.	Ուսումնառողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցման տվյալների վերլուծություն
4.4.	Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի
4.5.	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ շրջանավարտների զբաղվածության մակարդակը
	ՀԱՎԵԼՎԱԾ 5
5.1	ՊԴ կազմի Գիտահետազոտական աշխատանքների գնահատման կարգ
5.2	Տեղեկանք ՊԴ կազմի մասին
5.3	Քաղվածք ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի N138 նիստի արձանագրությունից
	ՀԱՎԵԼՎԱԾ 6
6.1	Գիտահետազոտական կազմակերպությունների ցանկը, որտեղ իրականացվում են մագիստրոսական ծրագրերը
6.2	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեմա
6.3	ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտահետազոտական գործունեության գծով փոխտնօրենի պաշտոնի անձնագիր
6.4	Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող գործիքակազմի և միջոցների ձեռքբերման ու կիրարկման քաղաքականության ու ընթացակարգերի ներդրումը
6.5	Հետազոտություն և զարգացում Կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ աշխատանքային պլան
6.6	Քաղվածք ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի N139 նիստի արձանագրությունից
6.7	Երիտասարդ գիտնականների գիտաժողով <<Կայուն զարգացման հեռանկարներն ու մարտահրավերները 21-րդ դարում>> վերտառությամբ գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 73 ամյակին
6.8	Հետազոտական գործունեության արդյունքների վրա հիմնված գիտաշխատողների խրախուսման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ
6 8 1	Լրավճարների հաշվարկ
6 8 2	Հրաման լրավճարների վճարման
6.9	Հավաստագրի ձևանմուշներ
6.10	«Սպենսեր» հիմնադրամին ներկայացված դրամաշնորհային հայտ
6.11	Քաղվածք ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի N148 նիստի արձանագրությունից
6 12	ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը
	ՀԱՎԵԼՎԱԾ 7

7.1	Ուսանողների՝ ռեսուրսներով բավարարվածության վերլուծություն
7.2	Դասավանդողների՝ ռեսուրսներով բավարարվածության վերլուծություն
7.3	Նախահաշիվ 2019
7.4	Նախահաշիվ 2020
	ՀԱՎԵԼՎԱԾ 8
	ՀԱՎԵԼՎԱԾ 9
9.1	Շարժունության տեղերի թիվը ըստ համալսարանների և միջազգային գործընկերների ընդհանուր ցանկ
9.2	ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պաշտոնների անձնագրեր
9.3	ԳԿՄԿ ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների ցանկ
9.4	Էրազմուս+ ծրագրի շրջանակներում օտարերկրյա համաղեկավարների հետ տպագրված համատեղ գիտական աշխատությունների ցանկ
9.5	Բուհերի արտաքին կապերի բաժնի աշխատակիցների հանդիպման պրեզենտացիա
9.6	Հավաստագրի ձևանմուշ
9.7	2015-2020թթ կնքված միջազգային և արտաքին համագործակցության պայմանագրերի, հուշագրերի և համաձայնագրերի ցանկ
9.8	Արձանագրություն տնօրենության N1 նիստի/30.08.2018թ./
9.9	Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար
9.10	Քաղվածք ամբիոնների արձանագրությունից
9.11	Քաղվածք ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի N130 նիստի արձանագրությունից
9.12	Ֆոկուս խմբային քննարկման արդյունքերի վերլուծություն
9.13	Օտար լեզվով դասավանդվող դասընթացների ցանկ /պահանջարկի դեպքում/
9.14	Օտար լեզվին տիրապետող դասավանդողների, աշխատակիցների և ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար
9.15	Հավաստագրի ձևանմուշ
	ՀԱՎԵԼՎԱԾ 10
10.1	ԳԿՄԿ ՈԱ բաժնի սոցիոլոգի պաշտոնի անձնագիր
10.2	ԳԿՄԿ ՈԱՄՀ նիստերի արձանագրություններ
10.3	ԳԿՄԿ ՈԱՄՀ կազմ
10.4	Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցում
10.5	ԳԿՄԿ շրջանավարտների հետ Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց
10.6	ԳԿՄԿ ուսումնառողների հետ Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց
10.7	Ուսանողների կողմից հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված հարցում
10.8	Հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների արդյունավետությունից դասախոսների գոհունակության հարցում
10.9	«Կրթական ծրագրերի և ներքին մոնիթորինգի կազմակերպում» թեմայով վերապատրաստման մասնակիցների գոհունակության գնահատում
10.10	ՈԱ բաժնի կողմից 2019-2020թթ.-ին կատարված վերջին վերլուծությունները
10.10.1	ԳԿՄԿ շրջանավարտների կողմից կրթական ծրագրի գնահատմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծություն/2018-2020թթ. Հեռակա 2 տարի/
10.10.2	ԳԿՄԿ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման տվյալների վերլուծություն/առկա 1-ին կուրս/
10.10.3	ԳԿՄԿ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման տվյալների վերլուծություն/հեռակա 1-ին կուրս/

10.10.4	ԳԿՄԿ շրջանավարտների կողմից պրակտիկայի գնահատմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծություն/2018-2020թթ. Առկա 1.5 տարի/
10.10.5	ԳԿՄԿ շրջանավարտների կողմից արտակարգ դրության պայմաններում հեռավար հարթակում կազմակերպված պրակտիկայի գնահատման արդյունքների վերլուծություն/2018-2020թթ. Առկա 2 տարի/
10.10.6	Ուսանողների կողմից հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների որակի և արդյունավետության գնահատմանն ուղղված հարցման տվյալների վերլուծություն
10.10.7	ԳԿՄԿ-ի կողմից մատուցվող կրթական դասընթացների կազմակերպման և իրականացման վերաբերյալ ասպիրանտների գոհունակության գնահատմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծություն
10.10.8	Գործատուների կողմից կրթական ծրագրի շրջանավարտներից գոհունակության գնահատմանն ուղղված հետազոտության արդյունքների վերլուծություն
10.10.9	Հեռավար հարթակում կազմակերպված դասընթացների արդյունավետությունից դասախոսների գոհունակության հարցման տվյալների վերլուծություն
10.10.10	Դասախոսների կողմից կառավարման և վարչարարության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցման տվյալների վերլուծություն
10.10.11	Ֆոկուս խմբային քննարկում բնապահպանություն և բնօգտագործում կրթական ծրագրի շրջանավարտների հետ
10.10.12	Ֆոկուս խմբային քննարկում բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ
10.10.13	«Կրթական ծրագրերի և ներքին մոնիթորինգի կազմակերպում» թեմայով վերապատրաստման մասնակիցների գոհունակության գնահատմանն ուղղված հարցման տվյալների վերլուծություն
10.10.14	ԳԿՄԿ ուսանողների կրթական կարիքների բացահայտմանն ուղղված ուսանողական հարցման տվյալների վերլուծություն
10.10.15	ԳԿՄԿ միջազգային շարժունության ծրագրերի ուսանող մասնակիցների հարցման տվյալների վերլուծություն
10.10.16	Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից ուսանողական բավարարվածության հարցման տվյալների վերլուծություն